Էջմիածին



1965

ՌՆԺԵ
ԻԲ ՏԱՐԻ

Նոյեմբեր — Դեկտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԺԱ-ԺԲ

1965

ՍՏԵՓ-ԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Հայաստանում սովետական կարգերի ճաստատման Բառաստանինգեռող տարեդարձի կապակցությամբ· Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը	3
Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գերագույն սովետի նախագահության նստաշրջանագիրը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գերագույն սովետի պատվոգրով պարգևատրելու մասին	5
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասնհինգ տարեդարձի առթիվ Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահի շնորհավորական հեռագիրը և տրված պատասխանը	6
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասնհինգ տարեդարձի առթիվ կրոնական պետերից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները և տրված պատասխանները	7
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասնհինգ տարեդարձի առթիվ հասարակական և մասավորական գործիչներից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները	12
Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի պատվոգրի պարտեզական հանձնումը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին	16
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Եթովպիայի Կայսր Նորին Վեհափառություն Հայլե Սելասիեի գահակալության հիսունհինգամյակի առթիվ և ստացված պատասխանը	18
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Տասը տարի Լուսավորչի Դաճի վրա	19
Զեկույց Գերագույն Հոգևոր Խորհրդի Վեհափառ Հայրապետի գահակալության տասնհինգ տարեդարձի առթիվ	21
1965 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 8-ը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասնհինգ տարեդարձի հանդիսություններին մասնակցող հրավիրյալների և նյուրերի ցուցակը	30
Հանդիսություններ Մայր Աթոռում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասնհինգ տարեդարձի առթիվ	39
Մեծ եղեռնի հանատակների անյուններ Գեր-Զորից	80
Ռ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ—Մեծ եղեռնի հուշարձանի իմ մտահղացումը	82
ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՈՒԱՀԱՄՅԱՆ—Ի գահակալության տասնամեկի Տեառն Տեառն Վազգենի Առաջնոյ Հայրապետին Ամենայն Հայոց	84
Գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյան	85
Գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյան	86
Գերաշնորհ Տ. Շահե եպիսկոպոս Անեմյան	87
Գերաշնորհ Տ. Զարեհ եպիսկոպոս Ցինչինյան	88
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	89
Հայաստանում սովետական կարգերի ճաստատման Բառաստանինգամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում	91
Մայր Տաճարի երգեցիկ խմբի տասնհինգամյակը	92
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	93
Հանգիստ արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քահանա Տեր-Հարությունյանի	96
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1965 թվականի ընթացքում տպագրված նյութերի	97

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան. 1965 թ.

1

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱՋԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԿԵՂԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՈՒՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքներն ու բարեմաղթությունները Սովետական Հայաստանի 45-րդ տարեդարձի առթիվ:

Մեր վերածնված ու ծաղկած հայրենիքը մեծագույն ուրախությունն ու մխիթարությունն է համայն հայ ժողովրդի համար, ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում:

Թո՛ղ միշտ վորանա ու վայելեսա խաղաղության մեջ Ամենայն Հայոց Մայր Հայրենիքը՝ Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքի մեջ:

Հարգալիր ողջույններով,

ՎԱՂԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի 45-րդ տարեդարձի ուրախ առիթով, հաճեցեք ընդունել Հայ Եկեղեցու և Մեր սրտագին շնորհավորանքներն ու բարի մաղթանքները անձամբ Ձեզ և մեր հայրենի կառավարության անդամներին:

Մաղթում ենք, որ հավետ անսասան մնա ու ծաղկի խաղաղության մեջ մեր Հայրենիքը, Սովետական մեծ Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում և հայ ժողովուրդը փառավոր նվաճումներ արձանագրի իր վերելքի ճանապարհին:

Հարգալիր ողջունիվ,

ՎԱՂԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Կ. ԳԱԼԼԱՋՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի փառապանծ 45-ամյակի առթիվ հղում ենք Ձեզ և խորհրդիդ բոլոր անդամներին Մեր ջերմագին շնորհավորանքները և բարի մաղթանքները Հայ Եկեղեցու և անձամբ Մեր անունից:

Թո՛ղ հարատև վերակառուցվի ու ծաղկի մեր հարապատ Մայր Հայաստանը իր վերելքի ճամբին՝ խաղաղության և բարօրության մեջ:

Սիրով և ողջունիվ,

ԷՋՄԻԱԾԻՆ

ՎԱՋԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՎՍԵՎՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք, խնդրեմ, նախագահության անդամների և անձամբ իմ շնորհակալությունը, Հայաստանում սովետական իշխանության հաստատման 45-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Խորին հարգանքներով,

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի
նախագահության նախագահ

ԵՐԵՎԱՆ

*

Սովետական Հայաստանի 45-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար ընդունեցեք, խնդրեմ, իմ խորին շնորհակալությունը:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ

ԵՐԵՎԱՆ

*

Հաճեցեք ընդունել խորհրդի և անձամբ իմ խորին շնորհակալությունը Սովետական Հայաստանի 45-ամյակի առթիվ հղած Ձեր ջերմագին շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Կ. ԴԱԼԼԱՋՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհուրդ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ-ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՊԱՏՎՈԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂԿՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱԿՏԻՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՊԱՏՎՈԳՐՈՎ։

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի
նախագահության նախագահ

Ա. ԳԱԼՍՏՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի
նախագահության քարտուղար

28 Հոկտեմբերի 1965 թ.
Քաղաք Երևան

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԵՎ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք, խնդրեմ, իմ շնորհավորությունները Ձեզ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու տասնամյա տարեդարձի առթիվ:

Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և հետագա հաջողություններ համընդհանուր խաղաղության ի նպաստ Ձեր շնորհակալ գործունեության մեջ:

ԵՐԵՎԱՆ

ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հարգալից ու ջերմ գոհունակությամբ ընդունեցինք Ձեր շնորհավորանքի հեռագիրը Մեր տասնամյա գործունեության նշման առթիվ:

Իբրև Հայ Եկեղեցու Հայրապետ, պիտի լինենք երջանիկ, շարունակելու Մեր աշխատանքը նվիրված մեր Եկեղեցուն, մեր հավատացյալ ժողովրդին և աշխարհի խաղաղության սրբական դատին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հղում ենք Ձեզ և մեր երկրի հարազատ կառավարության սրտաբուխ մաղթանքներ Ձեր հայրենանվեր, շինարար գործերի նորանոր հաջողությունների համար:

ԷՋՄԻԱԾԻՆ

ՎԱՋԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԷՋՄԻԱԾԻՆ

Տասներորդ տարեդարձը Ձեր ընտրության իբրև Կաթողիկոս Էջմիածնի հարգամեծար Աթոռին, բարեպատեհ առիթ կընծայե հանդիսություններու, որոնց պիտի մասնակցին ներկայացուցիչները բովանդակ հայ մեծ ընտանիքին:

Ձենք ուզեր լռությամբ անցնել այս տարեդարձը, առանց Ձեզի առաքելու Մեր ջերմագին ողջույնները և Մեր լավագույն բարեմաղթությունները: Կբաղձանք նաև այս պարագաներեն օգտվիլ, կրկնելու համար Մեր հիացումը ի տես հայ ժողովուրդին հավատարմության և փարումին հանդեպ քրիստոնեական հավատքին և ի լուր անոր դյուցազնության իր պատմության դժվարին պահերուն: Բազմաթիվ եղան այդ դժվարին պահերը և բազմաթիվ են նահատակները, որոնք այժմ կբարեխոսեն Աստուծո առջև, որպեսզի այդ հավատարմությունը շարունակվի և խորանա հընթացս մեր ներկա աշխարհին նորանոր դժվարություններուն, որոնք նպաստավոր չեն:

Մենք մասնավորապես ուրախ ենք, որ հայ կաթողիկե համայնքին մեծարգո ներկայացուցիչները կմասնակցին այդ տոներուն. վասնզի այս ներկայությունը կենդանի նշան մ'է եղբայրական սիրալիր հարաբերություններու, որոնք կպարգևանան նույն ընտանիքին բաժնված անդամներուն միջև:

Ձերդ Սրբությունը չի տարակուսիր, թե այս նույն զգացումներով է, որ Մենք կգնահատենք ներկայությունը Հայ Եկեղեցվո դեսպանին, Վատիկանի ժողովին, և թե Մենք եռանդագին կբաղձանք, որ իրագործվի փափագը Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի. «Զի եղիցին մի»:

Ձեզի դարձյալ հայտնելով Մեր խորին գնահատանքը և Մեր եղբայրական սերը, կվստահացնենք Ձերդ Սրբությունը, թե Ձեզի միացած ենք աղոթքով, Տիրոջմեն հայցելով Իր առատաձեռն օրհնությունները Ձեր անձին, Ձեր կղերին և Ձեր հավատացյալներուն վրա:

ՊԱՎԼՈՍ Զ ՊԱՊ

ՎԱՏԻԿԱՆ

*

Այս հանդիսավոր և ուրախալի օրը, երբ հնադարյան Ս. Էջմիածինը արժանավայել կերպով պատվում է Ձերդ սիրեցյալ Սրբությանը և նշում Ձեր հայրապետական գահակալության փառավոր տասնամյակը իբրև Հայ Եկեղեցու Պետի, Սենք, Ձեզ հետ միասին, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, մտովին մասնակցելով Հայ Եկեղեցու հավատարիմ զավակների այդ ընդհանուր ցնծությանը, բերում ենք մեր եվ սրտագին մասնակցությունը Ձեր աստվածախնամ ժողովրդի ուրախությանը, ժողովրդի, որը Ձերդ Սրբության ջանքերով, իմաստուն կերպով առաջնորդվում է փրկության ճանապարհով:

Սրտագինս ողջունելով Ձեզ Ձեր Եկեղեցու այդ նշանակալից տարեդարձի առթիվ, բարձրացնում ենք Մեր ջերմագին աղոթքներն առ Աստված, որպեսզի Նա, Հայաստանի Լուսավորիչ Ս. Գրիգորի աղոթքներով, պահի Ձեզ ողջամբ, քաջառողջ, պարգևի Ձեզ արևաշատություն և աստվածային ճշմարտության խոսքը քարոզելու երկարատև տարիներ, ի բարօրություն Ձերդ Սրբության խնամքին հանձնված քրիստոնյա զավակների:

ԱԼԵՔՍԻ
Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

ՄՈՍԿՎԱ

*

Ձեր գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ, հղում ենք Ձեզ սրտագին շնորհավորություններ:

Թո՛ղ մեր երկնային Հայրը լցնի Ձեզ ամեն շնորհներով, որպեսզի կարողանաք պաշտպանել և ղեկավարել Հայաստանյաց Ուղղափառ Եկեղեցին, Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռի հովանու ներքո:

ՄԱՑՔԼ ՌԵՄՔԻ
Արքեպիսկոպոս Քենտրբերիի

ԼՈՆԴՈՆ

*

Ձերդ Սրբության գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ, ջերմապես ներկայացնում ենք Ձեզ սրտագին շնորհավորանքներ անձնապես Մեր, ինչպես և Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու հոգևորականության և հավատացյալ ժողովրդի անունից:

Միշտ հիշում ենք կենդանի կերպով Ձեր գործունեությունը Ռումինիայում որպես առաջնորդ հայոց թեմի, ինչպես և պտղառատ գործակցության մասին մեր եկեղեցիների միջև, որ վերստին թարմացավ մեզ հաճելի Ձեր այցելության առթիվ Ռումինիա այս գարնան:

Ջերմապես աղոթում ենք առ ողորմածն Աստված, որ Ձերդ Սրբության պարգևի հովվապետական երկար տարիներ՝ առողջությամբ և աստվածապարգև ուժերով, որպեսզի առավել չափով հարստացնեք Հայ Եկեղեցու ավետարանական իրագործումները և առավել նպաստեք արդյունավետ կերպով աշխարհի քրիստոնյա եկեղեցիների եղբայրական գործակցության:

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ
Պատրիարք Ռումինիայի

ԲՈՒԽԱՐԵՍՏ

*

Իմ և հանուն Բուլղար Եկեղեցու Ս. Սինոդի, սիրով և խոր հարգանքով ողջունում եմ Ձերդ Սրբությանը, որպես Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսի, Ձեր գահակալության տասնամյակի առթիվ:

Այդ ժամանակաշրջանին Դուք հանդես եկաք որպես Հայ Եկեղեցու նախամեծար Աթոռի արժանավոր Գահակալ, հայտնի և վաստակավոր էկումենիկ գործիչ, բոլոր քրիստոնյա եկեղեցիների մերձեցման նախանձախնդիր, ամբողջ աշխարհի խաղաղության պահպանման ջանադիր:

Մեր աղոթքների մեջ ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և ուժ, ի խնդիր երկար տարիների բավարդյուն ծառայության: Անենագութ Աստուծուն աղոթում ենք եռանդագին, որպեսզի օրհնի Ձեր ջանքերը հանուն հավատի, հանուն Ձեզ վստահված աստվածահաճո հոտի բարեպաշտության և բոլոր արի գործերի հաջողության:

Մնամ սիրով ի Տեր, Ձեզ հավատարիմ

ԿԻՐԻԼ
Պատրիարք Բուլղարիայի

ՍՈՖԻԱ

*

Ձեր գահակալության հանդիսավոր առիթով, հայտնում եմ սրտագին ողջույններիս և հոգեբուխ աղոթքներիս հավաստիքը:

Միշտ հավատարիմ Ձեր եղբայրն ի Քրիստոս՝

ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍԱԵՑՖ
Եպիսկոպոս Արևմտյան Նյու-Յորքի

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

*

Ձեր գահակալության տասներորդ տարեդարձը ուրախ և հաճելի առիթը ընծայեց մեզի, Ձեր ազնիվ հրավերին վրա, Ս. Էջմիածին ուղարկելու մեր ներկայացուցիչը, Հ. Ներսես վարդապետ Տեր-Ներսեսյան, ընդհանուր քարտուղար Մխիթարյան միաբանության, որ անձամբ պիտի բերե համորեն ուխտիս և իմ ջերմագին շնորհավորություններն ու անկեղծ մաղթանքները:

Ուրախություն է մեզի, որ մեր ներկայացուցիչը այս առթիվ պիտի մասնակցի նաև Ս. Էջմիածնի շրջափակին մեջ կառուցված նահատակներու հուշարձանի բացման հանդեսին, և մեր բյուրավոր նահատակներու հիսնամյակին նվիրված Ձեր տոնակատարության պիտի խառնե աղոթքն ու իղձը Մխիթարյան միաբանության:

Տա Աստված Ձեզի, մեր սրբաշնորհ նահատակներուն հզոր բարեխոսությամբ, երկար ու երջանիկ տարիներ, անսպառ կորով ու քաջողջություն, որ ինչպես միշտ, շարունակեք լուսավոր տասնամյակներ ևս անդուլ վաստակիլ ի պայծառություն Եկեղեցվո և հայ ազգիս:

Մեր մաղթանքը կկենդանանա այն սրտեռանդն աղոթքներով, զոր միշտ կմատուցանենք առ Բարձրյալն, Ձեր ազգանվեր ծրագիրներու իրականացման համար:

Խորին մեծարանքով, մնամ Վեհափառ Տերությանդ աղոթակից՝

Հ. ՀՄԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԵՏԻԿՅԱՆ
Ընդհանուր աբբա Մխիթարյան միաբանության

ՀՌՈՄ

*

Մեզ հայտնվել է, որ կիրակի, հոկտեմբերի 3-ին, տոնախմբվելու է Ձեր գահակալության տասներորդ տարեդարձը:

Ինչպես հայտնի է Ձեզ, Եպիսկոպոսական Եկեղեցում, տարիների հետ միասին, աճել և բազմապատկվել է մեր սերն ու հարգանքը դեպի Ձեր մեծ Եկեղեցին: 1960 թվականին անձամբ Ձեր այցելությունը այս երկրին և հատկապես Ֆիլադելֆիային խոր ակնածանք ներշնչեց բոլորիս նաև դեպի Ձերդ Սրբության անձը:

Հաճեցեք ընդունել, Ձեր գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ, մեր շնորհավորությունները և հավաստիացումը, որ նույն օրը մեր պատարագի ընթացքում հատկապես աղոթելու ենք Ձեր առողջության և արևշատության ու Հայ Եկեղեցու գործի հաջողության և պայծառության համար:

Խնդրելով Ձերդ Սրբության օրհնությունները մեր համայնքի և իմ ընտանիքի համար, հարգանքներով ի Քրիստոս,

ՌՈԲԵՐՏ Ս. ՄԱՔԴՈՆԱԼԴ
Ավագերեց Ֆիլադելֆիայի
Ս. Սիմեոն ավետարանական եկեղեցու

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

*

Ձեր գահակալության տասնամյակին առթիվ, մեր Ավետարանական Մկրտչական Եկեղեցվո և իմ անձնական սրտագին շնորհավորություններու հետ, կփութամ հայտնել անկեղծ և ջերմագին մաղթանքներս Ձեզի: Մեր երկնավոր Հայրը բազմաթիվ տասնամյակներ պարգևե Ձեզի և տա հոգևոր առատ օրհնություններ մեր սիրելի ազգին և վերածնող Հայաստանին:

Ապրիլյան եղեռնի հուշարձանի բացման առթիվ ալ կաղոթենք և կմաղթենք, որ արդարություն ըլլա մեր տառապած ազգի իղձերուն:

Հաճեցեք ընդունիլ մեր եղբայրական ջերմագին բարևները Քրիստոսով:

Համբուրելով Ձեր Ս. Աջը,

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԾՅԱՆ
Հովիվ Մարսիլիո Հայ Ավետարանական
Մկրտչական եկեղեցի

ՄԱՐՍԻԼԻԱ

*

Հաճեցեք ընդունիլ մեր լավագույն մաղթանքները և շնորհավորությունները Ձեր գահակալության ուրախ առթիվ: Մենք կաղոթենք Տիրոջ, որ կորացնե Ձեզ՝ ծառայելու Իրեն բազմաթիվ տարիներ ևս, հովվելով հայ ժողովուրդը արդարությամբ և սրբությամբ:

ՊԱՏՎԵԼԻ ՄԱՆՎԵԼ ՀԵԼՎԱԾՅԱՆ
ԵՎ ԿԱՀԻՐԵԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՎՈ ՀԱՄԱՅՆՔ

ԿԱՀԻՐԵ

*

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊ

ՎԱՏԻԿԱՆ

Ձերդ Սրբության 27 հոկտեմբեր 1965 թվակիր գիրը Մեր սիրտը լեցուց քաղցր հուզումներով: Ձեր բարի մաղթանքները Մեր տասնամյա համեստ գործունեության լրումին անփոխարինելի հոգեկան մխիթարություն պատճառեցին մեր Եկեղեցիին և մեր հավատացյալ ժողովուրդին:

Խորապես զգացված ենք մանավանդ, որ վերստին կհիշեք հայ ազգի նահատակությունը հիսուն տարիներ առաջ, ի սեր Քրիստոսի և հանուն ազատության:

Հաճեցեք ընդունիլ Մեր եղբայրական հարգալիր շնորհակալությունը:

Թույլ տվեք նաև Մեր և մեր ժողովուրդի սրտագին գոհունակությունը հայտնել, որ Մայր Աթոռս հանդիսություններուն, այստեղ, Ս. Էջմիածնի կամարներուն տակ, Մեր կողքին աղոթեցին նաև մեր կաթողիկե հայ եղբայրները, ի գլուխ ունենալով Ամենապատիվ Տ. Իգնատիոս-Պետրոս Սրբազան Պատրիարքը:

Թող Աստված օրհնե քրիստոնեական եկեղեցիներու եղբայրությունը և սիրո ու խաղաղության ոգի պարգևե համայն մարդկության:

Թող Աստված Զրդդ Սրբության կորավիգ մնա միշտ և օգնական, որպեսզի Ձեր բոլոր սուրբ իղձերը կյանքի կոչվին, Մեր Տիրոջ և Փրկչի հավիտենական փառքին համար:

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ

ՄՈՍԿՎԱ

Մեր գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ Ձեր ուղարկած շնորհավորանքը մեծապես ուրախացրեց Մեր սիրտը:

Ձեր բարի մաղթանքները մի անգամ ևս վկայում են Ձեր անկեղծ բարեկամության մասին դեպի Հայ Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որի համար հաճեցեք ընդունել Մեր ջերմ շնորհակալությունը:

Այս առթիվ կուզենայինք վստահեցնել Ձեզ, որ Ձեր շնորհալի անձը միշտ ներկա է Մեր մտածումների և Մեր աղոթքների մեջ և այդ ներկայությունը Մեզ համար մեծ հույս է և զորավիգ Մեր գործունեության մեջ:

Թո՛ղ Աստված Ձեզ պահպանի քաջառողջ և խաղաղ, ի փառս Ձեր մեծ Եկեղեցու:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ստորագրությամբ, նույն բովանդակությամբ շնորհակալության գրություններ ուղարկվեցին

Ջենտրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ Նորին Սրբություն Դոկտ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ (Լոնդոն),

Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք
Նորին Սրբություն ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք
Նորին Սրբություն ԿԻՐԻԼԻՆ (Սոֆիա),

Արևմտյան Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու առաջնորդ
ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ Եպիսկոպոսին (Նյու-Յորք),

Ֆիլադելֆիայի Ս. Սիմեոն Ավետարանական Եկեղեցու ավագերեց
ՌՈԲԵՐՏ Ս. ՄԱՔԴՈՆԱԼԴԻՆ (Ֆիլադելֆիա, ԱՄՆ):



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Ձեր գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ:

Անցած տասը տարիների ընթացքում Ձեր ակնիվ ջանքերը ուղղված են եղել Սփյուռքի և հայրենիքի կապերի ամրապնդման, տարագիր հայությունը հայրենիքի շուրջ համախմբելու, ժողովուրդների միջև խաղաղություն պահպանելու աշխատանքին:

Ձեզ ցանկանում ենք քաջառողջություն, անսպառ եռանդ ու կորով Ձեր հայրենանվեր ու ազգօգուտ գործունեության մեջ:

ՀԱՄԱՋԱՍՊՅԱՆ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի
կոմիտեի նախագահ

ԵՐԵՎԱՆ

*

Սրտագինս շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը Ձեր գահակալության երջանիկ և բեղմնավոր տասնամյակի առթիվ, որպես ազնվագույն հայ հայրենասերի, որպես ժողովուրդների միջև խաղաղության և բարեկամության միջազգային շարժման ակտիվ գործչի և որպես բուլղարա-սովետական բարեկամության ամենաջերմ կողմնակցի:

Մաղթում ենք Ձերդ Սրբության քաջառողջություն և կորով Ձեր հետագա բազմամյա գործունեության համար:

Մ. ՋԻՈՒՋԻՈՒԿՈՎ

Բուլղարիայի կրոնական դավանանքների գործերի
կոմիտեի նախագահ

ՍՈՖԻԱ

*

Հայ Եկեղեցու Մայր Աթոռի վրա Ձեր գահակալության տասներորդ տարեդարձի երջանիկ առթիվ, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը իր հավատավոր անդամների կողմից հայտնում է Ձերդ Սրբության իր ջերմագին շնորհավորությունները և սրտագին մաղթանքները, Ձեր առողջության և Ձեր ծրագրերի իրականացման, հայ ժողովրդի հոգևոր բարեկեցության համար:

ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հայկական բարեգործական ընդհանուր միության
կենտրոնական վարչության նախագահ

ՆՅՈՒՅՈՐՔ

*

Հարգալից շնորհավորանքներ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ:

Թող Աստված երկարացնի Ձերդ Սրբության երջանիկ իշխանությունը և առավել պտղառատ դարձնի:

ԱՔԵՐԵԴՈ ՊԵՐՏԻԳԱՆ
Նախագահ Գալատ Կյուլպենկյան հիմնարկության

ԼԻՍԱԲՈՆ

*

Թույլ տվեք շնորհավորել Ձեզ Ձեր գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Ինձ հաճելի է մատնանշել այն մեծ հեղինակությունը, որը Դուք վայելում եք ամբողջ աշխարհի հայ հավատացյալների շրջանում: Ձեր հասարակական-եկեղեցական գործունեությունը մեծապես նպաստում է բարու և բարեկամության հաստատման մարդկանց միջև ու խորին հարգանք առաջացնում Ձեր անձի նկատմամբ:

Մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, երջանիկ հովվապետություն և նոր հաջողություններ:

Խորապես Ձեզ հարգող՝

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

*

Մեծ ուրախությամբ իմացանք, թե ի՛նչպես հանդիսավոր կերպով նշվեց վերջին օրերին Էջմիածնում Ձեր գահակալության տասնամյակը:

Թույլ տվեք միացնել մեր համեստ ձայնը բազմաթիվ շնորհավորանքներին, որ Դուք ստանում եք այս օրերին աշխարհի կանապան անկյուններից:

Մենք ինքներս ականատես ենք եղել այդ երկրներում, թե ի՛նչպես Ձեր մեծ հեղինակությունը, Ձեր ղեկավարության ոգին, լեզուն և մշակությունը վարգացնում և ամրացնում են սփռված հայ ժողովրդի մեջ սերը դեպի Մայր Հայրենիքը, դեպի Խորհրդային Հայաստան:

Արտանց կցանկանանք Ձեզ քաջառողջություն, երկար տարիներ, ամենայն հաջողություններ Ձեր գործունեության մեջ, ի փառս մեր ժողովրդի:

Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀԱՄԱՔԱՍՊ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

*

Մեզ համար դեռ թարմ են Ձերդ Սրբության այս երկրին այցելության քաղցր հիշատակները:

Ես անկեղծորեն և խորապես զգացված եմ այն սիրուն և խանդաղատանքին համար, որոնք Ձերդ Սրբությունը արտահայտեց ինձ այն գեղեցիկ հուշանվերով, որ Ձերդ Սրբությունը ուղարկեց Ադդիս-Աբեբայից, Հայր Ք. Փիլիպոսի միջոցով:

Վերջերս ես եղա Եթովպիայում, որպես Հնդկաստանի կառավարության նախագահին ուղեկցող մինիստր: Այդ հանգամանքով այցելեցի նաև Հարավսլավիա, Չեխոսլովակիա և Ռումինիա;

Հուրախություն Ձերդ Սրբության հաղորդում եմ, որ շարունակում եմ կապ պահպանել Հնդկաստանի հայ համայնքի հետ: Նոյին գերաշնորհություն Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի հյուրը լինելու առիթը ունեցա, երբ Կալկաթայում էի: Այցելեցի նաև Բոմբեյի հայ եկեղեցու հովվին, երբ այնտեղ էի վերջերս:

Երկու վայրերում ևս հանդիպեցի հայ համայնքի գլխավոր անդամներին:

Այս նամակիս շարժառիթն է Ձեր Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք ընտրության տասներորդ տարեդարձը: Թույլ տվեք Ձեզ հաղորդել իմ հարգալիր բարեմաղթությունները և աղոթել մեր Տիրոջ, որ Ձերդ Սրբության վրա անպակաս անի Իր օրհնության շնորհները, ծառայելու առհասարակ մարդկության և հատկապես առաջնորդելու Ձերդ Սրբության խնամքին հանձնված Քրիստոսի հոտը:

Խնդրելով Ձերդ Սրբության օրհնությունները ինձ և իմ ընտանիքի համար, Ձերդ Սրբության հոգևոր որդին ի Տերն մեր Քրիստոս,

Ա. Մ. ԹՈՎՄԱՍ

ՆՈՐ-ԴԵԼՀԻ Հնդկաստանի պաշտպանության արդյունաբերության մինիստր

*

Ձերդ Ս. Օծության բարեբաստիկ գահակալության տասնամյակի առթիվ, ներկայիս գալիս ենք Ձերդ Վեհափառության ներկայացնելու Թեհրանի էջմիածնական հայության որդիական հավատարմության ջերմ զգացմունքների հավաստիքը:

Խնդրում ենք, որ հաճիք մեր ուղարկած չնչին նվերը ընդունել որպես հիշատակ այդ օրհնաբեր օրվան և որպես խորհրդանիշ ու առհավատչյա Մայր Աթոռիդ հանդեպ մեր ունեցած սիրո, նվիրման և ակնածության:

Այսօր համայն հայրենասեր ու հայրենանվեր հայությունը հպարտ է իր աստվածընտիր Հայրապետով, որին մաղթում է արևշատություն և կատարյալ հաջողություն Հայաստանյայց Եկեղեցու վերակարգնումի և բարեկարգման համար ի սպաս դրած Իր աստվածահաճո բոլոր ծրագրերի:

Ենորհապարդ Տե՛ր, վստահ ենք, որ Հայաստանյայց Եկեղեցու վրա կուտակված արհեստական ժամանակավոր ամպերը մի օր պիտի ցրվեն և իրանահայությունը վերստին երջանկությունը կունենա ստանալու Միանաէջ Սեղանի աստվածառաք պատգամները և հաղորդվելու նրա անիմանալի խորհրդով և իմացությամբ, որովհետև, ինչպես ասել է իրանահայ երանելի պատմիչը, Առաքել Դավրիժեցին, «Ի վերայ էջմիածնի և Ս. Աջոյն ամենայն ազգս Հայոց կապեալ կան»:

Որդիական խորին ու անկեղծ ակնածանքով, ի դիմաց Թեհրանի էջմիածնական հայության՝

ԹԵՀՐԱՆ (Ստորագրություններ)

*

Հ. Բ. Ը. Միության Մելքոնյան կրթական հաստատության պատվարժան հոգաբարձությունը, տնօրենությունը, ուսուցչական կազմն ու համայն աշակերտությունը, խոր հրճվանքով ու արդար հպարտությամբ, կողջունեն Ձեր գահակալության տասնամյակը: Այս բարեբաստիկ առիթով, կշնորհավորենք Ձեզ ջերմապես և սրտագին կմաղթենք, որ ամենաբարին Աստված պարգևե Ձեզի երկար և երջանիկ կյանք՝ հոգուտ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո և համայն հայության:

Վեհա՛փառ Տեր, գիտենք, թե Ձեր գահակալության այդ տասը տարիները Ձեզի ու Ձեր հոտին հարապատ ու հավատարիմ բոլոր զավակներուն համար ալ եղան որքան ցնծության, նույնքան ալ ցավի շրջաններ: Ձեր ակնիվ հոգին ուրախացավ, երբ կրցավ ի կատար ածել հանրօգուտ ու ազգապարծան ծրագիրներ, ինչպես երբ վերանորոգեց ու պայծառացուց Մայր Տաճարն ու Վեհարանը, աճեցուց ու աշխուժացուց Հոգևոր Ճեմարանը, բարելավեց ու ճոխացուց պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը, արդիականացուց տպարանն ու նոր թափ տվավ անոր, վերականգնեց Գայանեի, Հռիփսիմեի, Օշականի և այլ սրբավայրերու եկեղեցիները, կազմակերպեց և կենդանացուց խորհրդային սահմաններեն ներս ու դուրս գտնվող էջմիածնապատ-

կան թեմերը, հաճախակի օրհնաբեր այցելություններով մխիթարեց ու նեղշնչեց ի սփյուռս աշխարհի ցրված Իր հոգևոր հոտը: Բայց Ձեր բարի հոգին տրտմեցավ խորապես, երբ դժվար եղավ պահել Հայ Եկեղեցվո դարավոր միությունն ու միասնականությունը:

Վեհափա՛ռ Տեր, հանձին Ձեզ, մենք կողջունենք ու կշնորհավորենք սրբակրոն մարդը, առաքելատիպ առաջնորդը և անձնդիր Հովվապետը: Նախախնամական կարգադրությամբ մըն էր, կարծես, որ ասկե տասը տարի առաջ, Ձեզի վիճակվեցավ Էջմիանի Մայր Աթոռի գահակալությունը, որպեսզի սկսիք վերաշինության ու վերակենդանության սրբազան գործին, ի հայրենիս թե ի սփյուռս աշխարհի: Գահակալության Ձեր այս տասնամյակին առիթով, որ խոր խնդությամբ ու մեծ շուքով կտոնախմբվի հիմա, Էջմիածնի Մայր Տաճարին ու Վեհարանին սրբազան կամարներուն տակ, բարեհաճեցեք ընդունիլ, Վեհափառ Տեր, մեր սրտագին շնորհավորություններն ու անկեղծ մաղթանքները:

Աստված միշտ անսասան թող պահե Էջմիածնի Մայր Աթոռը իր Գահակալով, միաբանությամբ և համայն հավատացյալ հոտով, հայրենիքին պարգևե բարօր ու բարգավաճ տարիներ և ամբողջ աշխարհին ալ շնորհե իր խաղաղությունը:

Մատչելով ի համբույր Ձեր Ս. Աջույն, մնամ որդիական խորին ակնածանք,

Ձերդ՝

Ա. ՊԵՏՅԱՆ

Տնօրեն Մելքոնյան կրթական հաստատության

ՆԻԿՈՍԻԱ

*

Ձերդ Ս. Օծության տասնամյա տոնակատարությունը, որ տեղի ունեցավ Ս. Էջմիածնի գմբեթներուն տակ, հրճվեցուց Ձեր հարապատներուն հոգիները:

Արդարև, Վեհափա՛ռ Տեր, նույն օրը, սուրբ պատարագի պահուն, մատռանս մեջ, հոգիով վերացած ու կրկնակի խանդավառված մտքով Ձեզ հետ էինք:

Հետ սուրբ պատարագի, զոր մատույց պատրիարքական փոխանորդ Տ. Հարություն քահանա, փառաբանական աղոթք կատարվեցավ Ձերդ Վեհափառության թանկագին կենաց արևշատության և հայրապետական Ս. Աթոռուն անսասանության համար:

Իցի՛վ Տերը հաճի լսել մեր ձայները, մեծին ու անմեղ փոքրին, և շնորհե Ձերդ Վեհափառության երկար, քաջառողջ կյանք ու անվիշտ օրեր:

Ուրախ այս առթիվ, կփութամ ի սրտե շնորհավորել Ձերդ Վեհափառությունը սրտիս ամենեն անկեղծ իղձերով ու մաղթանքներով, որոնց կձայնակցին ուխտակից որբասեր քույրերս, հաստատությանս նորընտիր խնամակալությունը, ուսուցչական կազմը և Ձեր հոգևոր հարյուրյակ մը անմեղ զավակները:

Մատչելով Ձերդ Վեհափառության օծյալ Ս. Աջույն, կմնամ ամենախորին պատկառանք,

ՍՏԱՄԲՈՒԼ

ՄԱՐԻԱՄ ԱՎԱԳ ՍԱՐԿԱՎԱԳ ՋՅՈՍԵՅԱՆ

*

Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձի բարեբաստիկ առթիվ Մայր Աթոռում ստացվել են նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և գրություններ բարձրաստիճան հոգևորականներից, թեմերից, թեմական կազմակերպություններից, ազգային-եկեղեցական մարմիններից, հայրենակցական, մշակութային միություններից, մամուլի ներկայացուցիչներից և անհատ ազգայիններից:

Վեհափառ Հայրապետը խոր գոհունակությամբ Իր շնորհակալական խոսքն է հղել բոլորին, սրտաբուխ բարի մաղթանքներով և օրհնությամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՊԱՏՎՈԳՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Դեկտեմբերի 2-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, հանդիսավոր իրադրության մեջ, նախագահական պալատում, Հայաստանի Հանրապետության Գերագույն սովետի պատվոգիրը հանձնեց Վեհափառ Հայրապետին, հանուն խաղաղության մղվող պայքարում ակտիվ գործունեության համար։

Հանդիսության ներկա էին Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության տեղակալներ Հ. Մարգարյանը, Վ. Նալբանդյանը, Ռ. Վելիբեկովը, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, տեղակալ Ս. Հովհաննիսյանը, խորհրդի անդամ Բ. Առաքելյանը, Սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Հանրապետության խաղաղության պաշտպանության կոմիտեի նախագահ Ն. Զարյանը և ուրիշներ։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ Միքայել Մազմանյանը, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Ներսես ծայրագույն վարդապետ Պողոսյանը, գավազանակիր Արսեն վարդապետ Բերբերյանը, դիվանապետ Հայկ Առաքելյանը և «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Արթուն Հատիտյանը։

Հանդիսության ընթացքում հոտնկայս ընթերցվեց Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության հոկտեմբեր 28 թվակիր հրամանագիրը Ամենայն Հայոց Հայրապետին պատվոգրով պարգևատրելու մասին։

Այնուհետև Հանրապետության մեծարգո նախագահ Ն. Հարությունյանը, խանդավառ մթնոլորտում, հանձնելով պատվոգիրը Վեհափառ Հայրապետին, ասաց.

«Թույլ տվեք Սովետական Հայաստանի Գերագույն սովետի նախագահության և մեր Հանրապետության կառավարության անունից ի սրտե ու ջերմորեն շնորհավորել Ձեզ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետի պատվոգրով պարգևատրվելու առթիվ։

Մեր Հանրապետության այս բարձր պարգևը հանձնելուց հետո, ես կկամենայի մաղթել Ձեզ քաջառողջություն, անսպառ եռանդ ու հոգեկան կորով՝ խաղաղության պահպանման Ձեր արդասավոր ու հայրենանվեր գործունեության համար։

Ձեր այդ բեղմնավոր գործունեությունն արժանավայել գնահատվեց, որի լավագույն վկայությունը խաղաղության համաշխարհային խորհրդի կողմից Ձեզ շնորհված մեդալն է։

Եվ այսօր, հանձնելով Ձեզ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետի պատվոգիրը, ես կկամենայի այստեղ նշել, որ հայ ժողովուրդը թեև միշտ ունեցել է իր կյանքի գերագույն խորհուրդը, բայց դարեր շարունակ չի ունեցել պետական Գերագույն խորհուրդ, նա ունեցել է զարգացած մշակույթ ու գիտություն, բայց չի ունեցել գիտությունների ակադեմիա, նա եղել է միշտ ստեղծարար ու խաղաղասեր մի ժողովուրդ, բայց երբեք չի ունեցել խաղաղ ու ապահով կյանք։

Եվ այսօր նա ունի այդ ամենը։ Նա ունի, որովհետև հայ ժողովրդի ազգային վերածնունդը, որի փառապանծ 45-րդ տարեգար-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ԵՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

NASIONAL
UNIVERSITEIT
VAN PRETORIA

ձը մենք նշեցինք օրերս, նրա բոլոր հաղթանակներն ու հաջողությունները արդյունք են կոմունիստական մեծագործ կուսակցության լենինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման, մեր ժողովրդի հերոսական աշխատանքի և ստեղծագործական խիզախումների, սովետական մեր մեծ հայրենիքի բոլոր եղբայրական ժողովուրդների անսասան բարեկամության ու սերտ համագործակցության։

Եվ ժողովուրդների այդ անխախտելի միասնության ու հզորության, մեր պետության խաղաղասիրական քաղաքականության մեջ է հայ ժողովրդի հարատևության և բարգավաճման մեծագույն երաշխիքը։

Թույլ տվեք կրկին անգամ սրտագին ու ջերմորեն ողջունել և ցանկալ Ձեզ նորանոր հաջողություններ խաղաղության պաշտպանության Ձեր ազնիվ ու մարդասիրական գործունեության մեջ, հանուն մեր ժողովրդի բարգավաճման ու ծաղկման։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ընդունելով կառավարական բարձր պարգևը, ասաց.

«Մեծարգո և շատ սիրելի նախագահ մեր.

Հայոց Հայրապետի սրտի համար անհուն մխիթարություն է և մեծ պատիվ, ա՛յս հարկի տակ և այսքան ջերմ մթնոլորտի մեջ, անձամբ Ձեր ձեռամբ ստանալ բարձր գնահատանքի պաշտոնական գիրը մեր հայրենի հարազատ կառավարության։

Հաճեցեք ընդունել Մեր հարգալիր շնորհակալությունը։

Պատիվը, որ կընծայվի Մեզ, քաղցրորեն առավել կպարտավորեցնի Մեզ և Մեր բոլոր գործակիցներին, նոր եռանդով ու լավատեսությամբ շարունակելու մեր աշխատանքը, ծառայելու համար Հայաստանյայց Եկեղեցուն, հայ ժողովրդին ու հայրենիքին և աշխարհի խաղաղության դատին։

Արևոտ ու խաղաղ երկնքի տակ, թո՛ղ ապրի ազատ, թո՛ղ աճի հարատև և միշտ առաջ ընթանա մտքի լույսով ու բարի ձեռքերով կառուցող ժողովուրդը մեր, խորհրդային մեծ եղբայրության հզոր ու ապահով հովանու ներքո։

Պատմական ու անմահ Ս. Էջմիածնից և Մեր սրտից, մեր հայրենի կառավարության և Ձեզ, թանկագի՛ն նախագահ, ամենաջերմ մաղթանքներ, հարգանք և օրհնություն։

Այնուհետև Հանրապետության պր. նախագահի, Վեհափառ Հայրապետի և բոլոր ներկաների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց մտերմիկ մթնոլորտում։

Ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Իր շքախմբի անդամների հետ Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ պր. Ն. Հարությունյանից, հանդիսության ներկա պաշտոնական անձանձից, մի անգամ ևս սրտանց շնորհակալություն հայտնելով բարձր պարգևի համար և վերադառնում Մայր Աթոռ։

ՍՍՌ-ԱԱ





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՍՐ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ ԱՌԱՋԻՆԻՆ

ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ

Հաճեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները Ձերդ Վեհափառության բարեբաստիկ գահակալության 35-րդ տարեդարձի առթիվ:

Աղոթում ենք առ Աստված Ձեր քաջառողջության և արևշատության համար, ի բարօրություն Եթովպիայի ազնիվ ժողովրդի և ի փառս Ձեր հայրենիքի:

Մենք ջերմապես հիշում ենք Ձեր չքնաղ երկիրը, նրա ազնիվ և աստվածասեր ժողովրդին և Ձերդ Կայսերական Վեհափառության անխառն սիրո արտահայտությունը Հայ Եկեղեցու հանդեպ:

Մնամք սիրով և օրհնությամբ՝

ԷՋՄԻԱԾԻՆ, Նոյ. 2.

ՎԱՂԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՂԳԵՆ Ա,
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մեծ հաճույքով ստացանք Ձերդ Սրբության ուղերձը Մեր գահակալության տարեդարձի առթիվ և Մենք անկեղծորեն շնորհակալ ենք Ձեզ Ձեր աղոթքի և բարի զգացումների համար:

ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ
ԿԱՅՍՐ ԵԹՈՎՊԻԱՅԻ

ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏԱՍԸ ՏԱՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԳԱՀԻ ՎՐԱ

Մայր Աթոռում հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 9-ը, հանդիսավոր իրադրության մեջ և վեհ մթնոլորտում, նշվեց Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության տասնամյակը:

Պատմական ու հիշարժան օրեր հանդիսացան այդ օրերը մեր ազգային-եկեղեցական ներկա տարեգրության մեջ և խանդավառ մի հանգրվան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Նրա Գահակալի եկեղեցաշեն և հայրենանվեր տասնամյա գործունեության ճանապարհի վրա:

1955 թվականի հոկտեմբերի 2-ին, Լուսավորչի պատմական Աթոռի գահակալության էր կոչվում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ բարձրապատիվ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը: Այս արժանավոր ընտրությամբ, մի նոր շրջանի առավոտն էր բացվում Մայր Աթոռի և ընդհանրապես Հայ Եկեղեցու համար:

Այդ ընտրությունից անցել են տասը տարիներ, որոնց ընթացքում կատարված գործերը ցույց են տվել, որ հանձին Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի, մեր Եկեղեցին ունեցավ իր գոհաբերվող և շինարար հայրապետներից մեկին, որն Իր վրա է կրել հայրապետական ծանր լուծը՝ կոչման և պարտքի խորին գիտակցությամբ դեպի Եկեղեցին, ազգն ու հայրենիքը:

Վեհափառ Հայրապետի գահակալության տասը տարիները եղան իրապես աշխատանքի և իրագործումների ատոք տարիներ:

Հոկտեմբերի 31-ին, Մայր Տաճարում, Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքն իր քարոզում նշում էր.

«Լուսավորչի Գահին վրա Իր տասը տարիներու ծառայությունը կոչումներու ամենեն ազնվագույններեն մեկն է, շնորհիվ Իր անբասիր նկարագրի, համոզման ծանրության, արդյունաշատ գործունեության, իմացական շնորհներու, ինչպես նաև Իր անձին ներշնչած քաղցր պատկառանքին, բովանդակ հայ ժողովուրդի գորովի և մտածումներու կեդրոնը ըռած են կինքը»:

Գահակալության տասնամյակի առթիվ Մայր Աթոռում կատարվեցին հանդիսություններ, որոնց ներկա էին Սփյուռքից և ներքին թեմերից ավելի քան 150 հրավիրյալներ, հյուրեր, քույր եկեղեցիների հոգևոր պետեր, եկեղեցական պատգամավորներ, թեմական առաջնորդներ, ազգային-եկեղեցական մարմինների և մամուլի ներկայացուցիչներ, որոնց սրտերում և հիշողության մեջ դրոշմված կմնան հանդիսությանց տպավորությունները:

Գոհունակությամբ պետք է արձանագրել, որ Հայոց Հայրապետի գահակալության և գործունեության տասնամյակի հանդիսությանց առթիվ, ոչ միայն քույր եկեղեցիներ պաշտոնապես իրենց խնդակցությունն ու մասնակցությունը բերեցին Հայ Եկեղեցու ուրախությանը, գնահատելով Նորին Ս. Օծության տարած աշխատանքները հանուն Քրիստոսի սիրուն՝ եկեղեցիների մերձեցման, համագործակցության և աշխարհի խաղաղության, այլ նաև մեր եկեղեցական պատմության մեջ առաջին անգամ, հայ կաթողիկե և հայ ավետարանական համայնքների հոգևոր պետերի ներկայությանը, եկեղեցական և ազգային եղբայրության և համերաշխության բարի սերմերը ցանվեցին «մրրկաւ պատուած» եղբայրների միջև, Ս. Էջմիածնի օրհնության ներքո, հայրենի հողի վրա:

«Ձեր տասնամյա գահակալության գործունեությունը մեզի հայտնեց Ձեր անձին մեջ իրական, բարձր մշակ մը, որ Իր կյանքը նվիրած է

Աստուծո և հայրենիքին: ... Այդ ամեն կառուցումները ուրիշ նպատակ չեն ունեցած, եթե ոչ ծառայել հայ սիրելի անհատին, ծառայել մեր հայ սիրելի պետության, որուն՝ ինձի առիթը կտրվի այս հանդիսավոր պահուն իմ խորին հարգանքներս մատուցանելու և մաղթելու, որ այս պետությունը վարգանա, զորանա Աստուծո օգնությամբ: ... Իսկ մենք Ձեր ձեռքը բռնած, կամ ավելի ևս մեր տկար ձեռքը Ձեր զորավոր ձեռքին մեջ դրած, պիտի ջանանք Ձեր այս բաղձանքները, Ձեր այս աղոթքները իրագործել մեր կարողության սահմանին մեջ»,— հաստատում էր հանդիսությանց ժամանակ Հայ-Կաթողիկե Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Իգնատիոս-Պետրոս Պաթանյանը:

«Էջմիածնի Աթոռը անխտրաբար իր հոգևոր և հայրապետական շունչը ամեն կողմ տարածած է՝ Մայր Հայրենիքեն մինչև Սփյուռքի հեռավոր ծայրերը: Ջանպանություն դրած չէ Վեհափառը եկեղեցիներու միջև, Ան Իր հոգևոր պատգամը տված է հայ ավետարանական բեմեն, ինչպես պիտի տար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո բեմեն»,— վկայում էր հանդիսությանց ներկա, Միջին Արևելքի Հայ ավետարանական համայնքների միության նախագահ, վերապատվելի Հովհաննես Ահարոնյանը:

Հայ Եկեղեցու պատմական առաքելություններից մեկն է եղել հայ ժողովրդի հոգևոր, ազգային միասնության պահպանումը:

Նույն սկզբունքով ու ոգով ներշնչված, աշխատել են մեր նվիրապետական Աթոռների գահակալները և առաջնորդել իրենց խնամքին և իրավասության հանձնված հայ հավատացյալներին:

Մեր եկեղեցական ողջ պատմության ընթացքում չկա և ոչ մի հոգևորական դեմք, որը ջատագովը և պաշտպանը եղած չլինի եկեղեցական միության և ազգային միասնության:

Գուցե մեր պատմության մեջ քիչ անգամներ հայ ժողովուրդը այսքան միասնական է եղել, ինչպես մեր օրերին, ամուր կանգնած իր հավատի և ավանդությունների պատվանդանի վրա, բարձր ու հպարտ բռնած իր ձեռքերում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պանծալի դրոշը, պատրաստ կուրծք տալու բոլոր դժվարություններին:

Փոխվել ենք աշխարհով մեկ, բայց միացած ենք Ս. Էջմիածնի խորհրդով և օրհնությամբ:

Ահա այս է այն փրկարար ոգին, որը ցույց են տվել մեկ մեր լուսաբնակ նախնիքները:

Այսօր, ավելի քան երբևէ, կենսունակ, պայծառ է հավերժական Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր կավակների սիրույն և պաշտամունքին մեջ, որոնք իրենց նպատակը և հոգին սնեցել են դեպի Էջմիածնի Կաթողիկեի խորհուրդը:

«Էջմիածին քաղցրիկ անուն, շտեմարան շնորհաց, կի դու ես մայր գորովագութ... Բերկրութիւն մօրն՝ է որդւովք յիրաւի» (Սիմեոն Երևանցի):

Արդարև, ավելի քան մխիթարական, ոգեշնչող ու սրտառուչ է արձանագրել բովանդակ հայ ժողովրդի անվերապահ հավատարմությունը դեպի Լուսավորչի գերագահ Աթոռը և նրա Լուսարար Աթոռակալը, որն Իր մաքուր և սուրբ ձեռքերում է պահում Հայ Եկեղեցու բարձրագույն ղեկավարությունը և մեր ազգային-եկեղեցական միասնությունը:

Հայ հոգիների եղբայրացում Ս. Էջմիածնի լույսի և օրհնության ներքո, վերածնված Մայր Հողի վեմ կգացման մեջ:

Ահա՛ փրկության ճանապարհը, հայ հոգին ամբողջ ու անաղարտ պահելու համար Սփյուռքում, ձուլման հլոր հորձանքների դեմ:

Այս փրկարար ոգին է պետք մեկ այսօր, որպես Եկեղեցի և ժողովուրդ: Համահայկական եղբայրության, միության, սիրո այդ ոգին միայն կարող է առողջ և կենդանի պահել հայ հոգին Սփյուռքի բոլոր հորիզոնների տակ:

Հայ ժողովուրդը այսօր, իր լայն զանգվածներով, թե՛ հայրենի հողի և թե՛ Սփյուռքի բոլոր տարածությունների վրա, այս առողջ և սրտառուչ հոգեբանության տեր է:

Ապացույցը՝ այն ցնծագին ոգևորությունը, ազգային հպարտությունը, որով դիմավորվեց Լուսավորչի Աթոռի Գահակալի գործունեության տասնամյա տոնախմբությունը տեղի տեղ:

Մայր Աթոռը, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, Ս. Էջմիածնի աստվածապարգև շնորհներով զորացած, մեր ժողովրդի հավատի և տեսիլների կենդանի ուժերով, կշարունակի մեկ և անբաժան պահել Հայ Եկեղեցին:

Անցնող տասնամյակը լուսավոր ու խոստումնալից մի հանգրվան է Հայոց Հայրապետի գործունեության ճանապարհի վրա:

Հայ ժողովրդի հարգանքի և երախտագիտության առարկա է դառնում տասը տարիների վրա պատարագված Հայոց Հայրապետի լուսավոր կյանքը, որը ճշմարտապես եղավ պայծառ հավատի, անդուլ աշխատանքի և իրագործումների մի շինարար շրջան:

Բովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղթանքն է, որ Լուսավորչի Աթոռը հավերժորեն պայծառ և կանգուն մնա և Հայոց Հայրապետի կյանքի օրերը լինեն երկար, արևոտ, նոր իրագործումներով գեղեցկացած և պայծառացած:

«Թագաւոր երկնաւոր, զԵկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան»:

ԶԵԿՈՒՅՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

(Կարդացված 1965 թվականի Նոյեմբերի 1-ին, Վեհարանում, հանդիսավոր նիստի ժամանակ):

1955 թվականի սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը, սեպտեմբերի 30-ի իր երկրորդ նիստում, խանդավառ մթնոլորտում, արտահայտելով Հայրենի Երկրի և Սփյուռքի մեր ժողովրդի ցանկությունները, Ամենայն Հայոց Հայրապետ ընտրեց Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ և Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ բարձրաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանին:

Նորընտիր Հայրապետը, Տ. Տ. Վազգեն Ա, Իր ոգեկան բարձր շնորհներով և իմացական պատրաստությամբ, Իր անբասիր կենցաղով և համեստ բնավորությամբ, Եկեղեցու և ժողովրդի նկատմամբ Իր անսահման նվիրումով, հոգևոր ու մշակութային արժեքների խոր ապրումով և Իր անխառն հայրենասիրությամբ, մեր ինքնատիպ հոգևորականներից մեկն էր, որ այնքան կարճ ժամանակամիջոցում կարողացել էր նվաճել բոլորի սերն ու վստահությունը:

1955 թվականի հոկտեմբերի 2-ին, կիրակի օր, վեհաշուք հանդիսությամբ, Մայր Տաճարում կատարվեց նորընտիր Հայրապետի կաթողիկոսական օծումը, ըստ կարգաց և կանոնաց Հայաստանյայց Եկեղեցու:

Ազգընտիր Հայրապետը ընդունեց Եկեղեցու և ազգի միահամուռ հավատարմությունն ու հպատակությունը:

Նորին Ս. Օծությունը, սեպտեմբերի 30-ին, Մայր Տաճարում, Իր ուխտի աղոթքում ասում էր. «Տէր Աստուած հարցն մերոց, ուստ ինձ առնել կկամս քո և ուղղեա զգնացս իմ ի ճանապարհս քո արդարութեան, լեր ինձ օգնական և մարտակից վասն շինութեան և անսասանութեան Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց, վասն լուսաւորութեան և հոգւոյ մխիթարութեան հաւատացեալ ժողովրդեան Հայոց և վասն բարօրութեան Հայրենեաց մերոց»:

Այդ պատմական թվականից անցել է տասը տարի:

Անցնող տասը տարվա գործունեությունը ցույց է տվել, որ հանձին Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ունի իր ոգեշնչված և շինարար հայրապետներից մեկին, որն Իր պայծառ մտքով և հավատով, Իր նվիրումով ու լավատեսությամբ, Իր ուսերի վրա է կրում Ամենայն Հայոց Հայրապետության ծանր լուծը, Իր պարտքի ու առաքելության խորին գիտակցությամբ:

Անցնելուց առաջ Վեհափառ Հայրապետի տասնամյա գործունեության նվիրված մեր վերկուցման բովանդակությանը, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, պատիվն ունենք և անսահման ուրախությունը՝ ողջունելու այս հանդիսավոր նիստում Ձեր ներկայությունը, ամենապատիվ հոգևոր պետեր, գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ վարդապետներ, արժանապատիվ քահանաներ, հարգարժան պատգամավորներ թեմական իշխանությանց և տիրելի հյուրեր:

Ամենաջերմ զգացմունքներով կողջունենք նաև ներկայությունը պետական իշխանությանց մեծահարգ ներկայացուցիչների:

1. — ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

1955 թվականի Ազգային-եկեղեցական ժողովը, կաթողիկոսական ընտրությունից հետո, իր Դ նիստում ընտրում էր նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի հետևյալ նորընտիր կազմը.

1. Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան.
2. Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան.
3. Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան.
4. Տ. Եղնիկ եպիսկոպոս Ազնավուրյան.
5. Պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյան.
6. Պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյան.
7. Դոցենտ Արտաշես Տիրացյան.
8. Ուսուցիչ Արամ Աղաջանյան:

Որպես պատվակալ անդամներ, ընտրվել էին նաև Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը և Ստեփան Կամսարականը:

Նույն նիստում ընտրվում էր Վերստուգիչ հանձնաժողովի հետևյալ կազմը՝ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյան, Եփրեմ Ալեքսանյան և Գրիգոր Բեքմեզյան:

Տ. Սիոն արքեպիսկոպոսի հրաժարումով, 1960 թվականին Գերագույն Հոգևոր Խորհրդում նրա տեղը անդամ ընտրվեց Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն կազմը, Վեհափառ Հայրապետի գահակալության յոթը տարիների ընթացքում, 1955—1962 թվականներին, կանոնավոր կերպով նիստեր գումարեց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հերթական կերպով լուծելով Նորին Ս. Օծության կողմից առաջադրված հարցերը:

1962 թվականի հոկտեմբերի 5-ին, Մայր Աթոռում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը, իր Դ նիստում, ընտրեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմ, ըստ հետևյալի.

1. Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան.
2. Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան.
3. Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան.
4. Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան.
5. Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան.
6. Պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյան.
7. Ճարտարապետ Միքայել Մազմանյան.
8. Դասախոս Գրիգոր Բեքմեզյան:

Վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում էր հետևյալ կազմով.

1. Տ. Գրիգոր վարդապետ Եղիայան.
2. Եփրեմ Ալեքսանյան.
3. Գրիգոր Գյուլյան:

Սույն թվականի օգոստոսին ի Տեր հանգչավ ծերունազարդ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմում նոր անդամներ նշանակվեցին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, հանձինս գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանի և գրականագետ Գրիգոր Հակոբյանի:

Գերագույն Հոգևոր Խորհրդի հարգարժան անդամները եղել են Նորին Ս. Օծության մտերիմ, թանկագին խորհրդականները և հավատարիմ աշխատակիցները:

Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերում միշտ հանդես է եկել ներդաշնակ և համերաշխ ոգի, Հայ Եկեղեցու, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայ ժողովրդի գերագույն շահերի բարձր գիտակցությամբ:

2.—ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երիտասարդ Հայրապետը, Իրեն հատուկ գործիմացությամբ և հետևողականությամբ, առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղավ Մայր Աթոռի հոգևոր-վանական, կրթական, վարչական և տնտեսական կյանքի վերակառուցման պատասխանատու աշխատանքներին: Կազմվեց Մայր Աթոռի միաբանական կանոնադրությունը 30 հոդվածներից բաղկացած, որպեսզի Ս. Էջմիածինը ամրապնդվի, Վեհափառ Հայրապետի գեղեցիկ բնորոշմամբ, իբրև «**կրոնական հաստատություն մը, ուր ի Քրիստոս սիրով միաբանած հոգևորականներ ապրին համայնական կյանքով, ուխտած լինելով անձնվիրաբար ծառայել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ ժուժկալության, աղքատության և անպայման հնազանդության հայրապետահաստատ կանոններուն համաձայն**»:

Վեհափառ Հայրապետը, Իր գահակալության առաջին իսկ օրերից, Մայր Աթոռի միաբանությանը շրջապատեց հայրական գուրգուրանքով և ջերմությամբ: Մայր Աթոռում ստեղծվեցին խաղաղ ու առողջ հիմքերի վրա դրված վանական կյանք և միաբանական մթնոլորտ: Վեհափառ Հայրապետը սիստեմատիկ կերպով և մեծ կարևորությամբ Իր հոգածու ուշադրությունը կենտրոնացրեց մանավանդ Մայր Աթոռի երի-

տասարդ միաբանության հոգևոր դաստիարակության և բարոյական նկարագրի կազմության վրա:

Տասը տարի առաջ, Մայր Աթոռի միաբանությունը բաղկացել էր առաջացած տարիքով ծերունակարդ հոգևորականներից, որոնց ուսերի վրա դժվար էր դնել ծանր պարտականություններ, և մի բուռ նոր ձեռնադրված աբեղաներից, որոնք աշխատանքի մեջ դեռևս անփորձ էին և երկչոտ:

Իր գահակալության տասը տարիների ընթացքում, Վեհափառ Հայրապետն աշխատել է շարունակ Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին ներշնչել հոգևոր կոչման և ազգային առաքելության զգացումը, Ս. Էջմիածնի համար ապրելու և գործելու գաղափարական գեղեցկությունը:

Վեհափառ Հայրապետի նայվածքի տակ և առաջնորդության ներքև, Մայր Աթոռում հասակ առավ մի նոր սերունդ, տոգորված սուրբ հավատով և ծառայության ոգով:

Վեհափառ Հայրապետը, 1956 թվականի հոկտեմբերի 6-ին, Մայր Աթոռի երիտասարդ միաբանների մասնավոր վարդապետական իշխանության տվչության առիթով, ասում էր.

«Մենք կամեցանք Ձեր երիտասարդ հոգիներուն մեջ արծարծել Եկեղեցիին ու ազգին ապնըվորեն ծառայելու կրակը, առաջնորդված սուրբ զգացումներով և կյանքի հերոսական ոգով:

Հավատքի վերածնունդի այս օրերուն, Մենք «ԲԱՐԻՈՔ ՊԱՏԵՐԱԶՄ»-ը սկսած ենք մղել մեր հուսացյալ ժողովուրդի ծոցին մեջ: Այս օրերն և այսաեղեն կսկսի նոր շրջան մը մեր եկեղեցական պատմության մեջ: Դուք, որպես Ս ե ր գործակիցները, Մեկ հետ միասին վկաները պիտի ըլլաք Մեր հաղթանակին, և օր մը հպարտությամբ պիտի հիշեք, թե դուք ևս ներկա էիք այստեղ, այս ճակատամարտին, և մարտակից էիք Մեզի:

Ձեր կյանքի գործերով դուք պիտի կարողանաք ձեր անունները կապել շինարար ու ստեղծարար, աստվածասեր ու ազգօգուտ գործերու, որպես մշակներ առանց ամոթ: Ճանապարհը բաց է ձեր առաջ. վերցուցե՛ք ձեր խաչը և հետևցե՛ք Մեզի:

Բայց գիտցեք, որ Մենք Ձեզի չենք խոստանար ոչ ոսկի, ոչ արծաթ, ոչ հանգստավետ կյանք, ոչ իշխանություն, ոչ մեծարանք և ոչ ալ փառք: Մենք ոչինչ կխոստանանք ձեզի, բայց ոչինչ խոստանալով, ամեն բան կխոստանանք, այնպես, ինչպես մեծ առաքյալը Պողոս ոչինչ ուներ, բայց ամեն բան ուներ»:

Մայր Աթոռի նոր միաբանության պատրաստության համար տարված աշխատանքները տարիների ընթացքում տվեցին բավարար բարի արդյունքներ: Թեև եղան նաև ցավալի պարագաներ, երբ վեղար առած մի քանի վարդապետներ հեռացան հոգևոր կյանքից: Երիտասարդներ էին նրանք, որոնց առիթ և հնարավորություն էր տրված ծառայելու Ս. Էջմիածնին, սակայն նրանք չկարողացան տանել այդ նվիրական առաքելության քաղցր լուծը:

Այսօր երիտասարդ միաբանները, Մայր Աթոռում և թեմերում, անցել են պատասխանատու, կարևոր աշխատանքների:

Այսօր Մայր Աթոռում և ներքին թեմերում գործող միաբանությունը բաղկանում է 17 անդամներից, որոնցից 7-ը եպիսկոպոս, 6-ը վարդապետ և 4-ը սարկավագ: Ներքին թեմերում գործող քահանաների թիվն է 57:

Արտասահմանում գործող Մայր Աթոռի միաբանության թիվն է, արքեպիսկոպոս և եպիսկոպոս 25, վարդապետ 8, աբեղա 3 և սարկավագ 4:

3.—ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐ

Վեհափառ Հայրապետը Իր ուշադրությունը կենտրոնացրեց նաև ներքին թեմերի վերակազմակերպման գործին: Տարված հետևողական աշխատանքների շնորհիվ, կարելի եղավ առավել կազմակերպված և բնականոն կյանք ստեղծել ներքին բոլոր թեմերում:

Մեր ներքին բոլոր թեմերն այժմ ունեն իրենց թեմական առաջնորդները և թեմական խորհուրդները, ընտրված հավատացյալ ժողովրդի քվեներով, բաղկացած բարեխիղճ և ազնիվ ազգայիններից:

Թեմական կենտրոնները կազմակերպված են նաև վարչա-տնտեսական տեսակետով, որով բացատրվում է ֆինանսական եկամուտների աճը վերջին տասը տարվա ընթացքում: Մեր բոլոր թեմերն ունեն հաշվապահություն և քարտուղարություն, առաջնորդների և թեմական խորհուրդների վերին հսկողության և ղեկավարության ներքո: Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի օրոք հաստատված է տնտեսա-ֆինանսական կարգ ու կարգապահություն, որ գործադրվում է բոլոր ներքին թեմերում, բավարար ճշգրտությամբ ու բարեխղճությամբ:

Ահա՛ մեր ներքին թեմերն իրենց առաջնորդներով.

ա. Արարատյան Հայրապետական թեմ, կենտրոն ունենալով քաղաքամայր Երևանը: Առաջնորդական փոխանորդ՝ Տ. Վահան եպիսկոպոս Տերյան:

բ. Շիրակի թեմ, կենտրոն ունենալով Լենինականը: Առաջնորդ՝ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյան:

գ. Վրաստանի թեմ, կենտրոն ունենալով մայրաքաղաք Թբիլիսին: Առաջնորդ՝ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան:

դ. **Ադրբեջանի և Թուրքեստանի թեմ,** կենտրոն ունենալով Բաքու մայրաքաղաքը: Առաջնոր՝ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյան:

ե. **Ռուսաստանի և Նոր-Նախիջևանի թեմ,** կենտրոն ունենալով Մոսկվա և Ռոստով քաղաքները: Առաջնորդ՝ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյան:

Հայաստանում ունենք նաև չորս վանական կենտրոններ: Առաջինն են հանդիսանում Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի և Ս. Շողակաթի վանորայք, վանահայրությամբ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանի, երկրորդը՝ Ս. Գեղարդի վանքը, վանահայրությամբ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանի, երրորդը՝ Դարալագյազի Ս. Խաչ վանքը, վանահայրությամբ Տ. Պողոս աբեղա Տեր-Նշանյանի, իսկ չորրորդը՝ Ս. Խոր Վիրապի վանքը, վանահայրությամբ Տ. Գրիգոր քահանա Չաֆտելյանի:

4.—ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆ

Վեհափառ Հայրապետը սկզբից մեծ ուշադրություն դարձրեց Ս. Էջմիածնի Հոգևոր Ծեմարանին:

Նորին Ս. Օծությունը Հոգևոր Ծեմարանի առաջ դրավ նոր խնդիրներ, որոնց կատարումը պահանջում էր սիստեմատիկ աշխատանք, եռանդ և նվիրում:

Վեհափառ Հայրապետի օրով Հոգևոր Ծեմարանն ունեցավ իր հոգևոր վերատեսուչը, հանձին գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի, որ յոթ տարի, 1957—1963, անխոնջ կերպով ու հայրական փիրով կատարեց իր պարտքը: Այժմ վերատեսուչն է Հոգևոր Ծեմարանի նախկին սան և Մայր Աթոռի երիտասարդ միաբան հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանը, որն իր ուսումը Անգլիայում կատարելագործելով, վերադարձել է Մայր Աթոռ և դասախոսական կազմի նվիրյալ գործակցությամբ, աշխատում է կենսագործել Վեհափառ Հայրապետի առաջադրանքները Ծեմարանում:

Վերջին տասը տարիների ընթացքում, Հոգևոր Ծեմարանը միջին հաշվով ունեցել է ամեն տարի 30 ուսանողներ, բաշխված երեք դասարանական և երեք լսարանական դասընթացների վրա:

Անցնող տասը տարիների ընթացքում, Հոգևոր Ծեմարանը տվել է 35 շրջանավարտ, որոնցից 24-ը ընդունել են հոգևոր կոչում (կուսակրոն և ամուսնացյալ քահանաներ ու սարկավագներ):

Այժմ Հոգևոր Ծեմարանն ունի 28 աշակերտ, որոնցից 18-ը ներքին թեմերից, 10-ը՝ արտասահմանից:

Հոգևոր Ծեմարանում դասավանդվում են հետևյալ առարկաները.

ա. **Կրոնա-եկեղեցագիտական առարկաներ** (աստվածաբանություն, Ս. Գրոց ուսումնասիրություն և մեկնություն, քրիստոնեական վարդապետություն, ծիսագիտություն, քարոզախոսություն, տոմարագիտություն, հայրաբանություն):

բ. **Մատենագրություն** (Հայ Եկեղեցու հին մատենագրություն, հայ գրականության պատմություն, ընդհանուր գրականության պատմություն):

գ. **Պատմական առարկաներ** (Հայ Եկեղեցու պատմություն, Ընդհանուր Եկեղեցու պատմություն, հայ ժողովրդի պատմություն):

դ. **Լեզուներ** (հայերեն՝ աշխարհաբար և գրաբար, ռուսերեն, ազերեն և ֆրանսերեն):

ե. **Փիլիսոփայական առարկաներ** (հոգեբանություն և տրամաբանություն):

զ. **Երաժշտություն** (շարականագիտություն, հայկական հին ձայնագրություն, եվրոպական ձայնագրություն):

է. **Մարմնակրթանք:**

ը. **Հաշվապահություն:**

Ուսուցչական կազմը, որին գլխավորում է Վեհափառ Հայրապետը, բաղկացած է հոգևորականներից և աշխարհական մասնագետ դասախոսներից, որոնք հրավիրվում են Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններից:

Դասացուցակով նախատեսված դասընթացներից բացի, Հոգևոր Ծեմարանի ուսանողությունը պարբերաբար լսում է դասախոսություններ վանական գիտնականների և գրականագետների կողմից, որոնք հատկապես հրավիրվում են Երևանից այս նպատակով, ամբողջացնելու համար մեր ուսանողների և միաբանների ընդհանուր զարգացումը:

Տարվա ընթացքում, Հոգևոր Ծեմարանի հարկի տակ, պարբերաբար տեղի են ունենում նաև գրական-երաժշտական երեկոներ, որոնք կազմակերպվում են մեր ուսանողների կողմից, և դաստիարակչական-գեղարվեստական կինոժապավենների ցուցադրություն: Մեր ուսանողներն ունեն իրենց երգչախումբը:

Ուսանողները տարին մի քանի անգամ կատարում են էքսկուրսիաներ դեպի Հայաստանի պատմական վանքերն ու տեսարժան վայրերը:

Ուսանողները հավաքաբար տարվում են հաճախ Երևան՝ Սունդուկյանի անվան թատրոն կամ Սպենդիարյանի անվան օպերայի թատրոն կամ Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ համերգներին:

Հոգևոր Ծեմարանին նյութապես օժանդակում են արտասահմանի մեր ազնիվ ու բարեպաշտ ժողովրդից 16 բարերարներ, որոնք հանձն են առել տարեկան 500 դոլար վճարել մեկական ուսանողի համար:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը ևս Հոգևոր Ճեմարանում պահում է տարեկան երեք սան:

Հոգևոր Ճեմարանն ունի իր մասնագիտական գրադարանը, շուրջ 15 000 գրքերի իր հարուստ ֆոնդով:

5.—«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐ

Վեհափառ Հայրապետը մեր ժողովրդի քրիստոնեական և հայեցի կրոնաբարոյական դաստիարակության գործում մեծ և պատասխանատու դեր է հատկացրել ընդհանրապես հայ կրոնական մամուլին և ի մասնավորի Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին:

Նորին Ս. Օծությունը ամսագրի խմբագրության առաջ խնդիր է դրել հոգևոր սնունդ և ազգային իրավ գիտակցություն տալ հայ ժողովրդին, պատկերել Մայր Աթոռի, միաբանության, Հոգևոր Ճեմարանի կյանքը իր բոլոր կողմերով, լայն կերպով արձագանքել ներքին թեմերի և Սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքին, միջեկեղեցական հարաբերություններին և միաժամանակ իր էջերը լայնորեն բանալ Հայ Եկեղեցու պատմության, եկեղեցական մատենագրության և եկեղեցական արվեստի հետ աղերս ունեցող գիտական լուրջ հոդվածների և ուսումնասիրությունների առաջ:

Նորին Ս. Օծության իղձն է, որ «Էջմիածին» ամսագիրը հետզհետե հանդիսանա առավել չափով հայ աստվածաբանական մտքի զարգացման, եկեղեցագիտության և ավետարանական բարոյախոսության հանդես:

Վերջերս, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, «Էջմիածին» ամսագրի խմբագրապետ Ա. Հատիտյանի կողքին, թարմ ուժերի ստեղծումով կազմվել է խմբագրական խորհրդակցական մարմին, որի կազմում են Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը, Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը, Երևանի գրականության թանգարանի տնօրեն պր. Ս. Մելիքսեթյանը և պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Քոչանջյանը:

Ամսագիրն ընթանում է Վեհափառ Հայրապետի մատնանշած ուղիով և արդյունքները, շնորհիվ խմբագրապետ Արթուն Հատիտյանի ոգեշունչ և ժրաջան աշխատանքի և իր օգնական Եղիշե Վարդերեսյանի բարեխիղճ և անխոնջ գործակցության, հույժ գնահատելի են: Հաճախ, շատ հաճախ, գնահատանքի ջերմ վկայություններ են արձանագրվում Սփյուռքում և Մայր Հայրենիքում:

Առանձին գոհունակությամբ պետք է արձանագրել ամսագրի հրատարակած բացառիկ համարները, ինչպես այս տարի, ապրիլյան մեծ եղեռնի առթիվ հրատարակված բացառիկը, որն իր ճոխ բովանդակությամբ և գեղեցիկ ձևավորումով արժանի հուշապսակը եղավ մեր նահատակների խնկելի հիշատակին ծոնված:

Նորին Ս. Օծության գահակալության տարիներին ավելացավ նաև ամսագրի տպաքանակը: Եթե 1951 թվականին ամսագիրը լույս էր տեսնում 2000 օրինակ տպաքանակով, ապա 1958 թվականից ի վեր այն հրատարակվում է 3500 օրինակ տպաքանակով:

Ամսագրի տպաքանակը հավասար չափով սպառվում է մեր ներքին և արտասահմանյան թեմերում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը միաժամանակ Մայր Աթոռի հրատարակչականն է: Խմբագրությունը հրատարակեց Վեհափառ Հայրապետի 1956, 1960, 1963, 1964 և 1965 թվականների ուղևորության, ինչպես նաև 1958 թվականին Նորին Ս. Օծության ծննդյան հիսնամյա հոբելյանին նվիրված հատորները, «Էջմիածին» ալբոմը, Մայր Աթոռի օրացույցները և այլ հրատարակություններ:

6.—ԴԻՎԱՆԱՏՈՒՆ

Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարին կազմակերպվեց Մայր Աթոռի դիվանատունը, որի միջոցով ապահովվում են Հայրապետական կենտրոնի հարաբերությունները ներքին և արտաքին թեմերի, ինչպես նաև քույր եկեղեցիների հետ:

Մայր Աթոռի բոլոր թղթակցությունները, ճշգրտությամբ և անթերի, ամենայն կանոնավորությամբ կատարվում են անմիջական հսկողությանը տակ Վեհափառ Հայրապետի: Դիվանատան պաշտոնյաներն են դիվանապետ Հայկ Առաքելյանը և քարտուղար Նուպար Միքայելյանը, որոնք գնահատելի աշխատանք են կատարում, բարեխղճությամբ ու նվիրումով: Դիվանատունը ունի նաև ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզվի բաժիններ:

Տասը տարիների ընթացքում դիվանատուն մուտք է գործել 10 051 գրություն և Մայր Աթոռից առաքվել 12 011 գրություն: Վեհափառ Հայրապետը խմբագրել ու ստորագրել է 545 կոնդակ, Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրվել են 79 ազգայիններ, իսկ օրհնության կոնդակներ են ստացել 434 ազգայիններ՝ իրենց եկեղեցաշեն և ազգանվեր գործունեության համար:

7.— ՏՆՏԵՍԱ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Տասը տարի առաջ, կարևոր հարցերից մեկը, որը ծառանում էր նորընտիր Հայրապետի առաջ, Մայր Աթոռի և ներքին թեմերի վարչատնտեսական գործունեության կազմակերպումն ու բարեկարգումն էր:

Մայր Աթոռի տնտեսական վիճակը նվազ մխիթարական էր մինչև 1955 թվականը: Այդ շրջանին, Մայր Աթոռի բյուջեն հասնում էր մինչև 1 000 000—1 300 000 ռուբլու (հին դրամով) և ֆինանսական տարին փակվում էր հաճախ 40—50% բացով: Նվազ էին նաև արտասահմանյան նպաստները:

Վերակազմակերպելով մեր ներքին տնտեսա-ֆինանսական կառուցվածքը և գործելու կերպը, ու նաև շնորհիվ ներքին թեմերի առաջնորդների և Մայր Աթոռի հաշվապահության բարեխիղճ և աչալուրջ աշխատանքի, Մայր Աթոռի եկամուտները տարեցտարի աճեցին և ավելի քան կրկնապատկվեցին: 1956—1965 տարիներին Մայր Աթոռի տարեկան բյուջեն միջին հաշվով բարձրացել է 3 000 000 ռուբլու (հին դրամով), որի 2 000 000 ռուբլին գոյացել է ներքին թեմերի եկամուտներից, իսկ մնացածը՝ արտասահմանի մեր թեմերի և հավատացյալների նվերներից, որոնց մեջ մտնում են նաև Հոգևոր ծեմարանում սան պահող բարերարների վճարումները, տարեկան 500-ական դոլար:

Մայր Աթոռի ընթացիկ բյուջեի մեջ չի մտնում շինարարական գործունեության ֆինանսավորումը:

Մայր Աթոռի վարչա-տնտեսական գործունեության ղեկավարներն են ֆինանսական բաժնի պետ, գլխավոր հաշվապահ Գառնիկ Քեհյայանը, տնտեսական բաժնի վարիչ Անդրանիկ Ութուջյանը և Վարուժան Ղոնչեգյուլյանը, ակտիվ և անխոնջ աշխատողներ, գնահատված բոլորի կողմից:

Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական և շինարարական աշխատանքների ֆինանսական գործարքները կանոնավոր կերպով քննության և ստուգման են ենթարկվում Գերագույն Հոգևոր Խորհրդին առընթեր գործող Վերստուգիչ հանձնաժողովի կողմից, որ սքանչելի նախանձախնդրությամբ է կատարում իր գործը, մեծապես նպաստելով, որ Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական գործունեությունն ընթանա բնականոն և կարգապահ պայմաններում:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին Մայր Աթոռում բացվեցին ատաղձագործության, արծաթ-ոսկերչական, երկաթագործության արհեստանոցները և ասեղնագործդերձակատունը, որոնք գործում են ցայսօր: Մասնավոր գնահատանքի արժանի են Մայր Աթոռիս վարպետ երկաթագործ Սարգիս Պետրոսյանը, վարիչ վարորդ Լևոն Խոջամիրյանը, արծաթագործ-Խոսրով Սուքիասյանը, վարպետ ատաղձագործ Մուշեղ Ղազարյանը, ասեղնագործուհի տիկին Մաքրուհի Գալեճյանը, դերձակ Գրիգոր Գևորգյանը, Վեհարանի սպասարկողների ավագ Ավետ Ֆիշյանը իր օգնականներով և բոլոր մյուս համեստ ու ջանասեր աշխատողներն ու բանվորները:

Մայր Աթոռը դարձել է տնտեսա-ֆինանսական մի կազմակերպված հաստատություն՝ վարչական և հաշվապահական գրասենյակներով: Տնտեսա-ֆինանսական գծով Մայր Աթոռն ունի 30 պաշտոնյա և 87 արհեստավոր ու բանվոր, ինչպես նաև 35 հոգևոր երգեցիկ խումբ՝ հմուտ ղեկավարությամբ խմբավար Խորեն Հակոբյանի: Մայր Աթոռում ռոճիկ ստացողների ընդհանուր թիվն է 131, չհաշված հոգևորականները: Այսօր Մայր Աթոռում գործում է 10 ավտոմեքենա, որոնցից 6-ը մարդատար, 2-ը բեռնատար, 2-ը ավտոբուս:

6.—ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գահակալության ուրախ հանդիսություններից հետո, Վեհափառ Հայրապետը հղացավ կազմեց և գործադրության դրեց մի շարք վանքերի և եկեղեցիների վերականգնման ծրագրեր:

Նորին Սրբության հրավերով կազմվեց անվանի հայ ճարտարապետներից բաղկացած մի հանձնաժողով, որն ինքնաբուխ նվիրումով ու գիտական հեղինակությամբ իր վրա է վերցրել Ս. Էջմիածնի, վանքերի ու եկեղեցիների շինարարական մեծ աշխատանքների ընդհանուր վերահսկողությունը, ժամին տալու շինարար և կառուցող Հայրապետի ծրագրերին: Մայր Աթոռում կազմված այդ հանձնաժողովի մեջ են.

1. Ճարտարապետ Միքայել Մազմանյանը, արվեստի վաստակավոր գործիչ, «Երևաննախագիծ» արվեստանոցի վարիչ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ:

2. Պրոֆ.-դոկտ. Կարո Ղաֆադարյանը, հայտնի պատմաբան ու հնագետ, պետական համալսարանի պրոֆեսոր:

3. Ճարտարապետ պրոֆ. Վարազդատ Հարությունյանը, արվեստի վաստակավոր գործիչ, դասախոս Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում և նախագահ Հայաստանի ճարտարապետների միության:

4. Ճարտարապետ, դոցենտ Ռաֆայել Իսրայելյանը, արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի պետական նախագծային ինստիտուտի ճարտարապետական արվեստանոցի վարիչ և գիտաշխատող Արվեստի ինստիտուտում:

5. Ճարտարապետ Կոնստանտին Հովհաննիսյանը, արվեստի վաստակավոր գործիչ, ուրարտագետ, հնությունների պահպանության բաժնի վարիչ և դասախոս Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում:

6. Ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանը, «Երևաննախագիծ» արվեստանոցի վարիչ:

7. Ճարտարապետ Արծրունի Գալիկյանը, Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ:

Հանձնաժողովը ամիսը մեկ կամ երկու անգամ նիստեր է գումարում Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո: Հանձնաժողովի աշխատանքներին հաճախ իրենց մասնակցությունն են բերում մեր մեծ նկարիչ, Վարպետ Մարտիրոս Սարյանը, նկարիչ Գրիգոր Խանջյանը և ուրիշ մասնագետներ: Այս հանդիսավոր առթիվ, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, մեր հարգալից երախտագիտությունն ենք հայտնում Մայր Աթոռիս ճարտարապետական հանձնաժողովի բազմավաստակ նախագահ ճարտարապետ Մ. Մազմանյանին և հանձնաժողովի բոլոր պատկառելի անդամներին:

Ուրախությամբ և երախտագիտությամբ պետք է արձանագրել այստեղ, որ անցնող տասը տարիների ընթացքում, առանց ընդհատման, շարունակվեցին շինարարական աշխատանքները և՛ Մայր Աթոռում, և՛ Մայր Աթոռի շրջակայքից դուրս, և համարյա ամբողջությամբ կենսագործվեց շինարարական ծրագիրը:

Ահա համառոտ «թվումն մասանց»-ը կատարված այդ շինարարական աշխատանքների.

ա. Մայր Տաճար Ս. Էջմիածնի

1. Մարմարապատում Տաճարի ամբողջ հատակի:

2. Կառուցում մարմարյա Ավագ Ս. Սեղանի, Իջման Ս. Սեղանի և մկրտության ավազանի:

3. Վերակառուցում Տաճարի հարավային փլած գմբեթի:

4. Զևավորում Ավագ Սեղանի տակ հայտնաբերված հեթանոսական կրակարանի:

5. Վերանորոգումներ հիմքերի և արտաքին պատերի վրա:

6. Կառուցում դասի մարմարյա բազրիքների:

7. Մայր Տաճարի շրջափակի սալապատում տուֆ քարով:

8. Մայր Տաճարի շրջափակի ճանապարհների ասֆալտապատում:

9. Մայր Տաճարի շուրջը ստորերկրյա ջրանցքների (դրենաժային սիստեմի) վերականգնում:

10. Կապարապատում Մայր Տաճարի ամբողջ տանիքի:

11. Կառուցում դռների և լուսամուտների՝ երկաթյա շրջանակներով:

(Այս աշխատանքները կատարվել են բարերար Գ. Կյուլպենկյանի կտակի հատկացումներով, գործադրությամբ կտակակատար մարմնի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության, ի Լիսաբոն):

բ. Ս. Էջմիածնի մայրավանքից ներս

1. Վանքի շուրջը կառուցում 1000 մետր երկարությամբ և 4—5 մետր բարձրությամբ պարսպի՝ սրտաբաշ տուֆ քարով:

2. Ամբողջական և հիմնական վերակառուցում նոր Վեհարանի շենքի, որ Մայր Աթոռին վերադարձվեց 1957 թվականին:

3. Ամբողջական վերանորոգում տպարանի շենքի, կառուցում երկրորդ հարկի և հաստատում նոր տպարանի:

4. Հիմնական վերանորոգում Խրիմյան շենքի:

5. Կառուցում ժամացույցի աշտարակի, վանքի պարսպի հյուսիսակողմը:

6. Կառուցում նոր մեծ դարբասի, վանքի արևելակողմը, իբրև գլխավոր մուտք:

7. Վերանորոգում Տրդատի դռան:

8. Կառուցում կենտրոնական ջեռուցման կաթսայատան և ջեռուցման անցկացում Հոգևոր Ճեմարանի, Երեմյան և տպարանի շենքերի, ինչպես նաև Վեհարանի և Սինոդի շենքերում:

9. Վանքի հողամասում և բոլոր շենքերում ջրամատակարարման և կոյուղու անցկացում:

10. Կառուցում էլեկտրական ենթակայանի:

11. Վերանորոգումներ Ճեմարանի, Երեմյան և Սինոդի շենքերի մեջ:

12. Ծառապատում և կանաչապատում վանքի շրջափակի:

գ. Ս. Հռիփսիմեի Տաճար (Է դար)

1. Հիմնական վերանորոգում տաճարի և կառուցում նոր Սեղանի, բարեկարգում շրջապատի և տնկում այգու, տաճարի արևմտյան հողամասում:

2. Պարսպապատում տաճարի շրջափակի և կառուցում նոր դարբասի, հյուսիսային պարսպի մեջ:

3. Կառուցում հուշարձան-աղբյուրի և նորոգում բնակելի շենքի:

դ. Այլ վերանորոգումներ

1. Հիմնական վերանորոգում **Ս. Շողակաթ տաճարի** (ԺԷ դար), կառուցում նոր Սեղանի և պարսպապատում շրջափակի:

2. Հիմնական նորոգում **Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու**, բարեկարգում Մեծ Վարդապետի դամբարանի և կառուցում նոր Սեղանի, պարըսպապատում և կանաչապատում շրջափակի: Նկարապարդում ներքին պատերի որմանկարներով, շնորհալի ու տաղանդավոր երիտասարդ նկարիչներ Հովհաննես Մինասյանի և Հենրիկ Մամյանի կողմից:

3. Հիմնական վերանորոգում **Բջնիի Ս. Աստվածածին պատմական եկեղեցու:**

4. Հիմնական վերանորոգում **Ս. Գայանեի եկեղեցու** (Է դար) և պարսպապատում շրջափակի:

5. Վերանորոգում **Ս. Խոր Վիրապի վանքի:**

6. Հիմնական վերանորոգում **Սիսիանի Ս. Աստվածածին եկեղեցու** և վերականգնում փլած գմբեթի (Է դար):

7. Վերանորոգման որոշ աշխատանքներ **Ս. Գեղարդի վանքում** (ԺԲ դար):

8. Վերանորոգում **Դարալագյազի (Եղեգնաձորի) Ս Խաչ վանքի:**

9. Մասնակի վերանորոգումներ Երևանի Ս. Սարգիս, Ս. Հովհաննես և Ս. Զորավոր եկեղեցիների վրա, ինչպես նաև Լենինականի Ս. Աստվածածին (Ցոր-Վերք) տաճարում:

10. Պարսպապատում Մայր Աթոռի միաբանական պատմական հին գերեզմանատան:

11. Վերանորոգում Կամո (Նոր Բայազետ) քաղաքի եկեղեցու:

12. Մասնակի վերանորոգումներ կատարված են նաև Թբիլիսիի, Ռոստովի և Բաքվի եկեղեցիներում:

Շինարարական գեղարվեստական աշխատանքների շարքին կկամենայինք հիշել նաև տաղանդավոր ոսկերիչ Ժիրայր Զուլալյանի և իր գործակից հմուտ մասնագետ Կարո Մեսրոպյանի անունները, որոնք վարպետությամբ կատարել են Վեհափառ Հայրապետի ոսկերչական մի շարք կարևոր պատվերները, ըստ արվեստով ու հայկական հարապատ ոճով հորինված նախագծերի ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի, որ նաև այլ բազմաթիվ առիթներով նախագծեր և գծագրություններ է հեղինակել, միշտ բարձր ճաշակով:

Մայր Աթոռիս վերջին գործը հանդիսացավ մեծ եղեռնի նահատակների հիշատակին նվիրված հուշարձանը, որ, ինչպես տեսաք, ճշմարտապես գեղարվեստական մի կոթող է՝ հպորապես ոգեշնչող ու հմայող: Այդ ճարտարապետական գեղարվեստական գործը, ինչպես նաև այլ բազմաթիվ հղացումներ և իրագործումներ Մայր Տաճարում և նոր Վեհարանում պարտական ենք արվեստագետ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի ստեղծագործ տաղանդին, որի հղացումների կենսագործման աշխատակցել է որոշ առիթներով շնորհալի ծանոթ քանդակագործ Արայիկ Հարությունյանը: Այստեղ պարտինք մեծ գնահատանքով հիշել նաև վարպետ քանդակող Հրաչիկ Ստեփանյանին, որ իր սքանչելի ձեռքով կատարել է Մայր Աթոռիս քանդակապարդման բոլոր աշխատանքները:

Ջերմ գնահատանքի խոսք ունենք նաև Մայր Աթոռիս գլխավոր ճարտարապետ Արծրունի Գալիկյանին, որ ոչ միայն անձամբ ղեկավարել է և հարապատորեն կենսագործել Վեհափառ Հայրապետի շինարարական բոլոր ծրագրերը և ճարտարապետական հանձնաժողովի ցուցումներն ու որոշումները, այլ նաև նախագծող հմուտ հեղինակ է հանդիսացել նոր Վեհարանի վերակառուցման նախագծի, մի շարք կարևոր շինարարական գործերի Ս. Էջմիածնի շրջափակում, Հռիփսիմեում, Օշականում և Շողակաթում:

Շինարարական աշխատանքների զգալի մասը կատարվել է արտասահմանից ստացված հատկացումներով և բացառիկ նվիրատվություններով:

1955 թվականից մինչև 1965 թվականը արտասահմանից ստացված և իրացված նվիրատվությունների ընդհանուր գումարները հասնում են տարեկան շուրջ 2 000 000 ռուբլու (հին դրամով):

Մայր Աթոռի ընթացիկ բյուջեի շուրջ 25% և շինարարական մեծ աշխատանքների նյութական միջոցները ամբողջությամբ ապահովվում են Սփյուռքի հայ հավատացյալ ժողովրդի լումաներով և նվիրատվություններով:

Այստեղ առաջին տեղում պիտի նշել Գալուստ Կուլբենկյան հիմնարկությունը, որն ամենայն նախանձախնդրությամբ գործադրել է հանգուցյալ մեծ բարերարի 400 000 դոլարի հատուկ կտակը՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի ամբողջական վերանորոգման համար: Երախտագիտությամբ պետք է հիշենք, որ Մայր Տաճարի ներքին խարխլված մույթերի և կամարների ամրացումը, ինչպես նաև Տաճարի ներքին մակերեսների որմանկարների վերականգնումը կատարվել է 1954—1955 թվականներին, Հայաստանի պետության միջոցներով:

Նորին Ս. Օծության գահակալության տասը տարիների ընթացքում, Մայր Աթոռի շինարարական աշխատանքների համար կարևոր նվիրատվություններ կատարել են հետևյալ թեմերն ու ազգային բարերարները.

1. Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայության նվերներով հիմնադրվել է Մայր Աթոռի նոր տպարանը: Հանգանակության եռանդուն կազմակերպիչը հանդիսացավ պր. Երվանդ Աղաճանյան:

2. Ֆրանսահայերի նվերներով վերանորոգվում է Ս. Գայանեի պատմական տաճարը:

3. Կալիֆոռնիայի թեմի մեր հավատացյալների նվիրատվություններով ապահովված է Ս. Խոր Վիրապի վերանորոգումը:

4. Լոնդոնի հայ գաղութի լումաներով վերանորոգվեց Բջնիի պատմական եկեղեցին:

5. Տիար Երվանդ Հյուսիսյան և տիար Օննիկ Մանուկյան, Միլանոյից, բարերարներն են Ս. Հռիփսիմեի եկեղեցու ամբողջական վերանորոգման: Տիար Ե. Հյուսիսյան մի կարևոր գումար ևս նվիրել է նոր Վեհարանի կահավորման օգտին:

6. Տեր և Տիկին Սարգիս և Աստղիկ Բյուրքճյանները, Լոնդոնից, հիմնեցին Ս. Գեղարդի վանքի մեղվաբուծարանը և կարևոր գումար նվիրեցին նոր Վեհարանի կահավորման:

7. Տեր և Տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյանները, Հալեպից, բարերարներն են Ս. Շողակաթի վերանորոգման:

8. Հայկ և Թորգոմ Ղազարոսյան եղբայրների նվիրատվությամբ, Միլանոյից, կատարված է Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու ամբողջական վերանորոգությունը:

9. Տեր և Տիկին Պետրոս Ալեքսանյանների նվիրատվությամբ, Լոնդոնից, կատարված է Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու որմանկարագրությունը:

Հոգուտ Մայր Աթոռի շինարարական ծեռնարկների, կարևոր գումարներ են տրամադրել հետևյալ բարեպաշտ ազգայինները.

1. Հանգուցյալ Մարքո Պաքրճյանը, Մանչեստրից:
2. Հանգուցյալ Ներսես Կյուլպենկյանը, Մանչեստրից:
3. Հանգուցյալ Ապրո Ապրոյանը, Բելգրութից:
4. Եղբարք Պետրոս և Հմայակ Սարաֆյանները, ԱՄՆ-ից:
5. Պր. Ալեքս Մանուկյանը, ԱՄՆ-ից:
6. Ջորավար Սարգիս Ջարդարյանը, ԱՄՆ-ից:
7. Պր. Հարրի Բրրթ Մովսիսյանը, ԱՄՆ-ից:
8. Վարդանանց ասպետները, ԱՄՆ-ից:
9. Պր. Եդվարդ Մարտիկյանը, ԱՄՆ-ից:
10. Պր. Ստեփան Տեր-Գրիգորյանը, ԱՄՆ-ից:
11. Պր. Լևոն Երզնկացյանը, Ադդիս-Աբեբայից:
12. Պր. Մարտիրոս Տարագճյանը, Ադդիս-Աբեբայից:
13. Պր. Կարապետ Հակոբյանը, Ժընևից:
14. Պր. Ջան Ջյուրքճյանը, ԱՄՆ-ից:
15. Եղբարք Գևորգ և Պողոս Սարաֆյանները, Բուենոս-Այրեսից:
17. Պր. Հարություն Թադոսյանը, ԱՄՆ-ից:
18. Տեր և տիկին Արամ և Սաթենիկ Կարապետյանները, ԱՄՆ-ից:
19. Հանգուցյալ Արշակ Գարագյոզյանը, ԱՄՆ-ից:
20. Եղբարք Խաչատուրյանները, ԱՄՆ-ից:
21. Պր. Գևորգ Շաթալպաշյանը, Բելգրութից:
22. Պր. Հակոբ Թոփալյանը, Փարիզից:
23. Տիկին Արփիկ Գանթարճյանը, Հալեպից:
24. Պր. Կ. Պոտուրյանը, Խարթումից:
25. Հանգուցյալ տիկին Ռոզ Թրիկին, Լոնդոնից:
26. Պր. Գառնիկ Պապարյանը, Սան-Պաուլոյից, և ուրիշներ:

Շնորհակալությամբ պետք է հիշել նաև նյութական կարևոր նպաստը Լոնդոնի «Աբգարյան ավանդ»-ի և նվիրյալ ծառայությունը պր. Կարապետ Այթունյանի, Բելգրութից:

16 ազգայիններ, պանպան երկրներից, տարեկան 500-ական դոլար են նվիրում, իբրև Հոգևոր Ճեմարանում սան պահող բարերարներ:

9.— ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Վեհափառ Հայրապետի գահակալությամբ, մեր Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մի նոր ժամանակաշրջանի առաջ են գտնվում:

Նորին Ս. Օծությունը, ստեղծված ներքին և արտաքին նպաստավոր պայմանները իմաստությամբ և հնարավոր չափով օգտագործում էր հոգուտ և հառավել կազմակերպում մեր Ս. Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, հոգուտ և համրապնդում ի սփյուռս աշխարհի ցրված մեր ժողովրդի միության և հոգևոր մխիթարության:

Այս մտածումների լույսի տակ, ծրագրվեցին Վեհափառ Հայրապետի արտասահման կատարելիք հովվապետական այցելությունները:

Վեհափառ Վազգեն Հայրապետի հովվապետական ուղևորությունները մեծ իրադարձություններ հանդիսացան Սփյուռքի հայության ազգային-եկեղեցական կյանքում:

Նորին Վեհափառության պատմական ու շնորհաբաշխ այդ այցելությունների նպատակն էր ծանոթանալ Սփյուռքի հայության ազգային-եկեղեցական կյանքին և ամրապնդել կապը Մայր Աթոռի և Սփյուռքի միջև:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը արտասահմանում, Իր հավատացյալ և հայրենասեր կավակների կողմից ամենուրեք գտավ փառահեղ ու սրտագին ընդունելություն: Սփյուռքի հայությունն ըմբռնեց, որ Ամենայն Հայոց Հայրապետությունը, ինչպես միշտ, այնպես էլ ներկայումս հանդիսանում է հայոց հավատի բարձր բերդը և այն հոգևոր կամուրջը, որ կապում է ի սփյուռս աշխարհի ցրված հայությունը իր Մայր Երկրի հետ: Այս բարեբաստիկ այցելություններով, է՛լ ավելի խորացավ հայ ժողովրդի սերն ու հավատարմությունը դեպի հայ հավատի կենտրոն և Լուսո Խորան Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և նրա արժանավոր Գահակալը և է՛լ ավելի ծաղկեցին Սփյուռքի հայության հույսերը դեպի հայ ժողովրդի և Մայր Հայրենիքի պայծառ ապագան:

Սփյուռքի բովանդակ հայ ժողովուրդը, Գանգեսի, Նեղոսի, Բոսֆորի ափերից մինչև հեռավոր ափերը Ատլանտյանի և Խաղաղականի, բոլորն անխտիր, աննախընթաց միասնությամբ, եկան վկայելու, թե մեկ է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և անբաժանելի, ինչպես ինքը հայ ժողովուրդը, և թե բոլոր հայերը հարազատ և հավատարիմ զավակներն են հայ հավատի աստվածակառույց կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ մայրը և հիմնաքարը բոլոր հայ եկեղեցիների և նվիրապետական Աթոռների:

Նորին Ս. Օծության գահակալության տարիներին, առավել բնականոն և սերտ հարաբերություններ մշակվեցին և պահպանվեցին մեր նվիրապետական Աթոռների, նրանց գահակալների, թեմերի կենտրոնների հետ, համրապնդումն և ի շինություն հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր, ազգային-եկեղեցական կյանքի:

Հովվապետական առաջին այցելությունը տեղի ունեցավ 1956 թվականի փետրվար—մայիս ամիսներին Անթիլիաս, Կահիրե, Ալեքսանդրիա, Միլանո, Վենետիկ, Փարիզ, Լիոն, Մարսել, Լոնդոն և Մանչեստր:

1957 թվականի ապրիլի 26—29 օրերին, Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելություն կատարեց դեպի Լենինական, Հառիճա և Մարմաշենի վանքերը, մայիսի 17—22 օրերին՝ դեպի Հյուսիսային Կովկասի և Նոր Նախիջևանի թեմը՝ Ռոստով, Թոփտի, Զալտր և Մեծ Սալա, հուլիսի 5—11 օրերին՝ դեպի Վրաստանի հայոց թեմը, սեպտեմբերի 20—28 օրերին՝ դեպի Ադրբեջանի թեմը՝ Բաքու, Կիրովաբադ, Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտ և Գանձասարի վանքը:

1957 թվականի դեկտեմբերին Նորին Ս. Օծությունը պաշտոնական այցելություն էր տալիս Արարատյան հայրապետական թեմի Երևանի եկեղեցիներին:

1960 թվականի մայիսի 20-ից հուլիսի 28-ը Վեհափառ Հայրապետն այցելում էր Հյուսիսային Ամերիկա, հուլիսի 29-ից սեպտեմբերի 8-ը՝ Հարավային Ամերիկա և ապա Լիսաբոն՝ սեպտեմբերի 9—13, և Փարիզ՝ սեպտեմբերի 13—22:

1961 թվականի հուլիսին Վեհափառ Հայրապետը այցելում էր Ստամբուլ, Անկարա և, վերադարձի ճանապարհի վրա՝ Վիեննայի հայ համայնքին և Մխիթարյան հայրերի վանքը:

1963 թվականի հոկտեմբերի 12-ին Նորին Ս. Օծությունն ուխտի էր գնում Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքը, ապա նոյեմբերին կրկին անգամ այցելում էր Եգիպտոս և դեկտեմբերին հնդկահայ համայնքների (Մադրաս, Բոմբել և Կալկաթա) եկեղեցիներին ու ժողովրդին:

1965 թվականի հունվար 15—21 օրերին, Նորին Ս. Օծությունը, գլխավորելուց հետո Հայ Եկեղեցու պատգամավորությանը Ադդիս-Աբեբայի արևելյան հինգ եկեղեցիների պետերի համաժողովին, այցելում էր Եթովպիայի հայ գաղութը, և ապա Կահիրե, Փարիզ և Լոնդոն:

1965 թվականի հունիսի 8-ից հուլիսի 5-ը, Վեհափառ Հայրապետը այցելում էր բուլղարահայ և ռումինահայ թեմերը:

Այստեղ առանձին գոհունակությամբ պետք է արձանագրել 1963 թվականի հուլիսին Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Շնորհք Արքեպիսկոպոսի և 1964 թվականի հոկտեմբերին Երուսաղեմի հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Եղիշե Արքեպիսկոպոսի պատմական այցելությունները Մայր Աթոռ և Ամենայն Հայոց Հայրապետին: Պատմության մեջ առաջին անգամ էր, որ երկու Աթոռների գահակալները ուխտով այցելում էին Ս. Էջմիածին և Հայրենիք:

10.— ՀԱՆՈՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹՅԱՆ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմական առաքելություններից մեկն է եղել հայ ժողովրդի միասնության պահպանումը Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից սկսյալ. «Եւ սիւն հրեղէն՝ Կաթուղիկէ Եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովուրդս ի մի միաբանութիւն սուրբ հաւատոյ ի ներքոյ թևոցն իւրոց» (Ագաթանգեղոս):

Նույն ոգով ներշնչված, աշխատել են մեր նվիրապետական Աթոռները և առաջնորդել են իրենց խնամքին և իրավասության հանձնված հայ ժողովրդի վավակներին:

Մեծի Տանն Կիլիկիո հայրապետները, մինչև լուսահոգի Սահակ կաթողիկոս Խապայանը, Բաբգեն կաթողիկոս Կյուլեսերյանը. Գարեգին կաթողիկոս Հովսեփյանցը, միասնականության և միության նույն ոգին ունեցել են, իրենց բովանդակ գործունեության որպես ուղեցույց և անշեղ կանոն:

Նույն ոգին է իշխել Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռների մեծագործ հայրապետների գործունեության մեջ:

Մեր Եկեղեցու ողջ պատմության մեջ չկա ոչ մի մեծ հոգևորական դեմք, որ ջատագովը և պաշտպանը եղած չլինի եկեղեցական միության և ազգային միասնության, Ս. Էջմիածնի գլխավորությամբ: Ահա այս է այն փրկարար ոգին, որը մեզ ցույց են տալիս մեր լուսաբնակ նախնիք և մեր նվիրապետական Աթոռների արժանավոր գահակալները, բոլոր ժամանակներում:

Մեր ուժը, մեր փրկությունը, մեր ապագան միության մեջ են:

Փորձել բաժան-բաժան անել Հայ Եկեղեցին, անջատվել Ս. Էջմիածնից, նշանակում է ուրանալ այն հոգևոր և ազգային առաքելությունը, որն աստվածային նախախնամությամբ տրված է Հայ Եկեղեցուն և կազմում է Հայ Եկեղեցու իսկության, կորության և կենսունակության աղբյուրը:

Գուցե մեր պատմության մեջ քիչ անգամներ մեր ժողովուրդը այնքան միասնական է եղել, ինչպես մեր օրերին, ամուր կանգնած իր հավատի և ավանդությունների պատվանդանի վրա, բարձր ու հպարտ բռնած իր ձեռքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պանծալի դրոշը, պատրաստ կուրծք տալու ամեն տեսակի դժվարությունների:

Սփռվել ենք աշխարհով մեկ, բայց միացած ենք Ս. Էջմիածնի խորհուրդով և աստվածային օրհնությամբ:

Այս բոլոր հաստատումներից հետո, մեկ համար ցավ է, որ Հայ Եկեղեցու ծոցում, վերջին

տարիներին, դրսևորվեցին հակականոնական և կենտրոնախույս ձգտումներ և կատարվեցին ոտնձգություններ Անթիլիասի Կիլիկյան Աթոռի կողմից:

Վեհափառ Հայրապետը, առաջնորդված Հայ Եկեղեցու միասնության ոգով և հայ ժողովրդի գերագույն շահերի գիտակցությամբ, քանի՞-քանի՞ անգամներ համերաշխության, հաշտության և սիրո ձեռք երկարեց Անթիլիասին, վերացնելու երկփեղկումն ու պառակտումը:

1960 թվականի ապրիլի 25 թվակիր սրբատառ կոնդակով, սիրո ողջույնով և հայրապետական օրհնությամբ, Վեհափառ Հայրապետը ուղղակի դիմում էր Անթիլիասի Տ. Տ. Զարեհ Կաթողիկոսին քաղցր հորդորով, համերաշխության և միության բարի հրավերով, վերջ տալու համար տագնապին:

1962 թվականի հունիս ամսին Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով պատվական մի ազգայինի առաջարկին և հիմք ունենալով անձամբ Զարեհ Կաթողիկոսի հատուկ գրությամբ արտահայտված պատրաստակամությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ Եվրոպայում մի հանդիպում ունենալու, Վազգեն Վեհափառը Իր 30 հունիս 1962 թվակիր հեռագրով, առաջարկեց Զարեհ Կաթողիկոսին հանդիպելու հուլիսի վերջերին Ժընևում: Վերջին պահին, սակայն, մեզ անհայտ պատճառներով, Զարեհ Կաթողիկոսը չկարողացավ այդ ճամբորդությունը կատարել, ողջագուրվելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

Վազգեն Հայրապետը, թեև մի պահ հուսախաբ, բայց այնուհետև ևս լավատեսությամբ հետապնդում էր հանդիպման և ողջագուրման գաղափարը: Ավա՜ղ, սակայն, մի քանի ամիս անց տեղի ունեցավ անսպասելի մահը Անթիլիասի Գահակալի:

Հաջորդ տարին, 1963-ի հոկտեմբերին, Վեհափառ Հայրապետի Երուսաղեմ ուխտագնացության առթիվ էր, որ նույն համերաշխասեր եղբայրական ոգին առաջնորդեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Նորին Սրբությունը Երուսաղեմ հրավիրեց Անթիլիասի Աթոռի հաջորդ Գահակալին՝ Տ. Տ. Խորեն Կաթողիկոսին և հոկտեմբերի 26-ին տեղի ունեցավ ցանկալի ողջագուրումը երկու Հայրապետների միջև, հուրախություն մեր Եկեղեցու և ի ցնծություն համայն հայ ժողովրդի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Նորին Ս. Օծությունը, այդ թվականից մինչև այսօր, թե՛ բանիվ և թե՛ գործով, աշխատել է, «արթուն կերպով հսկել», որպեսզի ողջագուրման ոգին «արմատանա մեր եկեղեցական և ազգային կյանքեն ներս և դառնա կենսաբեր և պտղառատ»:

Դժբախտաբար, սակայն, Երուսաղեմի ողջագուրման ոգու կենսագործման ճանապարհի վրա երևան եկան դժվարություններ և դրսևորվեցին երևույթներ, որոնք ժխտումն իսկ էին հոկտեմբեր 26-ի ողջագուրման ոգու:

Այնուամենայնիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, միշտ լավատես, ստեղծված դժվարությունները հարթելու համար, վերջին երկու տարիների ընթացքում Տ. Խորեն Ա Կաթողիկոսին ուղղած Իր մի շարք նամակներով, աշխատում էր վերացնել ստեղծված այդ դժվարություններն ու թյուրիմացությունները:

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի օգոստոս—սեպտեմբեր 1964 միացյալ համարում հրապարակվել են Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի միջև փոխանակված գրությունները:

Հրատարակված այդ նամակները կարևոր պաշտոնական փաստաթղթեր են, որոնք հստակորեն ցույց են տալիս Մայր Աթոռի մտահոգությունները, հոկտեմբեր 26-ից հետո պատահած դեպքերի լույսի տակ:

Երուսաղեմի ողջագուրումից անցել է երկու տարի, բայց ո՛չ մի փոփոխություն տեղի չի ունեցել Անթիլիասի եկեղեցական ղեկավարության հին մտայնության և գործելակերպի մեջ:

Հանրահայտ է, թե Մարսիլիո խնդիրը փորձաքարը հանդիսացավ Կիլիկյան Աթոռի այդ մտայնության ու գործելակերպի:

Ինչքա՜ն արդար, ինչքա՜ն քաղցր ու պայծառ հնչում է Ս. Էջմիածնի բարձունքից Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սիրո հորդորը, ուղղյալ Անթիլիասի Գահակալին. «Սիրելի և շնորհակարդ Եղբայր Մեր, եկեք աչքի լույսի պես պահպանենք այդ հրաշագործ ոգին, թույլ չտանք, որ Աստուծո այդ շնորհը հեռանա մեկմե և մեր Եկեղեցիեն: Այլապես մեր բոլոր հույսերը կրնան շիջիլ, թողլով կմեկ և արտերկրի հայ ժողովուրդը խավարի և կույր կիրքերու ալեկոծումներու մեջ: Երբե՛ք, երբե՛ք պիտի չկամենանք Մենք վերադարձը նման տխուր օրերու և ամուլ պայքարներու» (14 մարտ):

«Մենք կուզենք տակավին վերջին հույս մը սնուցանել, թե պիտի վերադառնանք Երուսաղեմի Մեր ողջագուրումի ճշմարիտ ոգիին, ոչ միայն բանիվ, այլ նաև գործով, միասնական ճիգերով վերահաստատելու համար մեր եկեղեցական կյանքին մեջ օրինականությունը, անկեղծ եղբայրությունը և շինարար գործակցությունը, առաջնորդված մեր Ս. Եկեղեցվո բազմադարյան կանոններով, ավանդություններով և ըմբռնումներով, և մեր ժողովուրդի իրավ ու տևական շահերով: Մտածե՛նք ապագայի մասին: Մտածե՛նք, թե ի՛նչպես պիտի դատե հայ ժողովուրդը մեր այսօրվան գործերը, հարյուր տարի հետո» (27 օգոստոս):

10.— ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետի գահակալության օրերին շարունակվեցին պահպանվել լավագույն քրիստոնեական եղբայրական կապեր մեր Եկեղեցու և քույր եկեղեցիների միջև, մեր նախնյաց ոգով և օրինակով:

Արդի ժամանակներում եկեղեցական կյանքը հատկանշվում է միջեկեղեցական հարաբերությունների աշխուժացման, եկեղեցիների մերձեցման, համագործակցության և հանուն ապագա եկեղեցական միության կատարված շնորհակալ և խրախուսիչ աշխատանքներով:

Հանրածանոթ է Հայ Եկեղեցու ավանդական լայնախոհությունը և հարգանքը քույր եկեղեցիների հանդեպ:

Այս մտածումներով, մեր Եկեղեցին վերջին 50—60 տարիների ընթացքում իր մասնակցությունն է բերել միջեկեղեցական հանդիպումներին, որոնք մեծ իրադարձություններ են մեր ժամանակներում քրիստոնեական եկեղեցիների կյանքում համագործակցություն, քրիստոնեական սեր և եղբայրություն հաստատելու ճանապարհի վրա:

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության տասը տարիների ընթացքում, Հայաստանյայց Եկեղեցին քույր Եկեղեցիների հետ շարունակել է պահպանել քրիստոնեական սիրո և բարեկամության սրտագին կապեր, մեր նախորդ հայրապետների ոգով:

Մեր Եկեղեցին, վերջին տասը տարիների ընթացքում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրահանգով և օրհնությամբ, մասնակցել է ԱՄՆ-ի ազգային եկեղեցիների համաժողովին (1957 թ.), Եկեղեցիների համաշխարհային խորհրդի երրորդ համագումարին Դելհիում 1961 թվականին, Համա-օրթոդոքս եկեղեցիների Հռոդոսի ժողովին 1962 թվականին, Վատիկանի 1963, 1964 և 1965 թվականների ժողովին (դիտորդներ ուղարկելով), 1964 թվականի Մոնրեալի Կարգի և հավատի չորրորդ ժողովին և 1965 թվականին արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պետերի Ադդիս-Աբեբայի համագումարին:

1962 թվականին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ, անդամակցեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդին:

Վեհափառ Հայրապետը, որպես Գլուխ և Պետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, 1965 թվականի հունիս 4 թվակիր սրբատառ Իր կոնդակով, հստակորեն արտահայտել է Հայաստանյայց Եկեղեցու դիրքը քրիստոնեական եկեղեցիների ցանկալի միության վերաբերյալ:

Հայրապետական սույն բովանդակալից կոնդակը գրվել է ճիշտ ժամանակին: Դա կարևոր փաստաթուղթ է մեր օրերում Ի պատմական եկեղեցիների միության հարցին նվիրված, իր իրավ և հեղինակավոր բանաձևումներով, որպես հարապատ վկայությունը մեր Եկեղեցու պատմական առաքելության և դերին մեր ժողովրդի կյանքում, համապատասխան միաժամանակ միութենական հարցում մեր նախնյաց սկզբունքներին և ուղղության:

Այս ոգով, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ջանք չի խնայել առավել զորացնելու համար մեր Եկեղեցու եղբայրական կապերը քույր եկեղեցիների հետ:

Առաջին հերթին պետք է գոհունակությամբ արձանագրել սերտ և ջերմագին եղբայրությունը մեր Եկեղեցու և Ռուս Պրավոսլավ Եկեղեցու միջև, որը մանավանդ վերջին տասնամյակների ընթացքում էլ ավելի ամրապնդվեց, հանուն աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության կատարված համատեղ աղոթքների և աշխատանքների ճանապարհի վրա:

Ուրախությամբ պետք է արձանագրել այստեղ պատմական այցելությունը Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Պետ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1960 թվականի հոկտեմբերի 27-ին և 1963 թվականի հոկտեմբերին:

Վեհափառ Հայրապետը, Իր հերթին, Իր գահակալության տասը տարիների ընթացքում, Մոսկվայում և Ջագորսկի ռուսական վանքում, քանիցս հյուր եղավ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին և Ռուս Պրավոսլավ Եկեղեցուն:

Նույնպիսի եղբայրական, սրտագին կապեր գոյություն ունեն Վրացական Օրթոդոքս Եկեղեցու և նրա Պետ Նորին Սրբություն Տ. Եփրեմ Բ Կաթողիկոսի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջև:

Հայ և վրացի ժողովուրդները ավելի քան 2 000 տարիների բարի դրացիության և եղբայրական համագործակցության անցյալ ունեն՝ պատմականորեն նվիրագործված, որն արտահայտվում է նաև մեր օրերին, մեր երկու քույր եկեղեցիների փոխադարձ սիրով և գործակցությամբ:

Այստեղ գոհունակությամբ պետք է արձանագրել Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասի և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի հանդիպումը 1961 թվականի հունիս ամսին Ստամբուլում, երբ մի անգամ ևս նվիրագործվում էր արևելյան երկու քույր եկեղեցիների հոգևոր միությունը ի Քրիստոս սիրով:

1962 թվականի մայիսին, Մայր Աթոռ էր այցելում Գերաշնորհ Տ. Էմիլիանոս Տիմիտիադիս

Սրբազան Եպիսկոպոսը, Տիեզերական Պատրիարքի ողջույնը բերելով Ամենայն Հայոց Հայրապետին:

Եղբայրական, սիրալիր նոր կապեր ամրապնդում են Հռոմեական Կաթոլիկ մեծ Եկեղեցուն և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն:

Մենք ուրախությունն ունեցանք ընդունելու, 1965 թվականի հունիսին Մայր Աթոռում, այցելությունը Վատիկանի քրիստոնեական միության քարտուղարության քարտուղար Գերապայծառ Տ. Հովհաննես Եպիսկոպոս Վիլլեբրանտի և Հայր Դյուպրե վարդապետի:

Նույնպիսի ուրախությամբ կուզենայինք արձանագրել այստեղ Հայ Եկեղեցու սիրալիր կապերը Ռումեն և Բուլղար Օրթոդոքս եկեղեցիների հետ: Ռումեն, բուլղար և հայ ժողովուրդները անցյալում պատմական նույն դժնդակ պայմաններում են ապրել: Հասարակաց այդ ճակատագրից է, որ ծնունդ են առել նույն բաղձանքներն ու անկեղծ փոխադարձ համակրանք, սեր և հարգանք:

1958 թվականի մայիսին, Ռումեն և Բուլղար Օրթոդոքս եկեղեցիների Պատրիարքներ Նորին Ամենապատվություն Տ. Ժուստինիանը և Նորին Ամենապատվություն Տ. Կիրիլը, Ս. Էջմիածնի կամարների տակ և աստվածաշնչական Արարատի նայվածքի ներքո, ողջագուրվում էին, մի նոր էջ բացելով եկեղեցական տարեգրությանց պատմության մեջ:

1965 թվականի հունիս—հուլիս ամիսներին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցը Բուլղարիա և Ռումինիա սրտագին առիթ էր հանդիսանում մի նոր և ավելի բարձր աստիճանի բարձրացնելու Ռումեն, Բուլղար և Հայ եկեղեցիների եղբայրական բարեկամությունը:

Բացառիկ գոհունակությամբ կցանկանայինք նաև խոսել Հայ Եկեղեցու և Անգլիկան Եկեղեցու սիրալիր և բարեկամական հարաբերությունների մասին, հարաբերություններ, որոնք սրտագին ավանդություններ են դարձել և հիմքը ապագա առավել մերձեցման և գործակցության, համատեղ աղոթքով, էկումենիկ ոգով:

Անգլիկան և Հայ եկեղեցիների հարաբերությանց պատմության մեջ կարևոր հանգրվան հանդիսացան Վեհափառ Հայրապետի այցելությունները Լոնդոն 1956, 1963 և 1965 թվականներին, և հանդիպումները Լամբեթի պալատում, Ջենտրբերիի նախկին Արքեպիսկոպոս Գերաշնորհ դոկտ. Ջեոֆֆրի Ֆիշերի և արդի Արքեպիսկոպոս Գերաշնորհ դոկտ. Մայքլ Ռեմսիի հետ:

Մայր Աթոռում, 1961 թվականին ուրախությամբ ողջունեցինք Ջենտրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Հայր Ջոն Սատերթուելտի այցելությունը:

1959 թվականի դեկտեմբերին Մայր Աթոռ էր այցելում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Վիլլամ Վիսսեր Դ Հուֆտը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը սիրալիր կապեր է պահպանում նաև ԱՄՆ-ի Եպիսկոպոսական Եկեղեցու և ԱՄՆ-ի Եկեղեցիների ազգային խորհրդի հետ:

1962 թվականի սեպտեմբերին, Մայր Աթոռում մենք հաճույքն ունեցանք ողջունելու այցելությունը գերաշնորհ Տ. Լորիստոն Լևինգըստոն Սքելֆ եպիսկոպոսի և ԱՄՆ-ի Եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ դոկտ. Միլլերի:

1961 թվականի մայիսին, Մայր Աթոռ էր այցելում Գերմանական Ֆեդերատիվ հանրապետության Հեսսեն-Նասսաու նահանգի Ավետարանական-Լութերական հաճայնքի նախագահ դոկտ. Մարտին Նիմյուլլերը:

Պատմական և նշանակալից պետք է հաշարել Վեհափառ Հայրապետի այցելությունը Քոտայա 1963 թվականի նոյեմբեր ամսին և Նորին Ս. Օծության անձամբ մասնակցությունը 1965 թվականի հունվարի 15—21-ին Ադդիս-Աբեբայում արևելյան հինգ ուղղափառ եկեղեցիների հոգևոր պետերի համաժողովին, ի գլուխ Հայաստանյայց Եկեղեցու պատվիրակության:

Արդարև, ողջունելի էր Եթովպիո քրիստոնյաներ և բարեպաշտ Կայսր Հայլե Սելասիե Ա-ի նախաձեռնությամբ և հրավերով սույն ժողովը, որպես առաջին քայլ և նախափորձ, որը նշանակալիորեն սատարեց արևելյան հինգ ուղղափառ և պատմական եկեղեցիների մերձեցման և ճանապարհ գտավ հետագա է՛լ ավելի համագործակցության համար:

1961 թվականի հուլիսին Մայր Աթոռ էր այցելում Եթովպական քույր Եկեղեցու պատվիրակությունը՝ Գերաշնորհ Տ. Պետրոս Միտրոպոլիտի գլխավորությամբ:

Այստեղ մասնավոր գուրգուրանքով և սիրով պետք է արձանագրել նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սիրալիր հարաբերությունները Մխիթարյան և հայ ավետարանական մեր եղբայրների հետ, որոնք բավմիցս վկայությունը բերել են իրենց հարգանքի և սիրո դեպի Հայ Եկեղեցու Սրբություն Սրբոց Ս. Էջմիածինը: Նորին Սրբությունը միշտ քաղցր հուզումով է հիշում Իր այցելությունները 1956 թվականին Վենետիկ, Ս. Ղազար, և 1961 թվականին Վիեննայի Մխիթարյան հայրերի վանքը:

Թո՛ղ Աստված օրհնի միջեկեղեցական կյանքի մեջ ավետարանական ոգու, քրիստոնեական եղբայրության և սիրո պտղաբերումը:

Թո՛ղ Աստված լուսավորի քրիստոնեական եկեղեցիների միության և համագործակցության ստրբ ճանապարհը, համաձայն Իր կամքի:

11.— ՀԱՄԱՔԳԱՅԻՆ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության տասը տարիների ընթացքում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ և Նորին Սրբության սրբատառ կոնդակների թելադրությամբ, համազգային շուքով և հանդիսությամբ նշվեցին հետևյալ հոբելյանները, որոնք սերտորեն կապ ունեն Հայ Եկեղեցու առաքելության, դերի, մեր ժողովրդի և մշակույթի հետ.

1. 1956 թվականի մայիսի 20-ին, Հայկական բարեգործական ընդհանուր միության հիսնամյակը:

2. 1956 թվականի դեկտեմբերի 8-ին, երջանկահիշատակ Խրիմյան Հայրիկի մահվան 50-րդ տարելիցը:

3. 1957 թվականի դեկտեմբերի 18-ին, Կոստանդնուպոլսո Ս. Խաչ Դպրեվանքի հոբելյանը:

4. 1959 թվականի հուլիսի 10-ին, լուսահոգի Տ. Եղիշե Դուրյան Պատրիարքի ծննդյան 100-ամյակը:

5. 1960 թվականի հոկտեմբերի 6-ին, լուսահոգի Տ. Գարեգին Պատրիարք Խաչատրյանի ծննդյան 80-ամյակը:

6. 1961 թվականի օգոստոսի 25-ին, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

7. 1962 թվականի մարտի 12-ին, երջանկահիշատակ Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանցի մահվան 10-րդ տարելիցը:

8. 1962 թվականի օգոստոսի 22-ին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության հաստատման 500-ամյակը:

9. 1964 թվականի մայիսի 9-ին, երջանկահիշատակ Տ. Գևորգ Զ Կաթողիկոս Չորեքչյանի մահվան 10-րդ տարելիցը:

10. 1964 թվականի օգոստոսի 17-ին, ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակին նվիրված կոնդակ:

Հոբելյանական այս հանդիսությունների առթիվ, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը հրատարակեց բացառիկ համարներ:

1965 թվականի ապրիլի 24-ին, հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես և բազմահազար ուխտավորների և ժողովրդի ներկայության, կատարեց Մայր Տաճարի հյուսիսային կողմում կառուցվելիք Նահատակաց հուշարձանի հիմնարկեքի օրհնությունը:

Իսկ երեկ, կիրակի, հոկտեմբերի 31-ին, նույնպիսի հանդիսությամբ կատարվեց հուշարձանի պաշտոնական բացումը:

Ամենայն Հայոց Հայրապետի պատմական նշանակություն ունեցող ձեռնարկներից մին պետք է համարել նաև գլխավորումը Երուսաղեմի Ս. Հարության Տաճարի նորոգության համազգային հանգանակության և այդ նպատակով հրապարակված Նորին Ս. Օծության 20 աստի 1962 թվակիր կոնդակը:

12.—ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վեհափառ Հայրապետի գահակալության տասը տարիների բեղմնավոր գործունեության մեջ առանձին տեղ էր հատկացվել խաղաղության դատին, աշխարհի խաղաղության պահպանման և ամրապնդման գործին:

Խաղաղության ի նպաստ տարված Նորին Ս Օծության աշխատանքները համապատասխանում են գերազանցապես մեր Ս. Եկեղեցու ոգուն և մեր ժողովրդի ու մեր վերածնված Մայր Հայրենիքի կենսական շահերին:

«Քրիստոնեությունը էապես սիրո և խաղաղության մի առաքելություն է մարդկային կյանքի և հասարակության մեջ, իսկ Քրիստոս Իրեքը Իշխան խաղաղության և Արեգակն արդարության: Հետևաբար, ի՞նչ կա ավելի հարապատ Քրիստոսի Եկեղեցու համար և մանավանդ Հայ Եկեղեցու և նրա Գահակալի համար, քան աշխարհի խաղաղության դատի պաշտպանությունը և ամրապնդումը բարեկամության ազգերի և պետությունների մեջ»,— վկայում է իրավամբ մեր Հայրապետը:

Անցնող տասը տարվա ընթացքում, Նորին Ս. Օծությունն Իր ձայնը բարձրացրեց միջազգային ժողովների և համագումարների բեմերից՝ Երևան, Մոսկվա, Պրագա, Հելսինկի, ի խնդիր խաղաղության, ի խնդիր կինաթափման և ի խնդիր ժողովուրդների բարեկամության:

Վեհափառ Հայրապետը 1962 թվականին պարգևատրվեց Ստոկհոլմի Խաղաղության պաշտպանության կոմիտեի կողմից «Ժոլիո Կյուրի» պատվանշանով, խաղաղության գործին ի նպաստ կատարած Իր շնորհակալ աշխատանքների համար:

13.— ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Այս հանդիսավոր նիստում, Գերագույն Հոգևոր Խորհրդի վեկույցն ավարտելուց հետո, մենք ամենայն երախտագիտությամբ և անկեղծությամբ կցանկանայինք մեր շնորհակալությունը հայտնել, Նորին Ս. Օծության գահակալության 10 տարիների գործունեության ընթացքում, մեր հայրենի հարապատ կառավարության, ինչպես նաև Սովետական Միության կառավարության և նրանց բարձրաստիճան պաշտոնատարներին, և արձանագրել դեպի Հայ Եկեղեցին և դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը նրանց ցույց տված հույժ բարյացակամ և լայնախոհ վերաբերմունքը:

Նորին Ս. Օծությունն Իր գահակալության տարիներին Իրեն կորավիգ ունեցավ Պետու-

թյան և Եկեղեցու միջև ստեղծված իրավական և գործնական, օրինական և հարգալիր փոխհարաբերությունները, որով հնարավոր եղան իրագործումները այն ծրագիրների և ձեռնարկների, որոնց մասին խոսեցինք:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը երախտագիտությամբ արձանագրում է Սովետական Միության և Հայաստանի կառավարության իմաստուն քաղաքականությունը կրոնական գործերի և մեր Եկեղեցու նկատմամբ և վստահություն է հայտնում, որ այսուհետև էլ մեր Եկեղեցին և Ս. Էջմիածինը կվայելեն նույն վերաբերմունքը և կշարունակվեն պահպանվել նույն իրական և գործնական փոխհարաբերությունները պետության և Եկեղեցու միջև:

Թո՛ղ Տերը խաղաղության, ապահովության, բարգավաճման մեջ պահի մեր Մայր Հայրենիքի հոգևոր, մշակութային, տնտեսական ու շինարարական առաջընթացը և արևշատություն պարգևի մեր հայրենի պետության ղեկավարներին, որպեսզի լիակատար հաջողությամբ պսակվեն նրանց հայրենաշեն ու ժողովրդանվեր մեծ ձեռնարկները:

14.—Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր ամփոփ գծերի մեջ ներկայացրեց Նորին Ս. Օծության տասը տարիների վաստակը:

Այս տասնամյակը լուսավոր և խոստումնալից մի հանգրվան է Նորին Ս. Օծության գործունեության ճանապարհի վրա: Մեր հիացմունքի, հարգանքի և երախտագիտության առարկան է դառնում տասը տարիների վրա պատարագված Իր կյանքը, որը ճշմարտապես եղավ պայծառ հավատի, անդուլ աշխատանքի և շինարար իրագործումների մի լուսավոր շրջան:

Այսօր, երբ ամեն տեղ հայ ժողովուրդը և Հայ Եկեղեցին, երախտագետ զգացումներով, որդիական գուրգուրանքով նշում են Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձը, մի սրտագին մաղթանք միայն ունենք, այն, որ ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռը մնա անսասան Մասիս սարի նման և հավետ շողա Ս. Լուսավորչի լույս կանթեղը:

Թո՛ղ մեր հավատավոր, շինարար և հայրենասեր Վազգեն Կաթողիկոսի սուրբ ձեռքերում հավերժորեն ծաղկի, դալարի «գաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին», ու թո՛ղ Նրա կյանքի օրերը լինեն երկար ու միշտ արևոտ և պայծառ, ի շինություն Մայր Աթոռի, ի ծաղկումն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Ամեն:

1965 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՑ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ը ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՀՐԱՎԻՐՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻՑ

Դերագույն Հոգևոր Խորհուրդ

Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան
Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյան
Պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյան
Ճարտարապետ Միքայել Մազմանյան
Դոցենտ Գրիգոր Հակոբյան

Մայր Աթոռի միաբանություն

Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան
Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյան
Տ. Գրիգոր վարդապետ Եղիայան
Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պոզապալյան
Տ. Արսեն վարդապետ Բերբերյան
Տ. Նարեկ վարդապետ Շաքարյան
Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյան
Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյան
Տ. Հակոբ քահանա Հակոբյան
Տ. Հովհաննես քահանա Մարուքյան
Տ. Նշան քահանա Բեյլերյան

Արարատյան թեմ

Տ. Վահան եպիսկոպոս Տերյան
Տ. Սարգիս քահանա Անդրեասյան
Սուրեն Արևշատյան
Զավեն Աղասյան
Պողոս Պողոսյան

Շիրակի թեմ

Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյան
Տ. Արամ քահանա Բոյաջյան
Տ. Վազգեն քահանա Ղարագյոզյան
Հովհաննես Բեյթեքյան

Վրաստանի թեմ

Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան
Տ. Խորեն վարդապետ Էլչուջյան (Ախալքալակ)
Տ. Հովհաննես քահանա Դանիելյան (Ախալցխա)
Սուրեն Ավյան
Սամվել Խաչանյան

Բաֆվի թեմ
Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյան
Սարգիս Բաղդասարյան
Արզար Միրզոյան

Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի թեմ
Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյան
Գևորգ Գևորգյան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարք Երուսաղեմի
Տ. Շահե եպիսկոպոս Աճեմյան (Երուսաղեմ)
Տ. Տաճատ արքեպիսկոպոս Ուրֆալյան (Կաթողիկոսություն Տանն Կիլիկիո)

Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակություն
Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան (Փարիզ)
Սեդրակ Քարյան (Փարիզ)
Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյան (Մարսել)
Տ. Դավիթ ծայրագույն վարդապետ Սահակյան (Լիոն)

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց առևելյան թեմ
Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան
Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյան
Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Գազանճյան
Տեր և Տիկին Արա Ավագյան

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Կալիֆոռնիայի թեմ
Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյան

Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակություն
Տ. Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյան
Գառնիկ Պազարյան (Բրազիլիա)
Հովսեփ Ճերեճյան (Բուենոս-Այրես)

Եգիպտոսի թեմ
Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան
Տ. Զավեն եպիսկոպոս Զինջինյան
Հայկազուն Քյուրքճյան

Իրանի թեմ
Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան
Նշան Հակոբյան
Դոկտ. Հասրաթ Միքայելյան
Լևոն Շահոյան
Սարգիս Զուլումյան

Ռումինիայի և Բուլղարիայի թեմ
Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյան
Ալեքսանդր Սիլվյան (Բուխարեստ)
Օննիկ Ասլանյան (Սոֆիա)

Անգլիա
Տեր և տիկին Սարգիս Քյուրքճյան
Հայկ Գալստյան
Տեր և տիկին Խաչիկ Մթրպյան

Եթովպիայի հայոց հոգևոր հովվություն
Տ. Կորյուն ծայրագույն վարդապետ Մանվելյան
Սամվել Պեհլեսնիլյան
Մարտիրոս Տարագճյան
Լևոն Երզնկացյան

Միլանոյի հայոց հոգևոր հովվություն
Ստեփան Սրապյան

Վիեննայի հայոց հոգևոր հովվություն
Տ. Մեսրոպ ծայրագույն վարդապետ Գրիգորյան

Ծայրագույն Առևելք

Ավստրալիա
Տ. Արամայիս ավագ քահանա Միրզայան
Երիցուհի Քնարիկ Միրզայան

Հնդկաստան
Սամ Ավետիսյան
Ժոզեֆ Արաթուն

ՀՅՈՒՐ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐ

Վրաց Եկեղեցի
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Տ. Եփրեմ Բ
Տ. Իլյա եպիսկոպոս
Տ. Սառբա ավագ քահանա

Լիբանանի Հայ Կաթողիկե Պատրիարքություն
Հայ Կաթողիկե Պատրիարք Տ. Իգնատիոս-Պետրոս Պաթանյան (Բեյրութ)
Տ. Մեսրոպ եպիսկոպոս Թերզյան (Բեյրութ)
Հ. Ներսես վարդապետ Սեթյան (Հռոմ)

Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միություն
Նախագահ՝ Վերապատվելի Հովհաննես Ահարոնյան (Բեյրութ)

Ռուս Պրավոսլավ եկեղեցի
Կիևի և Գալիցիայի Միտրոպոլիտ Իոսաֆ (Կիև)
Զագորսկի հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Ֆիլարետ եպիսկոպոս (Մոսկվա)
Տ. Վլադիմիր վարդապետ (Մոսկվա)
Մոսկվայի Ռուսաց Պատրիարքարանի քարտուղարներ Կորմանով, Կուտյեզով և Մանկով (Մոսկվա)

Եթովպական եկեղեցի
Կոնդարի Միտրոպոլիտ Արունա Պետրոս (Ադդիս-Աբեբա)

Մոնակոյի Լատին Կաթոլիկ եկեղեցի
Ժան Ռյուպ եպիսկոպոս (Մոնակո)

Հայ եկեղեցու նյուր եպիսկոպոսներ, վարդապետներ և քահանաներ

Տ. Շավարշ եպիսկոպոս Գույումճյան (Դամասկոս)

Տ. Գնել եպիսկոպոս Ճերեճյան (Բեյրութ)

Տ. Հուսիկ ծայրագույն վարդապետ Բազդասյան (Իսրայել)

Տ. Կարապետ քահանա Անդրեասյան (Երուսաղեմ)

Տ. Գարեգին քահանա Քիրազյան (Հալեպ)

Տ. Մեսրոպ քահանա Բենլիյան (Սոֆիա)

Մխիթարյան հայրեր

Տ. Սիմեոն վարդապետ Տեր-Պողոսյան (Վիեննա)

Տ. Ներսես վարդապետ Տեր-Ներսեսյան (Վենետիկ)

Տ. Սամվել վարդապետ (Վենետիկ)

Երևանի Հայ Ավետարանական եկեղեցի

Վերապատվելի Սարգիս Կոնսուլյան

Աշխարհական հյուրեր Սփյուռքից

Տեր և տիկին Հարի Բրրտ Մովսեսյան (ԱՄՆ), պրոֆ. Մանասե Սեակ (ԱՄՆ), Հ. ճ. Սիրունի (Բուխարեստ), Անդրանիկ Սառուք յան (Բեյրութ), Տեր և տիկին Հակոբ Դավիթ յան (Բեյրութ), Սամվել Թումայան (ԱՄՆ), Տեր և տիկին Սուրեն և Շաքե Գալենտերյա (Հալեպ), Պիտեր Ալեքսի (Անգլիա), տիկի Մատաթ (Անգլիա), տեր և տիկին Գ. Թահդ (Անգլիա), Գեորգ Ջաթալպաշյան (Բեյրութ Ավագ Ջեքչենյան (Դամասկոս), Հակոբ Գա յան (Բեյրութ), Վահան Էլմայան (Բեյ ռութ), Համազասպ Մարտին (Թեհրան), Ե դիսաբեթ մայրապետ Մոմճյան (Երուսա ղեմ), Պայծառ մայրապետ Գույումճյան (Ե ռուսաղեմ)։

Վեհափառ Հայրապետի գահակալության տասնամյա տարեդարձի հանդիսություններին Մայր Հայրենիքից և ներքին թեմերից հրավիրվել էին նաև Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնախումբը, մտավորականներ, արվեստագետներ, «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեություն։

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

1965 թվականի հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 9-ը պատմական ու հիշարժան օրեր հանդիսացան մեր ազգային-եկեղեցական ներկա տարեգրության մեջ և մի խանդավառ հանգրվան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի եկեղեցաշեն ու հայրենանվեր տասնամյա գործունեության ճանապարհի վրա։

1955 թվականի հոկտեմբերին, Ս. Լուսավորչի պատմական ու համազգային նախամեծար Աթոռի ղեկավարության էր կանչվում Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

Այդ նշանակալից գահակալությունից անցել են տասը տարիներ, որոնց ընթացքում կատարված գործերը ցույց են տվել, որ հանձին Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի, Հայաստանյայց Առաքելական եկեղեցին ունի իր ոգեշնչված և շինարար հայրապետներից մեկին, որն իր վրա է կրել հայրապետական ծանր լուծը, պարտքի և առաքելության խորին գիտակցությամբ դեպի եկեղեցին, ազգն ու հայրենիքը։

Եվ ահա երախտագետ հայ ժողովուրդը սրտագին զգացմունքներով նշում է իր Հայրապետի գահակալության տասնամյակը։

Մայր Աթոռ են ժամանել օտար հոգևոր պետեր, Հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալներ և ներկայացուցիչներ, թեմական առաջնորդներ և պատգամավորներ, հյուրեր, մամուլի և ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Մայր Աթոռում կատարվեցին հոբելյանական հանդիսություններ, որոնք անջնջելի կերպով դրոշմված կմնան սրտերում և հիշողությունների մեջ։

Այս ուրախ և բարեբաստիկ առթիվ, Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին էին ժամանել Սփյուռքից և ներքին թեմերից ազգի և եկեղեցու շուրջ 150 հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ և հյուրեր։

Ժամանում պատգամավորների և հյուրերի

Հոկտեմբերի 28—30, հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ, *ժամանում են հյուրերն ու պատգամավորները։*

Հոկտեմբերի 29-ին, *ուրբաթ, երեկոյան ժամը 6-ին, Մայր Աթոռ է ժամանում Հայ Կաթողիկե Պատրիարք Ամենապատիվ Տ. Իգնատիոս-Պետրոս Պաթանյանը, ընկերակցությամբ գերապայծառ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Թերզյանի և Հ. Միքայել վարդապետ Սնթյանի։*

Երևանի օդանավակայանում Նորին Ամենապատվությանը դիմավորում են եպիսկոպոսական դասը, Մայր Աթոռի միաբանության անդամները, վանքի պաշտոնեությունը և Երևանի քահանայից դասը։

Բարի գալստյան և ողջույնի սիրալիր խոսքերից հետո, ավտոմեքենաների շարասյունը ուղղվում է դեպի Էջմիածին։

Մայրավանքի արևելյան մեծ դարբասի մուտքի առաջ, զանգերի ուրախ զողանջի տակ, եկեղեցական թափորով, «Հրաշափառ»-ով, Նորին Ամենապատվություն Տ. Իգնատիոս Պետրոս Պատրիարքը առաջնորդվում է Մայր Տաճար։

Իշման Ս. Սեղանի առաջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, շրջապատված եպիսկոպոսներով և վարդապետներով, ողջունում է Նորին Ամենապատվության և նրա շքախմբի անդամների ժամանումը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, սրտագին բարի գալուստ մաղթելով։

Նորին Ամենապատվությունն իր շնորհակալությունն ու երախտագիտությունն է հայտնում Հայոց Հայրապետին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելելու համար Իրեն հղված հայրապետական հրավերի առթիվ, Իր ուրախությունը, որ Աստուծո օգնականությամբ ժամանել է Մայր Աթոռ, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կամարների տակ, ողջունելու Հայոց Հայրապետին։

Իշման Ս. Սեղանի առաջ, իրենց ուխտն ու աղոթքն են կատարում Նորին Ամենապատվությունը և շքախմբի անդամները։

Այնուհետև երկու հոգևոր պետերը, եկեղեցական թափորով, առաջնորդվում են Վեհարան, ուր մասնավոր և առանձին հարկաբաժիններ են հատկացվում հարգելի հյուրերին։

Հոկտեմբերի 29-ին, ուրբաթ երեկոյան ավելի ուշ, ժամանում է Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Արքեպիսկոպոսը, ընկերակցությամբ Տ. Թորգոմ, Տ. Գնել եպիսկոպոսների, Տ. Շահե, Տ. Զավեն և Տ. Հակոբ ծայրագույն վարդապետների։

Նույն ինքնաթիռով ժամանում են նաև Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն Բասիլիոս Բ-ի ներկայացուցիչ, Կոնդարի Միտրոպոլիտ Արունա Պետրոսը և Մոնակոյի Լատին Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոս, Նորին Գերապատվություն Ժան Ռուպը։

Երևանի օդանավակայանում Նորին Ամենապատվության և նրա շքախմբի անդամներին և մյուս հյուրերին ջերմորեն դիմավորում են եպիսկոպոսական դասը, Մայր Աթոռի միաբանության անդամները և քահանայից խումբը։

Նորին Ամենապատվությունն առաջնորդվում է Երևան, հայրապետական վիլլան, իր շքախմբի անդամներով։

Հոկտեմբերի 30-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11-ին, Երուսաղեմի հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Եղիշե Արքեպիսկոպոսը, եկեղեցական թափորով, «Հրաշափառ»-ով մուտք է գործում Մայր Տաճար ուր Իշման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետը, շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով, սիրով և խորունկ ուրախությամբ ողջունում է Սրբազան Պատրիարքի Հոր կրկին ժամանումը Մայր Աթոռ, շքախմբի անդամների հետ։

Նորին Ամենապատվությունն իր պատասխան խոսքում իր զգացված շնորհակալությունն է հայտնում կրկին անգամ Ս. Էջմիածին ուխտի եկած լինելու համար, Նորին Ս. Օծության գահակալության տասնամյակի երջանիկ առթիվ։

Իշման Ս. Սեղանի առաջ իրենց ուխտն ու աղոթքն են կատարում Սրբազան Պատրիարք Հայրը, Տ. Գնել և Տ. Թորգոմ եպիսկոպոսները, Տ. Շահե, Տ. Զավեն և Տ. Հակոբ ծայրագույն վարդապետները։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, Սրբազան Պատրիարքը, եպիսկոպոսների և հոգևորականների դասը ուղղվում են Վեհարան։

Հոկտեմբերի 30-ին, շաբաթ երեկոյան, Մայր Աթոռ է ժամանում նաև Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների միության նախագահ վերապատվելի Հովհաննես Ահարոնյանը, որը շնորհորեն դիմավորվում է Երևանի օդանավակայանում, հանուն Վեհափառ Հայրապետի։

Հոկտեմբերի 31-ին, շաբաթ, առավոտյան ժամը 10-ին, Երևանի երկաթուղային կայարան է ժամանում Համայնք Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Եփրեմ Բ-ը, ընկերակցությամբ Տ. Իլյա եպիսկոպոսի և Տ. Սաոբա ավագ քահանայի։

Վեհափառ Հայրապետը, Երևանի երկաթուղային կայարանում, դիմավորում և բարի գալուստ է մաղթում վրաց եղբայրական ժողովրդի Հոգևոր Պետին, շրջապատված ներքին թեմերի առաջնորդներով, Մայր Աթոռի միաբանության անդամներով և թեմական խորհուրդների ներկայացուցիչներով։

Հոգևոր պետերին՝ Վրաց Կաթողիկոսին, կաթողիկե հայոց Պատրիարքին և Երուսաղեմի հայոց Պատրիարքին դիմավորում և ողջունում է նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Ժամը 1-ին, Համայնք Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Եփրեմ Բ-ը, հանդիսավորապես, «Հրաշափառ»-ով մուտք է գործում Մայր Տաճար, ուր, Իշման Ս. Սեղանի



ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱ ԵՂՈՂ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ, ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԽՄԲԱՆԿԱՐԸ։

առաջ, նրան ողջունում է Հայոց Հայրապետը բարի գալստյան սրտագին խոսքերով։

Նորին Սրբություն Տ. Սիրեմ Բ Կաթողիկոսը պատասխան ճառում իր ուրախությունն է հայտնում, որ մի անգամ ևս ինքը առիթն է ունենում ողջագուրվելու Հայոց սիրելի Հայրապետի հետ և միասին աղոթելու Ս. Էջմիածնի կամարների տակ, Նորին Ս. Օծության գահակալության 10-րդ տարեդարձի առիթով։

Այնուհետև երկու հայրապետները առաջնորդվում են Վեհարան։

Ժամը 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պատվիրակությունը, հանուն Համայն Ռուսաստանի և Մոսկվայի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի ներկա լինելու տասնամյակի հանդիսություններին։

Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պատվիրակությանը գլխավորում է Կիևի և Գալիցիայի Միտրոպոլիտ Խոսաֆը։ Պատվիրակության կազմում են Զագորսկի ռուսական հոգևոր ճեմարանի ռեկտոր Տ. Ֆիլարետ եպիսկոպոսը, Վլադիմիր վարդապետը և Ռուսաց Պատրիարքարանի քարտուղարներ Խորմանովը, Կուտյեզովը և Մանկովը։

Պատգամավորությունը Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առաջ իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, հանդիսավորությամբ ընդունվում է Վեհարանում Հայոց Հայրապետի կողմից։

Հոկտեմբերի 31-ին, շաբաթ, երեկոյան ժամը 6-ին, Մայր Աթոռ են ժամանում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչներ՝ Լիբանանի հայոց բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Տանատ արքեպիսկոպոս Ուրֆալյանը և պր. Գևորգ Զաքարիաշյանը, որոնք նույնպես Մայր Տաճարում իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, ընդունվում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից Վեհարանում։

Նորին Ս. Օծությունը հոկտեմբերի 28—30-ին Վեհարանում բարեհաճում է ընդունել ժամանած բոլոր հոգևորական և աշխարհական պատգամավորներին և հյուրերին։

Շաբաթ երեկոյան, ժամը 5-ին, բոլոր հոգևոր պետերը, պատգամավորներն ու հյուրերը, ներկա են լինում Մայր Տաճարում կիրակամտի հանդիսավոր արարողության։

Հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում

Հոկտեմբերի 31-ին, կիրակի, մեծահանդես շուքով և համազգային խանդավառ մթնոլորտում, նշվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասնամյակը Մայր Աթոռում։

Ծնության և փառքի օր է Մայր Աթոռի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար։

Մայրավանքի շրջակայքը, Մայր Տաճարն ու այգիները լցվել են ուխտավորական խուռներամ բազմությամբ։

Երևանից ժամանում է ավտոմեքենաների ձիգ շարանը, բերելով պատգամավորներին և հյուրերին։

Տոնական ու հաղթական հնչում են Մայր Տաճարի ավետավոր զանգերը։

Արարատյան դաշտի աշնանային բուրումնավետ, ոսկի օրերից մեկն է։

Անամպ երկինքը, պայծառ բնությունն էլ ուրախ են Հայ Եկեղեցու տոնի առթիվ։

Ժամը 11-ին, Վեհարանում զգեստավորված, Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Եղիշե Արքեպիսկոպոսը, եկեղեցական թափորով, հանդիսավորապես առաջնորդվում է Մայր Տաճար՝ մատուցելու օրվա մեծահանդես սուրբ պատարագը։

Աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել եկեղեցական և աշխարհական պատգամավորներն ու հյուրերը։

Ժամը 11.15-ին սկսվում է սուրբ պատարագը։ Ս. Սեղանին սպասարկում են վարդապետներ, քահանա հայրեր և սարկավագների խումբը։

Կոմիտասյան քառաձայն պատարագի երգեցողությունը կատարում է Մայր Տաճարի երգեցիկ խումբը, վեհ ու դաշնավոր, խմբավար Խորեն Հակոբյանի շնորհալի ղեկավարությամբ։

Ամեն կողմ լույս, խունկ ու խորհուրդ։

Ժամը 12-ին, վեհափառ Հայրապետը, շրջապատված բոլոր հոգևոր պետերով, եպիսկոպոսական դասով, Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճար, եկեղեցական թափորով, ժողովրդական խուռներամ բազմության խանդավառ արտահայտությունների ներքո։

Հայ հավատացյալ ժողովուրդն ու ուխտավորները չերմորեն ողջունում են Հայոց Հայրապետի և քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականության հանդիսավոր անցքը դեպի Մայր Տաճար։

«Զի՞ բարի, զի՞ վայելուչ, զի բնակեսցեն եղբարք ի միասին»։

Արդարև, ավելի քան սրտառուչ, թելադրական է ու պատմական օրը, հոբելյանական հանդիսությունների առիթով, Մայր Աթոռի կամարների տակ հանդես եկած քրիստոնեական էկումենիկ ոգին, երբ Վրաց, Ռուս, Կաթոլիկ, Եթովպական, Հայ Եկեղեցու և հայ ավետարանական համայքների հոգևոր պետերը, բարձրաստիճան հոգևորակա-

Հոկտեմբերի 31-ին, Մայր Տաճարում, Ռոգևոր պետերն ու բարձրաստիճան Ռոգևորականները սուրբ պատարագի պահին:

նությունն ու հավատացյալները միատեղ են աղոթում հանուն եղբայրության և համագործակցության, Քրիստոսի փառքի համար, Ավետարանի լույսի մեջ և Քրիստոսի սիրով առյուն։

Վեհափառ Հայրապետը, բոլոր հոգևոր պետերը, իրենց պաշտոնի և դիրքի համաձայն, Մայր Տաճարում իրենց աթոռներն են գրավում։

Հանդիսավորությամբ, երկյուղած մթնոլորտում շարունակվում է սուրբ պատարագը մինչև «Հայր մեր»։

Քարոզի պահն է։

Նորին Ամենապատվություն պատարագիչ Պատրիարք Սրբազան Հայրը խոսում է ներշնչումով հետևյալ քարոզը, «Զի այսպիսի իսկ վայել էր մեզ քահանայապետ, սուրբ, անմեղ» (Եբր. է 26) բնաբանով.

«Հավաքված ենք վերստին այս Տաճարին մեջ, որուն Աթոռին վրա հարյուրավոր հայրապետներ են բազմեր, և որուն Սեղանին առջև բազմաթիվ քահանայապետներ, իրենց ժողովրդին մարմինը իբրև նշխար և արյունը իբրև գինի վերընծայեր են Աստուծո, եկեղեցվո և հայրենիքի զույգ ու սրբազան սկիհներու մեջեն։ Եկած ենք տոնախմբելու գահակալության տասնամյակը Նորին Ս. Օծության Վազգեն Ա Կաթողիկոսի, Լուսավորչի Աթոռի այժմու Վերադիտողին, որ արժանիքի կոթողի մը պես կկանգնի, և որուն նայելով, կրնանք հայտարարել առաքյալին հետ, թե մեզի ալ այսպիսի քահանայապետ մը կվայելեր, սուրբ, անմեղ, անարատ, նվիրված հոգիներու աղնվացման և մեր հոգևոր ժառանգության պաշտպանության։

Եկած ենք բոլորս և մեզի հետ ամբողջ հայ ժողովուրդը, հանդիսավոր գիտակցությամբ, որուն խորքը հիացում կկազմե, մեր սիրն ու զմայլանքը բերելու այն մեծ եկեղեցականին, որ ոչ միայն մեր, այլ բովանդակ Քրիստոնեական եկեղեցվո մեծարելի դեմքերեն մին կրնա նկատվիլ, ապահով հպարտությամբ։

Լուսավորչի Գահուն վրա Իր տասը ատոք տարիներու ծառայությունը կոչումներու ամենեն ազնվագույններեն մեկն է, շնորհիվ Իր անքասիր նկարագրի, համոզումի ծանրության, արդյունաշատ գործունեության, իմացական շնորհներու, ինչպես նաև Իր անձին ներշնչած քաղցր պատկառանքին, որոնք բովանդակ հայ ժողովուրդի գորովի առարկան և մտամուծներու կեդրոնը ըրած են զինքը։

Իրապես անոնք, որ մոտեն կճանչնային Նորին Ս. Օծությունը Իր իղձերու անկեղծությանը մեջ և Մայր Աթոռը իր կարիքներու խորությամբ, զգացին և կզգան, թե Իր ընտրությամբ նոր թվականի մը առավոտը կծագեր Մայր Աթոռի երկնքին ներքև։

Հոկտեմբերի 31-ին, կիրակի, Մայր Տաճարում, սուրբ պատարագի ժամին:

Հայության լավագույն օրերը կղուգադիպին միշտ իր բարոյական մեծության թվականներուն։ Այդ թվականներեն յուրաքանչյուրին վերև կսավառնի դեմքն ու անունը հավատքի մարդոց, որոնց մեջ միայն կրնար ապրիլ «Աստուծո Հոգին», առաջնորդությամբ ճշմարիտ ուժի։ Այդ ոգիեն գեղեցիկ բաժին մը կա Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետին մեջ։

Առանց այդ ոգիին, ամեն օր մարդուն մեջ ապրող կենդանի տեսիլքին, մենք թմրածներ ենք այս կյանքի մեջ, ավելին՝ պատրանքի զոհեր։ Առանց այդ կենդանի ջունլին, մեր խոսքը անզսպանակ կգակներե թափած բարբանջանք է, մեր սիրտը մաղձամաշկ, մեր մարմինը խանձած ոսկրակույտ, իսկ մեր գործը՝ անիմաստ շարժումներու տեսարան մը միայն։ Իզուր չէ ըսված, թե մարդերու ճակատագիրը վարել կարենալու համար, պետք է Աստուծմե կանչված ըլլան մարդիկ և ոչ թե իրենց անձնական փափագներեն և բերումներեն հրմշտկված։

Գործը, զոր տասը տարիներ առաջ ստանձնեց Նորին Ս. Օծությունը, դյուրին չէր։ Բոլորս ալ փոքրիշատե գիտենք, թե Աթոռները գահեր ըլլալե ավելի խալեր են։ Դժվարություններ շատ հաճախ այնքան մեծ են, որ հրաշքներու պետք կա զանոնք դիմակալելու և նվաճելու համար։ Համայն ազգին վստահությունը առաջին մեկ օրեն այնքան մեծ եղավ իր սիրելի Հայրապետին նկատմամբ, որ սիրով պահանջեց Նորին Ս. Օծությենեն գործելու այդ հրաշքը։ Մայր Տաճարի նորոգությունը, վեհարանի բարեզարդումը, Հոգևոր Ժեմարանին և տպարանին տրված նոր թափը և Մայր Աթոռի տնտեսության վերականգնումն ու հանձանձումը,— հիշելով միայն շատ կարևորները,— առէջները եղան այդ հրաշքի թեզանին։

Տակավին, Հովվապետի գավազանը առած, շրջեցավ Ան աշխարհե աշխարհ և գաղութե գաղութ, օրհնելով, սփոփելով և հրահանգելով բոլորը Ս. Էջմիածնի գաղափարով և վերածնող Մայր Հայրենիքի զգացումով։ Նորին Ս. Օծության յուրաքանչյուր ճամբորդությունը Սփյուռքի մեր գաղութներուն, միայն տարբեր կամ լրատար կոունկի մը լուն չէ եղած, այլ մեծ առիթներ համախմբումի և գերագույն ավետումը հայրենիքի գաղափարին և սիրույն։ Ամեն տեղ Նորին Ս. Օծությունը հայրենիքի և Ս. Էջմիածնի զույգ զգացումներուն ոսկի գետն է հոսեցուցեր արտասահմանի մշուշներուն մեջ նստած իր պանդուխտ զավակներու հոգիներուն մեջեն։ Ան այդ զույգ սրբություններուն կենդանի խոսքն է եղած ամենուրեք, բայց մանավանդ անուշ պատկերը, իր անձին շնորհներովը արտափայլ։

Մարդեր կան, որ կպատկանին ժամանակին և մարդեր, որոնք կպատկանին ճշմարտության։ Մեծ մարդը ան է, որ կրնա պատկանիլ թե՛ ճշմարտության և թե՛ ժամանակին։ Վազգեն Ա Կաթողիկոսը թե՛ ճշմարտության և թե՛ ժամանակի մարդը եղավ։ Բարձրորեն կարևորեց այն ճշմարտությունները, որոնք մեր ժողովուրդին, մեր եկեղեցիին և մեր անցյալին են, ապա գիտցավ լուսավորել զանոնք ժամանակի պատշաճ գործունեությամբ, որ իմաստուն տնտեսությունն է իրերու։ Գիտցավ տալ, մեկ խոսքով, «զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»։

Դժվար է անշուշտ արժեքներու համեմատական կշիռը կազմել, սակայն մարդիկ մեծ են համաձայն իրենց ձգտումներուն։ Անոնք, որ կխիզախեն իրենց անձին համար, իրենց անձը միայն կարժեն։ Անոնք, որ կպայքարին ի խնդիր աշխարհի բարիքներուն, աշխարհը կգտնեն լոկ, իսկ անոնք, որ կձգտին իրենցմե անդին, անոնք ամենեն մեծերն են մարդոց որդիներեն, որովհետև ով որ կհավատա կարելիին, իմաստուն է, իսկ ով որ կհավատա հավիտենական արժեքներուն, մեծագույնն է։

Մակդիրներ կան, զորս դժվար է զատել մարդեն։ Ժողովուրդն է, որ զանոնք կուտա և պատմությունը կարձանագրե։ Ինչ որ ժողովուրդը կուտա, ան ճշմարիտ է և անկեղծ, իբրև քաղցրագույն տուրքը հոգիին։ Արտասահմանի մեր ժողովուրդը Վազգեն Կաթողիկոսը տիտղոսած է «սուրբ» մակդիրով. «Սուրբի պես մարդ է»։ Հորդանանի արաբ ժողովուրդը, Նորին Ս. Օծության Հորդանան այցելության առիթով, Անոր տվավ «հրեշտակ» մակդիրը։ Ժողովուրդները կուտան այդ տիտղոսները, որովհետև ենթակային աչքին խորը և դեմքին վրա կտեսնեն լույսեր, տեսիլքներ՝ աշխարհեն ծաքած։

Վեհափա՛ռ Տեր, թույլ տվեք, որ հանուն Հայաստանյայց Եկեղեցվո լրության՝ պաշտոնեության և ժողովուրդին, շնորհավորեմ Ձեր գահակալության տասնամյակը, մաղթելով ի սրտե, որ աստվածային օրհնությամբ տակավին երկար տարիներ Ձեզ վայելել կարենանք Լուսավորչի Գահուն վրա, իբրև իմաստուն լուսարարը այդ սուրբ կանթեղին և ժիր մատռվակը հոգիներուն։ Ապրիք երկար և տեսնեք իրականացումը մեր ժողովուրդի դարավոր երազին, որուն տաճարակերտներեն մեկն եք։

Ողորմած Աստված մեր հայրերուն թող անսասան պահե Լուսավորչի Գահը, ինչպես նաև մեր հայրենի Սովետական Աշխարհը։ Իր վրայեն չանցնի երբեք սև թևը չարիքին, և իր կողերուն չծանրանա բռունցքը բռնավորին։ Թող չսպառի իր հողերեն հայ բազուկը շինարար և մեր ժողովուրդի սրտեն՝ ուրախությունը մշտնջենական, որպեսզի կարենանք ըսել, հավատքով ու իրավունքով. «Ովսաննա՜, նորանորոգ յարուցելոյն»։

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեան»։

Ամեն»։

Քարոզի ավարտին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հանդիսավորությամբ և մասնակցությամբ բոլոր հոգևոր պետերի ու բարձրաստիճան հոգևորականության, Ավագ Սեղանի առաջի կատարվում է հայրապետական մաղթանք։

Հոգեհանգիստ

Սուրբ պատարագը նույն հանդիսությամբ շարունակվում է մինչև Արձակման Ավետարանը։

Այնուհետև, Ավագ Ս. Սեղանի բեմի առաջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և բոլոր հոգևոր պետերի և բարձրաստիճան հոգևորականների մասնակցությամբ, կատարվում է հոգեհանգստյան հատուկ պաշտոն ապրիլյան եղեռնի մեր նահատակների խնկելի հիշատակի համար։

Մայր Տաճարի երգեցիկ խմբի մենեղջուեի Լուսինե Զաքարյանի «Յորժամ»-ը, կատարված ապրումով և բարձր արվեստով, տպավորում է բոլոր ներկաներին, խորին հուզմունքներ ստեղծելով ներկաների սրտերի և հոգիների մեջ, հիշատակվելիք մեր նահատակների։

Ս. Ավետարանի ընթերցումից հետո, Մայր Տաճարի կամարների տակ, հանդիսավոր ու վեհ հնչում է «Գթա՛, Տէ՛ր», հոգեհանգստյան շարականը, տաղանդավոր երգահան Ալեքսանդր Հարությունյանի մշակումով, ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակին նվիրված։

Այնուհետև պատարագիչ սրբազանն արտասանում է «Քրիստոս Որդի Աստուծոյ» աղոթքը, ոգեկոչելով հայոց մեծ եղեռնին զոհ գնացած շուրջ 2 միլիոն հայ նահատակներին, «որք կատարեցան ի մեծի պատերազմին, վասն կրօնից և վասն հայրենեաց»։

Ապրիլյան եղեռնի Նահատակների ճուշարձանի բացումը

Հոգեհանգստյան արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ հոգևոր պետերի, բարձրաստիճան հոգևորականների, եկեղեցական դասի, պատգամա-



ԱՐԼՈՒՔԻ ԵՎ ՍՈՍԿԻ ՆԱԽԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ Ա. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 31-ին, կիրակի, Ռոգեռանգիստ Նահատակաց Հուշարձանի առաջ։

վորների և հյուրերի, առաջնորդվում է Մայր Տաճարի հյուսիսային կողմը կառուցված Նահատակաց Հուշարձանի բացումը կատարելու։

Նահատակաց հուշարձանը խալքարերի համախումբ մի կառույց է, խորհրդանիշը մեր վշտի ու աղոթքի։ Վերասլաց խալքարերի վրա թևատարած արծիվը հայկական՝ խորհրդանիշը մոխիրներից հարություն առած մեր ժողովրդի և մեր ազգային վերածնության։

Հուշարձանի նախագծի հեղինակն է տաղանդավոր ճարտարապետ Ռաֆայել Խաչատրյանը։

Եղեռնից հիսուն տարի հետո, հայրենի հողը իր ծոցում հավերժացնում է հիշատակը իր նահատակ զավակների, կանգնեցնելով այս փառավոր հուշարձանը, Մայր Աթոռի հովանու տակ։

Հուշարձանի քարե պատվանդանի վրա գրվել է. «Հաչէար աղոթքի և ուխտի, ի հիշատակ 1915 թվի ապրիլյան եղեռնի հայ նահատակների։ Կառուցված 1965 թվին»։

Իսկ հուշարձանի երկրորդ երեսի վրա փորագրվել են աղեղնաձև քարե վահանի մեջ, մեր ժողովրդի արիությունը և ազատագրական պայքարի ոգին արտահայտող հերոս քաղաքների և բնակավայրերի՝ Վանի, Մուսա լեռան, Շապին Գարահիսարի, Հաճընի, Մարաշի, Եդեսիայի, Զեյթունի, Սասունի և Սարդարապատի անունները։

Ժամը 2.30-ն է։

Նորակառույց Նահատակաց հուշարձանը շրջապատված է հայ մարդկանցով, հայ սրտերով։

Հուշարձանը ծածկված է սպիտակ կտավով։ Վեհափառ Հայրապետը կատարում է պաշտոնական բացումը և բոլորի հայացքի առաջ կոթողվում է հուշարձանն իր վեհությամբ։

Բոլորի հիշողության մեջ մի անգամ ևս կենդանանում է մեր ժողովրդի նահատակ զավակների, նահատակ մտավորականների, արվեստագետների, հոգևորականների համբուրելի հիշատակը։

Արցունք կա բոլորի աչքերի մեջ։

Ամենապատիվ Տ. Եղիշե Պատրիարքն օրհնում է Նահատակաց հուշարձանը:

Այո՛, չեն մեռել մեր նահատակները, ապրում են նրանք մեզ հետ, մեր այսօրվա վերածնված կյանքի մեջ, հայրենի հողի վրա։

Եվ մտածում է յուրաքանչյուր հայ մարդ, որ ներկա է հուշարձանի բացման, որ 45 տարի առաջ, ընդմիշտ վերացան եղեռնը, վիշտը, որբությունը, սկիզբ դրվեց մեր ազգային ճշմարիտ վերածննդյան և կատարվեց մեր նահատակների իղձը, երազը։

Հայ ժողովուրդը տիրացավ իր հողին, ազատության, ստեղծեց հայրենիք, պետականություն, ապահով ու խաղաղ կյանք։

Իզուր չի անցել թափված արյունը. «Ե՛կ, շունչ, ի չորից ճողմոց, և փչեա՛ ի մեռեալս յայսոսիկ և կեցցեն»։ Եւ եմուտ ի նոսա շունչն, և եղեն կենդանի, և կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց ժողովուրդ բազում յո՛յժ յո՛յժ»։

Մեր օրերում էլ կրկնվեց Եզեկիելյան տեսիլքը, հայ ժողովուրդը գիտեցավ իր նահատակությունը վերածել հաղթանակի։

Հուշարձանի բացման արարողության ժամն է։

«Օրհնեսցի և սրբեսցի խաչքարս նահատակաց հայոց, որք կատարեցան յաւուրս մեծի եղեռնի, յամի Տեառն հազարերորդի ինն հարիւրերորդի տասներորդի հինգերորդի, վասն եկեղեցւոյ և վասն Հայրենեաց։ Այս նշանաւ սուրբ խաչիս և Սուրբ Աւետարանաւս և աւուրս շնորհիս, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից»։

Խաչքարի օրհնության աղոթքը բարձրանում է, տարածվում Արարատյան դաշտով մեկ, հասնում Արևմտյան Հայաստանում նահատակված մեր անշիրիմ մարտիրոսների նվիրական աճյուններին, որպես ազդ քաջությանն։

Բոլոր հավաքվածները, միաբերան և հուզմունախառն, երգում են հայոց հուզիչ «Տէր ողորմեա»-ն, որը որպես աղերս բարձրանում է դեպի երկինք։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը *բարձրանում է պատվանդանի վրա, իր ուխտի և աղոթքի սրտառուչ խոսքն ասելու.*

«Այս տարի, ապրիլի 24-ին, Մենք օրհնեցինք այս հողը, որպեսզի այստեղ մարմին առնե կոթող մը, նվիրված 1915 թվականի հայոց մեծ եղեռնի զոհերու հիշատակին։ Ահա՛ այդ կոթողը, խորհրդանիշը հայոց վշտին, խորանը մեր աղոթքին, վեմը մեր ուխտին։ Դիտեցե՛ք կայն, խաչքարերու հաժախումբ հորինվածք

Հոկտեմբերի 31-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետը ուխտի և աղոթքի խոսք է ասում Նահատակաց Հուշարձանի բացմանը:

մըն է ան, որ կապրի, կշարժի և դեպի երկինք կտանի վիշտը ամբողջ ժողովուրդի մը, որ մեկի հետ կբաժնե հավայն մարդկությունը, որովհետև անոր ծոցին մեջ, հիսուն տարիներ առաջ, հնարավոր դարձավ պատմության մեծագույն ողբերգություններեն մին, առաջին ցեղասպանությունը մեր դարուն:

Այս խաչքարը դեպի երկինք կտանի նաև մեր աղոթքը մոտ երկու միլիոն մեր նահատակ կավակներուն հոգիներու խաղաղության և լուսավորման համար: Անոնք գերեվման իսկ չունեցան այս աշխարհի վրա, սակայն մեր սրտերը կվկայեն, թե «նոցա է արքայութիւն երկնից», վի անոնք հալածվեցան վասն արդարության և նահատակվեցան վասն Հիսուսի և վասն ապատության:

Այս խաչքարը թող մինչև երկինք բարձրացնե նաև մեր ուխտը, հավատարիմ մնալու մեր նահատակներու տեսիլքներուն և կտակին, մեր ուխտը՝ փնտռելու և գտնելու անոնց գերեվմանները և պաշտելու այն հողը, որ անոնց արյամբ ներկվեցավ:

Այս օրեն սկսյալ սրբավայր մըն է այստեղ, նվիրված մեր ողբերգական անցյալին, մեր կոհ-

Հոկտեմբերի 31-ին, կիրակի, եկեղեցական թափորը
Վեհարանից ուղղվում է դեպի Մայր Տաճար:

ված եղբայրներու և քույրերու հիշտակին, մեր ժողովուրդի ինքնապաշտպանության հերոսամարտերուն, մեր ազգային ուխտին:

Այստեղեն մեր հայացքը կուղղվի նաև դեպի մեր ազգի վերածնունդը և դեպի մեր գալիքը, դեպի հայոց ապագան:

Հայ ժողովուրդի վերածնունդը կենսագործված է, ապահովված ու ամրապնդված արդի հայ պետության, Խորհրդային Հայաստանի կենդանի գոյությամբ, անոր հարաճուն վերաշինությամբ ու վերելքով, եղբայրական ժողովուրդներու մեծ ընտանիքին՝ Խորհրդային Հանրապետություններու ժողովրդության մեջ: Մեր նահատակներու ոգեկոչման հիսնամյակը և համազգային հարգանքը անոնց հիշատակին նվիրված, պատմական հանգրվան մըն է, ուր կհանդիպին Հայաստանի և Սփյուռքի հայության ապրումներուն, որոնումներուն և երազանքներուն բոլոր ճամբաները. հանգրվան մը, ուրկե սկիզբ կառնե այն միակ իրական ուղին, փրկարար ուղին հավերժական Մայր Հայաստանին, այն միակ ուղին, ստեղծարար ուղին, որ կապահովե ճաղբական երթը հայոց պատմության;

Հաստատ, միակամ, անայլայլ կանգնած այս վեմին վրա, ուխտենք առավել կորացնել, առավել վերաշինել ու շքեղացնել Հայրենիքը մեր, այս ապրող ու շնչող, ամեն ժամ նոր կյանք, ամեն ժամ նոր ուժ, ամեն ժամ նոր լույս ու երակ մեկի պարգևող Մայր Երկիրը Մեր: Վերածնած Մայր Երկիրը մեր սկիզբն է մեր բոլոր ուրախություններուն: Անոր կյանքն ու շանը հավատարմարն է բոլոր ճշմարտություններուն:

Աղոթքի և ուխտի այս խաչքարի առաջ, մեր հայացքները ուղղած դեպի երկինք և դեպի աշխարհ, կոչենք մարգարեաշունչ մեր բանաստեղծներու արդար ու պայծառ հավատքով կեղուն՝

Հարգա՜նք քեզ, նահատակ ժողովուրդ մեր.
Հարգա՜նք քեզ, վերածնած ժողովուրդ մեր.
Հարգա՜նք քեզ, հավիտենական ժողովուրդ մեր:

«Քաջալերեցարուք և զօրացին սիրտք ձեր, ամենեքեան ոք լուսացեալ էք ի Տէր» (Սաղմ. Լ 25):

Ամեն»:

Մայրավանքի շրջափակում հավաքված խուռներամ բազմությունը արցունքով, ջերմ հուզումով է լսում հայրենասեր Հայրապետի ուխտի և աղոթքի խոսքը, որպես բովանդակ հայության զգացմունքների, խոհերի և իղձերի կենդանի արտահայտությունը։

Հուշարձանի բացման արարողությունը վերջանում է միաբերան երգված «Հայր մեր»-ով։

Հանգչեցե՛ք խաղաղ ու հպարտ, մեր թանկագին նահատակներ, մենք ձեզ չենք մոռանա։

Փա՜ռք մեր նահատակներին։ Նրանք մեռան, որ մենք ապրենք և ապրեցնենք նրանց անունն ու գործը, երազն ու պատգամը, մեր և գալոց հայ սերունդների հիշողության մեջ։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության 10-րդ տարեդարձի հանդիսությունը Վեհարանում

Հոկտեմբերի 31-ին, կիրակի, *հետմիջօրեի ժամը 3-ին, նահատակաց հուշարձանի բացման հանդիսավոր արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը, հոգևոր պետերը և բոլոր պատգամավորներն ու հյուրերը, հանդիսավորապես առաջնորդվում են Վեհարանի շքեղազարդ դահլիճը, ժողովրդական խանդավառ արտահայտությունների և սրտագին բարեմաղթությունների ներքո։*

Եկեղեցական մեծահանդես թափորը, «Օրհնեցէք զՏէր» և «Որ զշնորհս» շարականների *երգեցողությամբ, հասնում է Վեհարանի շքամուտքի առաջ և բարձրանալով երկրորդ հարկ, մուտք է գործում դահլիճ։*

Վեհափառ Հայրապետը բազմում է իր Գահի վրա, շրջապատված արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով, հոգևորական ամբողջ դասով։

Քույր եկեղեցիների բոլոր հոգևոր պետերը գրավում են իրենց համար հատկացված մասնավոր աթոռները։

Պատգամավորներն ու հյուրերը, ուխտավորներն ու պաշտոնական անձինք տեղ են գրավել դահլիճում։

Հանուն Մայր Աթոռի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի, Վեհափառ Հայրապետի դահակալության տասներորդ տարեդարձը շնորհավորում է Մայր Տաճարի լուսարարապետ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը, ջերմ բարեմաղթություններով, երախտագիտությամբ և որդիական անկեղծ զգացմունքներով։

Ռումինահայ ծանոթ մտավորական, ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գտնվող Հ. Ճ. Սիրունին ընթերցում է հետևյալ հուզիչ ուղերձը.

«Հանուն անոնց, որ գացին ու ետ չդարձան, թույլ տվեք ինձ՝ կարմիր հունձքեն ճոզոպրած համեստ մտավորականիս, ընդհատել այս աղվոր պահը ու ձեզ տանիլ սուգի կոթողին։

Նվիրական այս անկյունին մեջ, ուր դարերը կգրկախառնեն իրենց ավանդությունները ու իրենց հավատքը, Հայ Եկեղեցին ուխտի պատ մը կանգնեց այսօր, խորհրդավոր այդ հուշարձանը, որպեսզի անով հավերժացնե հիշատակը մեծ եղեռնի զոհերուն։

Խորհրդանշանն է այդ քարը հայ ժողովուրդի երկար Գողգոթային։ Ան պիտի դարերուն պատմե ոչ միայն զարհուրելի եղեռնը, որուն զոհ գնաց ժողովուրդի մը կեսը իր հույսերուն ու իր տքնության հրաշալի մեկ պահուն, մեզմե կես դար առաջ, այլ բոլոր սպանդները հայոց պատմության, երբ թշնամիները ոտքի կոխան ըրին հայրենի հողը և ավերեցին հայ օջախները։

Այս քարը կխորհրդանշե նաև հայ ժողովուրդի տևելու կամքը և անոր կիրքը բարձունք հասնելու։ Մեծ եղեռնը և բոլոր եղեռնները պիտի չըլլային, եթե հայ ժողովուրդը բռնկած չըլլար լույսի ծարավով և առաջ չանցներ իր շուրջիններեն։ Ան զոհն եղավ իր հոգեկան ձիրքերուն, ժայռերեն վեր իր մագլցումին, իր թռիչքներուն բարձունքներեն ալ վեր։ Եվ սակայն ամեն աղետե հետո, դարձյալ կանգնեցավ ոտքի, դարերն ու

ցեղերը վերստին թողուց ետև, ու միշտ սուրաց առաջ, շփոթության մատնելով իր թշնամիները։

Այս քարը պիտի վկայե աշխարհին, թե վերջին այս եղեռնը, որ ամայացուց Հայոց երկիրը, իր նմանը դեռ ունեցած չէր հայ ժողովուրդի պատմության մեջ, որովհետև անանախընթաց էր եղեր վայրագությունը, որով մարդիկ հոշոտեցին ցեղ մը, զիրենք զլած ըլլալու աններելի իր մեղքին համար, և մանավանդ թումքն եղած ըլլալուն համար անոնց ցնորքներու ճամբուն վրա։ Եղեռնը դարբնվեր էր բազմաթիվ տասնյակ տարիներու ընթացքին, այն օրեն ասդին, երբ Թուրան հասնելու ցնորքը քանի մը սերունդ վարակեր էր ետևե ետև, պոռթկալու համար իր ամենեն պատեհ ժամուն։ Հայը միակ խուրն էր եղեր իր դահիճներուն ճամբուն վրա, ու զայն հարթելու ավելի նպաստավոր ժամ չկար, քան հավոր այն պատերազմը, երբ ճիվաղը կրնար ազատ հոշոտել իր զոհը։

Բայց այս քարը պիտի հիշեցնե նաև գալոց սերունդներուն, թե այն օրերուն, երբ հայ ժողովուրդը, լքված ու անպաշտպան, կնահատակվեր շարշարանքներուն բոլոր տեսակներով, ընդվզումի վսեմ պահեր ևս ունեցավ, ու իր դահիճներուն դեմ ծառացավ Շաբին Գարահիսարի եղերական մարտնչումներուն ու դյուցազնական Եդեսիո մեջ, Մուսա լեռան հերոսավեպը հորինեց ու թշնամին շշմեցուց Վասպուրականի քաջության առջև, ինչպես ծառացեր էր բազմիցս Զեյթունի և Սասունի մեջ, ու շատ չանցած այն օրերեն, երբ դահիճը իր դիվական ծիծաղով կավետեր աշխարհին, թե հայկական դատ այլևս չկա, ան իր վերջին մաքառումներուն մեջ նոր պատմություն կստեղծեր և անոր առաջին էջերուն վրա կարձանագրեր Սարդարապատն ու Ղարաքիլիսան։

Այս քարը շիրիմն է անոնց, որոնք դամբան չունեցան և իրենց աճյունը հանձնեցին Հայոց աշխարհի դժբախտ ձորերուն ու կիրճերուն, զայն երթալով փռել մինչև Դեր-Զորի անապատներուն մեջ։ Անոնց աճյունը ահա կես դար է հայ ժողովուրդը կպտտցնե իր հոգիին մեջ աշխարհե աշխարհ նվիրական մասունքի մը պես, ու հիմա զայն բերեր պահ կուտա հայ հոգին, իր մոր տաքուկ գրկին մեջ։

Բոլոր ժողովուրդները հավերժական կրակ բռնկցուցին անծանոթ հերոսին համար, որուն աճյունին կերթան խոնարհիլ հանդիսական պահերու, իրենց պաշտամունքը ձոնելու հանուն սերունդի մը, որ իր արյունը թափեց իր հայրենիքին համար, մաքառելով ի սեր անոր փառքին, մեռնելով որպեսզի ապրի ան։

Հայ ժողովուրդը այս քարին տակ կդնե այսօր ոչ միայն նվիրական այն անունները, զորս դահիճը գնաց խլել իրենց բույրներեն, մոխիրի վերածելե առաջ հայ օջախները, այլ բոլորը անխտիր, անոնք, որ ինկան հայ ժողովուրդի անցյալ փառքին ու վաղվան վերելքին համար։

Թշնամին, այո՛, չարդեց մեզ, բայց մեռցընել չկրցավ։ Ճիշտ է, ան խամրեցուց հայ մտքին ամբողջ ծաղիկը իր զմայլելի փթթումին մեջ դեռ, չքացուց հայ ժողովուրդի կեսը ու ամայացուց մեր հայրենի հողերը։ Ճիշտ է, ան պահ մը կարծեց, թե հայ ժողովուրդը այլևս գոյություն չունի։

Ան չգիտցավ միայն, որ քեն մեռնիր ժողովուրդները, երբ մեռնիլ չուզեն։ Ան չկրցավ սերմն ալ մեկտեղ մեռցնել։ Զորս հովերուն նետեց ան իր զոհերուն աճյունը ու չմտածեց, որ օր մը կրնա դարձյալ ծիլ արձակել ան ու նոր հայրենիք ստեղծել իրեն։

Այս քարին տակ բոլորը կհանգչին հիմա, նվիրական այս անկյունին մեջ, ուր դարերը թողեր են իրենց ավանդություններն ու սրբությունները, Մայր Տաճարի ստվերին մոտիկ, դրացնությանը մեջ խունկին ու շարականներուն, ու հայրենի անուշ հողին տակ, որուն վրա հայ ժողովուրդը իր ապագան կկերտե ահա։

Ալևոր լեռան անուշ հովանին միշտ պիտի հսկե այս քարին վրա, և հազար ու մեկ եկեղեցիներու ավերակներեն բարի ոգիներ ամեն գիշեր այցի պիտի գան անոր, դարերը պիտի եղրայրանան անոր շուրջ, ու թափոր կազմած, վաղվան պիտի քալեն սեղ ու հաղթական...։

Եվ աճյունները, զորս մեր գուրգուրանքը կբերե զետեղել այսօր սույն քարին ներքև, պիտի հրճվին ամեն անգամ, որ նվիրական այս Տաճարը անցյալ դարերուն փառքը զողանչե, ու պիտի խաղաղ քնանան, լսելով աշխատանքի նոր երգը և հայոց դաշտերուն նոր հորովելը...։

Գահասրահում կատարվող հանդիսությունը վերջանում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնության և շնորհակալության ջերմ խոսքով։

Բոլոր ներկաները աչահամբույրով շնորհավորում են նորին Ս. Օծության գահակալության տասնամյակը։ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս ընդունում է Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի ներկայացուցիչների, մտավորականության և ժողովրդի անայլայլ հարգանքի և երախտագիտության սրտագին տուրքը, արևոտ կյանքի և բազմարդյուն հովվապետության սրտառուչ մաղթանքները։

Գոհաբանական մաղթանք Մայր Տաճարում «վասն հաստատութեան Սրբոյ Եկեղեցւոյ և վասն խաղաղութեան ամենայն աշխարհի»

Նոյեմբերի 1-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Մայր Տաճարում, հանդիսավոր իրադրության մեջ, տեղի է ունենում գոհաբանական մաղթանք՝ «վասն հաստատութեան Սրբոյ Եկեղեցւոյ և վասն խաղաղութեան ամենայն աշխարհի»։

Գոհաբանական մաղթանքին ներկա են բոլոր հոգևոր պետերը, բարձրաստիճան հոգևորականությունը, պատգամավորներ ու հյուրեր, մտավորականներ, արվեստագետներ, մամուլի ներկայացուցիչներ, թղթակիցներ և հավատացյալների հոծ բազմություն։

Զանգերի զողանչի տակ, եկեղեցական թափորը Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճար, ուր տեղի է ունենում մասնավոր գոհաբանական մաղթանք՝ սուրբգրական ավուր պատշաճի ընթերցումներից, շարականներից, աղոթքներից և քարոզներից բաղկացած։

Արդարև, այսօր ոչ միայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, հայ ժողովրդի, այլ նաև բոլոր եկեղեցիների, կրոնների և աշխարհի համար չկա ավելի կենսական, այժմեական և առաջնահերթ հարց, քան խաղաղության պահպանումը և ամրապնդումը ողջ երկրագնդում։

Եվ ահա էջմիածնում հավաքված քրիստոնեական քույր եկեղեցիների պետերը, հոգևորականներն ու աշխարհիկ պատգամավորությունը աղոթում են, որ խաղաղություն լինի երկրի վրա և հաշտություն, համերաշխություն ազգերի միջև, պատերազմը օրենքից դուրս հռչակվի, իբրև աշխարհի մեծագույն չարիքը և ոճիրը Աստուծո և մարդկության դեմ։

Մայր Տաճարում բոլորի խոհերն ու զգացմունքները թևածում են այդ պահին խաղաղության մասին։

Բայց մանավանդ Հայ Եկեղեցին ու հայ ժողովուրդը կարիքն ունեն մնայուն խաղաղության, որովհետև մենք հաճախ որպես Եկեղեցի և ժողովուրդ, ամենից շատ տառապել ենք անցյալում ահավոր չափերով, կյանքի և ինչքի անապահովության պայմաններում և հաճախ նահատակվել։

Ահա թե ինչու մենք, առավել քան որևէ այլ ժողովուրդ, կարիքն ունենք խաղաղության և ապահով կյանքի։

Գոհաբանական մաղթանքի ավարտին, խաղաղության նվիրված խոսքով հանդես է գալիս Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը.

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ամէն»։

«Ողորմութիւն և ճշմարտութիւն պատանեսցին,
Արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին»։

(ՍԱՂՄ. 84 14)

Հավաքվել ենք բոլորս մեր սրտի ու հոգու ամենաջերմ մաղթանքներն ու աղոթքներն անելու հայ ժողովրդի Սրբություն Սրբոց, բազմադարյան Ս. Էջմիածնի կամարների տակ, աշխարհի խաղաղության, եկեղեցիների հաստատության ու ժողովուրդների բարեկամության համար. «Զի լոեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակումունք թշնամեաց, տեկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի»։

Դարեր շարունակ, այս Ս. Տաճարում զոր ու գիշեր, հնչել է մեր ժողովրդի խաղաղության աղոթքը մեր աշխարհի խաղաղության համար, որովհետև մի ժողովրդի արդար իրաձը եղող խաղաղ ապրելու իրավունքը մեզ համար եղել է երազանք, ու մնացել որպես մի գաղափար, որը մեր ժողովրդի պատմության ընթացքում քիչ անգամ ենք մենք ազգովին կարողացել շոշափել ու զգալ։ Եթե քրիստոնեական կոթող համարվող բաղում տաճարների մեջ դարերի ընթացքում հնչել են զանգերը՝ ուրախություն ու հոգեկան մխիթարություն պարգևելու իրենց հավատացյալներին, կրոնական հանդիսավոր տոնակատարությանց կամ թագադրությանց և կամ այլ ազգային հանդեսների առիթներով, ապա մեր տաճարներում մեր տոները հաճախ սրբապղծվել են, և դեռ սուրբ պատարագի խունկի բույրը ու սաղմոսների քաղցրալուր մրմունջը իրենց շրթներին, մեր հայրապետներն ու իշխանները, մեր ժողովուրդն ամբողջ, ստիպված են եղել իրենց կյանքի ու արյան գնով պաշտպանել իրենց սրբազան հավատը, իրենց հայրենի հողն ու ազատությունը։

Երեքհազարամյա մեր պատմության ամբողջ ընթացքում, անթվելի են մեր ժողովրդի տառապանքները բարբարոս նվաճողների ձեռքից ու մաքառումները օտար բռնակալների դեմ, ի պաշտպանություն իր ազգային սրբությունների և երկրի խաղաղության։ Սակայն այն, ինչ տեղի ունեցավ 1915 թվականին, երբ սուլթանական Թուրքիայի կառավարության կողմից որոշվեց հիմնովին բնաջնջել դարերով իր հայրենի հողի վրա խաղաղ աշխատանքով ապրող մեր ժողովրդին և ոճիրը իրագործվեց քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ, ահասարսուռ պայմաններում, այդ մոռանալ հնարավոր չէ։ Այսօր մենք մխիթարված ենք ու հպարտ ներկա հայ հայրենիքի ու ժողովրդի վերա-

ծնունդով, սակայն մեր նահատակ հայրերի արյունը մեզանից պահանջում է շմոռանալ նրանց արդար հիշատակը։ Մայր Աթոռի բակում կառուցված հուշարձանը խորհրդանշանն է մեր զգացմունքների։

Այսօր ժողովուրդները լավ են գիտակցում և զգում խաղաղության, արդար խաղաղության անհրաժեշտությունն ամբողջ աշխարհում։ «Խաղաղություն աշխարհին» հասկացությունը, մեր օրերում, դադարել է տեղական բույթ կրելուց, որովհետև խաղաղությունը կենաց և մահու խնդիր է դարձել բոլոր ժողովուրդների համար, բոլոր ցամաքամասերում։ Ստեղծվել է խաղաղության կողմնակիցների համաշխարհային հզոր շարժումը, ինչպես նաև Պրագայի քրիստոնեական եկեղեցիների խաղաղության խորհուրդը, որոնց սեպուհ պարտականությունն է պաշտպանել ժողովուրդների արդար իրավունքները, ու թույլ չտալ պատերազմի ահավոր ողբերգությունը աշխարհի վրա։ Ահա թե ինչո՞ւ այսօր պատմական պահ ենք ապրում բոլորս, մեր մեջ ու մեզ հետ տեսնելով քույր եկեղեցիների գահակալների, քրիստոնեական տարբեր եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչների, եկած մեզ հետ աղոթելու աշխարհի խաղաղության ու եկեղեցիների հաստատության համար։ Այս երևույթը, ինչ խոսք, որ հոգևոր միխիթարության մեծ աղբյուր է բոլորիս համար, նաև մի քայլ, մի ավանդ քրիստոնեական եկեղեցիների ճշմարտապես համագործակցության ու տարբեր դավանանքների ժողովուրդների բարեկամության գործում։

Եկեղեցիների մերձեցման ու միության աստվածահաճո այս շարժումը, որ սկսվել է, մաղթում ենք, որ հետզհետե իր լրման հասնի և այդ հոգևոր միությունն ինքը ևս հզոր ազդակ լինի մարդկության մեջ խաղաղության պահպանման և ամրապնդման համար։ Հայ եկեղեցին միշտ պատրաստ է այդ սրբազան գործին իր լուման մուծել ու իր ամբողջ գործակցությունը բերել, որովհետև խաղաղության պաշտպանության գործը դերազանցապես համապատասխանում է ինչպես մեր ժողովրդի, այնպես էլ Քրիստոսի Եկեղեցու կոչման և առաքելության։ «Քրիստոնեությունը,— ինչպես ասում է ազգիս Վեհափառ Հայրապետը,— էապես սիրո և խաղաղության առաքելություն մրն է մարդկային աշխարհի մեջ։ Քրիստոսի Ավետարանը սիրո և խաղաղության աստվածային ավետում մրն է։ Ինքը Քրիստոս Իշխան է խաղաղության և Արքայի արդարության»։

Սաղմոսերգուն, դարեր առաջ, պատգամում էր. «Ողորմութիւն և ճշմարտութիւն պատեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին»։ Սակայն բարի ցանկությունն ու գեղեցիկ խոսքերը մարդկանց բավական չեն։ Ժողովուրդները իրե՛նք պետք է պայքարեն ու հասնեն այդ օրվան։

Այս գաղափարների լույսի տակ, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Մայր Աթոռս Ս. Էջմիածնի գլխավորությամբ, երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ հայրապետի օրերից սկսած և նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի գահակալության տասը տարիներին, իր աղոթքներն է միացրել քույր եկեղեցիների և բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց աղոթքներին և իր ճիգերը միացրել միջազգային խաղաղության պաշտպանության ջանքերին։

Այս տարի, Հելսինկիի խաղաղության համաշխարհային խորհրդի կազմակերպած համագումարում, հնչում էր Հայոց Հայրապետի ձայնը ի պաշտպանություն աշխարհի խաղաղության. «Այսօրվա աշխարհին, որ կատաղի տեսորշութեան, վախ և ճամաշխարհային երրորդ պատերազմի սպառնալիքեն, մենք, քրիստոնյաներս, պետք է ցույց տանք սիրո և խաղաղության ճանապարհը, համագործակցության և խաղաղ գոյակցության ճանապարհը։ Հանուն մեր կրոնական հավատքին, հանուն Քրիստոսի Ավետարանին, պետք է պատերազմը հայտարարել օրենքեն դուրս և բոլոր ճանապարհները փակել անոր առջև»։

Խաղաղության ձգտող ողջ մարդկությունը և քրիստոնեական բոլոր եկեղեցիները լցված են լավատեսությամբ և հավատում են սրտեռանդն, որ միացյալ ջանքերով, աղոթքով և սուրբ աշխատանքներով կարելի կլինի վերջապես պահպանել խաղաղությունը և իրագործել Աստուծո կամքը այս աշխարհի վրա՝ «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։

Մարդկությունը կարող է և պետք է ապրի առանց պատերազմների, մարդկային արժանապատվության պահպանումով և ազգերի արդար իրավունքների ապահովությամբ։

Թո՛ղ չքանան պատերազմի մահաբեր ամպերը և մարդկության վրա միշտ մաքուր մնա խաղաղության երկնակամարը։

Թո՛ղ ամենաբարի Աստուծո օրհնությունը իջնի երկրագնդի խաղաղասեր բոլոր ժողովուրդների, բոլոր կրոնների և հավատացյալների վրա։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հանապազ աղոթում է. «Խաղաղութեամբ քով, Քրիստոս Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս և զքանս, ամրացս զմեզ և անեւկիւղ պահեա յամենայն չարէ»։ Ամենայ-

Այնուհետև Մայր Տաճարում տեղի է ունենում հոգևոր երաժշտության համերգ։

Մայր Տաճարի երգեցիկ խումբը ապրումով և խորունկ հավատով կատարում է «Սուրբ Սուրբ»-ը, «Ամեն հայի սրտից բխած» հայրապետական մաղթերգը, «Մենակյաց լեռոս և «Կոսբադի Թաբելա» ռուսական հոգևոր երգերը։

Հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը հուզումով երգում է «Ի գերեզման յարուցելոյն» տաղը։

Տաղանդավոր մենեռգչուհի Լուսինե Զաքարյանը շնորհալիորեն կատարում է «Աչքն ծով ի ծով» նարեկաշունչ տաղը և «Ավե Մարիա»-ն։

Արգարև, մեր սրտագին մաղթանքն է, որ չքանան երկնակամարի վրա բոլոր մահաբեր ամպերը և մարդկության վրա միշտ անամպ փայլի խաղաղության և հաճության կապույտ երկնակամարը։

Հանդիսավոր նիստ Վեհարանում նվիրված Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձին

Նոյեմբերի 1-ին, երկուշաբթի, հետմիջօրեի ժամը 1-ին, Վեհարանի հանդիսասրահում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, տեղի է ունենում հանդիսավոր նիստ, նվիրված Նորին Ս. Օծության գահակալության տասնամյակին։

Նախագահության սեղանի շուրջ տեղ են գրավել բոլոր հոգևոր պետերը՝ Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Տ. Եփրեմ Բ-ը, Հայ Կաթողիկե Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Իգնատիոս Պետրոս Պարանյանը, Երուսաղեմի ճայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Եղիշե Արքեպիսկոպոս Տերտերյանը, Տ. Իոսաֆ Միտրոպոլիտը, Հաբեշական եկեղեցու ներկայացուցիչ Աբունա Պետրոս Միտրոպոլիտը, Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների միության նախագահ վերապատվելի Հովհաննես Անարոնյանը, Տ. Մամբրե, Տ. Սիոն, Տ. Սերովբե, Տ. Տանատ արքեպիսկոպոսները։

Նախագահության սեղանի շուրջ է նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Նախագահության կազմում են նաև վարպետը՝ Մ. Սարյանը, պրոֆ. Ա. Առաքելյանը և Ս. Քարյանը։

Վեհարանի հանդիսությանց ընդարձակ սրահը լիքն է հոգևոր և աշխարհիկ պատգամավորներով, հյուրերով, մտավորականներով և մամուլի ներկայացուցիչներով ու թղթակիցներով։

Հանդիսությանց բացումը կատարում է Երուսաղեմի ճայոց Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հայրը հետևյալ ջերմ ուղերձով.

«Մարգեր կան, որոնք կրնան բառով մը կամ առավելագույն՝ նախադասությամբ մը բարացուցվիլ։ Նորին Ս. Օծությունը չէ այդ մարդերեն։ Եթե կարելի ըլլար Վեհափառի անձեն բխող լույսը պրիսմակել և մեղի հասկընալի կարողություններու վերածել, մատնանշելու համար համադրությամբ իր արժանիքներուն, պիտի ունենայինք Իր մտքի և հոգիի շնորհներու կողքին նախ վարչական մարդը։ Մեկը, որ կրցավ տասը տարիներու Իր պաշտոնավարության ընթացքին, իբրև Գահակալը Լուսավորչի Աթոռին, «Տալ զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ», գիտցավ ոսկի օղակը ըլլալ Ս. Էջմիածնի, հայրենիքի և արտասահմանի միջև, իրական հովվի և հոտի սրտառուչ պատկերով, գիտցավ հարաբերության մեջ դնել Հայաստանյայց Եկեղեցին ընդհանուր քրիստոնեական շարժումներու հետ, միշտ բարձր պահելով Մայր Աթոռի հմայքն ու վարկը։ Նորին Ս. Օծության օրով էր, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իրական ուխտավայր մը դարձավ, հայրենի հողին մագնիսով և Ս. Էջմիածնի ճառագայթով։

Նորին Ս. Օծության երկրորդ արժանիքը Իր շինարարությունն է։ Զափազանցություն պիտի ըլլար, եթե ըսեի, թե չորս հարյուր տարիներե ի վեր Ս. Էջմիածինը չէ ունեցած այն շքեղ կերպարանքը, զոր այսօր ունի, իբրև շենք, իբրև հարդարանք ու զարդարանք։ Ոչ միայն մենք, այլ նաև օտարազգի ուխտավորներ և զբոսաշրջիկներ, երբ ներս կմտնեն Այսօր Մայր Տաճարեն, Վեհարանեն, տպարանեն և ճեմարանեն, կլեցվին զգացումով մը, որ մեր հպարտությունն է, իրագործված Նորին Ս. Օծության գահակալության տասնամյակի ընթացքին։ Սակայն նյութական այս փառքը մեկ երեսն է միայն Մայր Աթոռին, ադոր համընթաց, կան նաև Հոգևոր ճեմարանը և տպարանը, որոնք հայ հոգիի և մտքի նվիրական գործին կսպասարկեն, վերածելով Մայր Աթոռը հոգեղեն իրականության մը։

Վեհափառը, առանց տատամսումի, կարելի է ըսել, թե մեծ տնտեսագետ մըն է։ Դրամը, որ առանցքն է բոլոր մեծ իրագործումներուն, Նորին Ս. Օծության ձեռքին մեջ ազնիվ միջոցի մը վերածված է։ Վեհափառը գիտե հայթայթել այդ մետաղը, բայց մանավանդ զայն գործածել իր արժեքեն վեր արժեքներու ի խնդիր։ Այսօր պետություններն անգամ այն ատեն միայն անկախ են,

երբ կրցած են ստեղծել իրենց տնտեսական անկախությունը, հավասարակշռելով իրենց եկամուտը։ Ուրախ ենք, հոս կարենալ ըսելու, թե Նորին Ս. Օծությունը կրցած է վերակազմել Մայր Աթոռի տնտեսությունը, պարագա մը, որ հրաշքի համազոր է։

Նորին Ս. Օծությունը մեծ հայրենասեր մըն է։ Նման մեր եռամեծար հայրապետներուն, Նորին Ս. Օծության համար հայոց հայրենիքը, եկեղեցին և ժողովուրդը անշամանդաղ ճշմարտություններ են, որոնց միշտ պետք է հավատարիմ մնալ, ի գին ամեն բանի։ Հայ եկեղեցին Նորին Վեհափառության մտքին առչև աննահանջ դրոշ մըն է, լուսավորչի կանթեղը, որ կլուսավորե թե՛ մեր անցյալի սխրագործությունները և թե՛ ապագա վաղորդայնները։ Այս մտատենչ մոլորմին տակն է, որ Ան գործեց տասը տարիներ եռանդով, սիրով և հավատարմությամբ, իբրև արժանավոր Պետը Հայ եկեղեցվոյ։

Ան ճշմարիտ մագնիսն է, թե՛ հայրենիքեն ներս և թե՛ դուրս, մեր ժողովուրդի բոլոր խավերուն համար։ Եվ այդ անոր համար, որ Իր բյուրեղ հոգին գիտե բացվիլ թե՛ Աստուծո և թե՛ Իր ժողովուրդին համահավասար կերպով։ Մեր եկեղեցվո և ժողովուրդի մեծ իդեալներն ու նպատակները ամեն օր Իր մեջ ապրող իրականություններ են, այդ է պատճառ, որ Նորին Ս. Օծությունը գիտե Իր արժեքները արժանիքի վերածելու։

Այնուհետև, Վրաստանի հայոց առաջնորդ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանն ընթերցում է Վեհափառ Հայրապետի գահակալության տասնամյա գործունեության նվիրված Գերագույն Հոգևոր Խորհրդի զեկույցը (տպագրված ամսագրի սույն համարում, էջ 21—35)։

Կեսօրամյա ընդմիջումից հետո, շարունակվում է հանդիսավոր նիստը։

Ընթերցվում է Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Նորին Գերազանցություն Անտոն Քոչինյանի հեռագիրը, որն ընդունվում է բուռն ծափերով.

«Ընդունեցեք, խնդրեմ, իմ շնորհավորությունները Ձեզ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու 10-ամյա տարեդարձի առթիվ։

Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և հետագա հաջողություններ համընդհանուր խաղաղության ի նպաստ Ձեր շնորհակալ գործունեության մեջ»։

Այնուհետև ողջույնի ջերմ խոսքով հանդես է գալիս Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Եփրեմ Բ-ը, բերելով Վրացական քույր եկեղեցու, հոգևորականության և հավատացյալների սրտագին շնորհավորություններն ու բարեմաղթությունները Հայոց Հայրապետի գահակալության 10-րդ տարեդարձի առթիվ։

Հայ-Կաթողիկե Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Իգնատիոս-Պետրոս Պաքանյանն իր ողջույնի հուզիչ ճառի մեջ ասում է.

«Վեհափա՛ռ Տեր.

Երբ ամիսներ առաջ պատիվը ունեցա Ձեր հրավերը ընդունելու, տեղյակ պահեցի Սրբազան Քահանայապետը՝ Պավղոս Զ, որ ի լուր այս ցնծալի պատեհության, մեծ ուրախություն հայտնեց, և ճիշտ շաբաթ մը առաջ, երբ պատիվը ունեի ունկնդրության երթալու Նորին Սրբության, ինձի պաշտոն հանձնեց, որ Իր անձնական հարգանքները, մաղթանքները մատուցանեմ Ձեր Վեհափառ Տերության և ինքնագիր այս նամակը հանձնեց, որ Ձեզի անձնապես հանձնեմ։ Պատիվ ունիմ այդ նամակը կարդալու գրված լեզվով։ Մեր Թերզյան գերապայծառը պիտի հաճի հայերեն թարգմանությունը կարդալ մեզ (Սրբազան Քահանայապետի նամակը տե՛ս պաշտոնական շնորհավորականների շարքում, սույն №-ի 7-րդ էջում)։

Վեհափա՛ռ Տեր.

Այս երկու օրվան հանդիսություններու միջոցին, ես զգացի, թե Ձեր կուրծքին մեջ սիրտ մը ունիք, որ կրաբախե մարդկության եղբայրակցության, և աշխարհի խաղաղության համար։ Ուրախ ենք, որ արտակարգ զուգադիպությամբ մը պարտականությունը ունիմ հանձնելու Ձեզի Վսեմաշուք Կարդինալ Աղաճանյանի կողմե երկու մեդալներ, որոնցմե մեկը կերպով մը կշեշտե մարդոց եղբայրությունը և երկրորդը՝ աշխարհիս խաղաղությունը։ Առաջինը, մարդոց եղբայրությունը, Բոմբեյ Սրբազան Քահանայապետի այցելության ոսկյա մեդալը, և երկրորդը՝ լատին մեդալը։ Հաճեցեք զանոնք ընդունիլ Վսեմաշուք Կարդինալ Աղաճանյանի եղբայրական, հարգալիր մաղթանքներով և ամեն տեսակ հաջողության իղձերով, և եթե թույլ կուտաք, այդ նամակը Թերզյան Գերապայծառը պիտի հաճի կարդալ մեզի.

«Նորին Վեհափառություն Վազգեն Ա Սրբազան Կաթողիկոսի գահակալության տասնամյակի առթիվ, պատիվն ունիմ նվիրելու—Ձեռամբ գերերջանիկ Պաքանյան Կաթողիկոս-Պատրիարքի—ոսկյա և արծաթյա մեդալներ, հուշ Նորին Սրբություն Պողոս Զ Սրբազան Քահանայապետի պատմական ուղևորությանց Հնդկաստան և Միացյալ Ազգերու ժողովը։

Կխնդրեմ Նորին Վեհափառությունեն ընդունիլ զանոնք իբր նշան մեծարանաց, հավատում աղոթանվեր մաղթանաց, բարօր արև-

շատութեամբ համայր ամս, ի սպաս Ս. եկեղեցվո և նահատակ ազգիս Հայոց»։

Այժմ թույլ տվեք, Վեհափա՛ռ Տեր, որ անձնական խոնարհ խոսքս ըսեմ։ Ձեր տասնամյա գահակալության գործունեությունը մեզի հայտնեց Ձեր անձին մեջ մշակ, ոչ թե հասարակ մշակ, այլ բարձր, իրական մշակ մը, որ Իր կյանքը նվիրած է Աստուծո և հայրենիքին, Իր կյանքը նվիրած է, որպեսզի մտքի կոթողներ կառուցանե և միևնույն ատեն նյութական կոթողներ կառուցանե։

Հետաքրքրությամբ, հիացումով հետևեցանք այդ ամեն գեղեցիկ տեղեկություններուն, որոնք մեզի տրվեցան և որոնք ամփոփումով մը մեզի նկարագրեցին Ձեր կյանքը և մեր առջեր դրին Ձեր տասնամյա կաթողիկոսության գեղեցիկ և հարուստ նկարը։

Վեհափա՛ռ Տեր.

Դուք այս ամեն կառուցումները մեջտեղ բերած եք և անոնք ըրած եք ոչ թե լոկ պարծենալու նպատակով, Ձեր համեստ անձը այդպիսի ձգտում չունի երբեք։ Այդ ամեն կառուցումները, մտքի կառուցումներն ալ, նյութական գործի կառուցումներն ալ, ուրիշ նպատակ չեն ունեցած, եթե ոչ ծառայել հայ

Վենետիկի Աստվածամայրը
(Նվեր Վենետիկի Մխիթարյան միաբանությունից)

Վեհափա՛ռ Տեր.

Այդ ամեն կառուցումները նպատակ մը ունին Ձեր մտքին մեջ. մտավոր կամ նյութական կառուցումները կծառայեն, որպեսզի ուրիշ շենքեր բարձրանան, և այդ շենքերը պետք է բարձրանան ամեն հայ անհատի սրտին ու մտքին մեջ։ Վեհափառի կառուցումները եղած են եկեղեցական, կրոնական, ազգասիրական և անոնք ուրիշ նպատակ չունին, եթե ոչ ամեն հայ անհատի ոգեշնչել բաղձանքը, իղձը, դառնալու իրապես կառուցվածք մը, մտքի կառուցվածք մը, սրտի կառուցվածք մը, Աստուծո ծառայի, կառուցվածք մը հայրենիքի։ Իրապես, որդիական մաղթանքս այն է, Վեհափա՛ռ Տեր, որ այս Ձեր սուրբ, նվիրական բաղձանքը կարենա իրականանալ և արձագանք գտնե Ձեր ձայնը, Ձեր գործունեությունը ամեն հայու սրտին մեջ, որպեսզի այն աշխատի ըլլալ ճշմարիտ քրիստոնյա, ճշմարիտ հայ, և այն ատեն իրապես Ձեր կառուցումները կրկնապատկված պիտի ըլլան հայ անձին մեջ։

Մենք, արտասահմանի մեջ գտնվող խոնարհ հայ մշակներս, մենք ալ բնականաբար կձգտինք աշխատիլ և կաշխատինք գործը հառաջ տանելու, մեր համեստ միջոցներով կաշխատինք շարունակ հայը Աստուծո միացած պահելու, հայը միշտ տոգորված պահելու։ Այս բաղձանքով, այս վճռական կամքով, թույլ տվեք, Վեհափա՛ռ Տեր, որ հայտնեմ

Նորին Սրբություն Պավղոս Զ Պապի ոսկյա հուշամեդալը
(Նվեր Կարդինալ Աղաջանյանից)

սիրելի անհատին, ծառայել հայ ազգին, ծառայել մեր հայ սիրելի պետության, որուն ինձի առիթը կտրվի այս հանդիսավոր պահուն իմ խորին հարգանքներս մատուցանելու և մաղթելու, որ այս պետությունը զարգանա, զորանա Աստուծո օգնությամբ և կարենա իրապես սրտերը գրավել բոլոր հայ զավակներու, որոնք, տարակույս չկա, կտրոփեն հայրենիքի սիրով։

Զեր Սրբության իմ խորին հարգանքներս Զեր Կաթողիկոսական Գահին, գահակալության տասնամյակի առթիվ, իմ իղձերս, զորս Աստուծո կբարձրացնեմ, որպեսզի Զեզի երկար կյանք տա, հաստատ պահե Զեր գործունեությունը, և այդ գործունեությունը բազմապատկված տեսնեմ։ Իսկ մենք Զեր ձեռքը բռնած, կամ ավելի ևս մեր տկար ձեռքը Զեր ձեռքին մեջ դրած, պիտի չանանք Զեր այս բաղձանքները, Զեր այս աղոթքները իրագործել մեր կարողության սահմանին մեջ, և որպեսզի իմ տկար ձեռքս Զեր զորավոր ձեռքին մեջ մնա, պիտի խնդրեի, որ այս պզտիկ հիշատակը ընդունիք այս առթիվ։

Միտրոպոլիտ Խոսաֆը, շնորհավորելով Նորին Ս. Օծության տասնամյակը հանուն Ռուս Պրավոսլավ Եկեղեցու, Ս. Սինոդի և հավատացյալների, հրապարակում է Ռուսաստանի և Համայն Մոսկվայի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի շնորհավորական նամակը, 27 հոկտեմբեր թվակիր.

«Զերդ Սրբություն.

Այս հանդիսավոր և ուրախալի օրը, երբ հնադարյան Ս. Էջմիածինը արժանավայել կերպով պատվում է Զերդ սիրեցյալ Սրբությունը և նշում Զեր հայրապետական գահակալության փառավոր տասնամյակը իբրև Հայ Եկեղեցու Պետի, Մենք, Զեզ հետ միասին, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, մտովին մասնակցելով Հայ Եկեղեցու հավատարիմ զավակների այդ ընդհանուր ցնծությանը, բերում ենք մեր էլ սրտագին մասնակցությունը Զեր աստվածախնամ ժողովրդի ուրախությանը, ժողովրդի, որը Զերդ Սրբության չանքերով, իմաստուն կերպով առաջնորդվում է փրկության ճանապարհով։

Սրտագին ողջունելով Զեզ Զեր և Զեր եկեղեցու այդ նշանակալից տարեդարձի առթիվ, բարձրացնում ենք մեր ջերմագին աղոթքներն առ Աստված, որպեսզի Նա, Հայաստանի Լուսավորիչ Ս. Գրիգորի աղոթքներով, պահի Զեզ ողջամբ, քաջառողջ, պարգևի Զեզ արևշատություն և աստվածային ճշմարտության խոսքը քարոզելու երկարատև տարիներ, ի բարօրություն Զերդ Սրբության խնամքին հանձնված քրիստոնյա զավակներիս։

Եթովպական քույր եկեղեցու ներկայացուցիչ, Կոնդարի Միտրոպոլիտ Արունա Պեսրոսը, ջերմորեն շնորհավորելով Ամենայն Հայոց Հայրապետին հանուն Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն Բասիլիոս Ա-ի, իր ուղերձում ասում է.

«Ես կհայտնեմ իմ սրտագին ողջույնները, ինչպես և ողջույնները համայն Եթովպական եկեղեցվո Արունա Բասիլիոս Ա Պատրիարքի, մեր արքեպիսկոպոսներու, եպիսկոպոսներու, հայրերու և քրիստոնյա ժողովրդյան։ Անձնապես ես շատ ուրախ եմ, որ կմասնակցիմ Վազգեն Ա Կաթողիկոսի գահակալության տասնամյակի այս հանդիսավոր տոնակատարության։ Մանավանդ ես Նորին Վեհափառության 10 տարվան կարճ ժամանակի մեջ կատարած աշխատանքին, ես իսկապես կհիանամ Նորին Ս. Օծության եռանդին և ժրաջանության վրա։ Մեր Տերը Հիսուս Քրիստոս անգամ մը ըսավ, թե ինք եկած է ոչ թե քանդելու հին ավանդությունները, այլ զանոնք կատարելագործելու։ Նմանապես Նորին Վեհափառությունը շարունակած և ճոխացուցած է ավանդություններն ու աշխատանքները, որոնք անցյալին կկատարվեին Իր նախորդներուն կողմե։

Մենք տակավին երախտագիտությամբ կհիշենք այն խոսքերը, զորս Դուք արտասանեցիք Եկեղեցվո վերամիավորման մեծ շարժման մասին, ինչպես և այն օժանդակությունը, զոր ընծեռեցիք Արևելյան Ուղղափառ Եկեղեցվո համագումարի գործերուն Ադդիս-Աբեբայի մեջ։ Եթովպիո Կայսր Նորին Վեհափառություն Հայլե Սելասիե Ա-ն ևս շատ տպավորված էր Զեր իմաստուն խոսքերեն և քրիստոնեական վերաբերմունքեն, և որոշած է շարունակել սկսված գործը ըստ ոգվույն և սահմաններուն, որ արտահայտված էին Նորին Ս. Օծություն Վազգեն Կաթողիկոսի կողմե։

Ես կավարտեմ իմ կարճ ուղերձը, Զեզ մաղթելով բեղմնավոր գործունեություն։ Թող Հայր Աստուծո և Որդվույն ողորմությունը և Ս. Հոգվույն շնորհքը ըլլան միշտ Զեզ հետ։ Ամենայն։

Վատիկանի մեդալը հանուն խաղաղության
(Նվեր Կարդինալ Աղաջանյանից)

ՄՈՄԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽԱՉՔԱՐԸ (1308 Թ.) ՋԵՏԵՂՎԱԾ ՆՈՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



Լիբանանի թեմի հայոց առաջնորդ և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ Տ. Տաճատ արքեպիսկոպոս Ուրֆալյանը ընթերցում է հետևյալ ուղերձը.

«Վեհափա՛ռ Տեր.

Քաղցր և հաճելի պարտականություն ունինք, Ձերդ Վեհափառության Կաթողիկոսական ընտրության և օծման տասներորդ տարեդարձին առթիվ, Ձերդ Սրբության ներկայացնելու Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսին եղբայրական ողջույններն ու սրտալից շնորհավորությունները։

Ձերդ Վեհափառության Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրությունը ծաղկումի նոր շրջան մը եղավ Մայր Աթոռին համար։ Աշխատեցաք վերականգնել Հայ ժողովուրդին դաբաղոր հավատքը. աշխատեցաք վերանորոգել մեր սրբազան նախնյաց կողմե կառուցված վանքերն ու սրբատեղերը. վերահաստատեցիք միաբանական նոր կյանք և ջանադիր եղաք հասցնելու երիտասարդ և գիտակից հոգևորականներ։ Ձոխացուցիք Ս. Էջմիածնի պաշտոնաթերթը և կանոնավորեցիք անոր հրատարակությունը։ Ձեր հովվական հաճախակի այցելություններով ամրապնդեցիք ներքին և արտաքին թեմերու Ձեր հոգևոր զավակներուն միջև գոյություն ունեցող հոգեկան կապը։ Ի մի խոսք, ճգնեցաք և տագնապեցաք, որպեսզի Էջմիածնի այս Ս. Աթոռը վերագտներ իր նախկին գիրքն ու վերստանձներ իր պատմական դերը։

Վեհափա՛ռ Տեր, մեր սրտագին մաղթանքն է, որ Ձեր գահակալության ժամանակաշրջանը, Բարձրյալին օգնությամբ, հայ ժողովուրդին համար ըլլա բախտավոր շրջան մը, մեր ազգային երազներուն և իղձերուն իրականացման շքեղ շրջան մը։ Նույնպես մեր մաղթանքն է, որ Ձերդ Վեհափառության և Կիլիկյան Ս. Աթոռի Գահակալ Նորին Ս. Օծություն Վեհափառ Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսի միջև գոյություն ունեցող եղբայրական սերն ու միության ոգին առավել ևս սերտանան և ամրապնդվին փոխադարձ հասկացողությամբ։

Այս հանդիսավոր պահուն, անգամ մը ևս կհայտնենք, թե Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսը և իր ուխտանվեր միաբանությունը խորապես կհավատան, թե մի է և անբաժանելի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և իր զույգ Հայրապետները գործակիցներ են իրարու։

Մենք կհավատանք, որ որքան գորանա Անթիլիասը, այնքան ավելի կզորանա Ս. Էջմիածինը, և փոխադարձաբար, որքան աճի ու ծաղկի Ս. Էջմիածինը, այնքան ավելի կբարգավաճի Անթիլիասը։ Անթիլիասը՝ Ս. Էջմիածնի համար, և Էջմիածինը՝ Անթիլիասի համար։ Մեր Վեհափառ Հայրապետն ու մենք կհավատանք այս ճշմարտության և մեր կարելի բոլոր միջոցներով կաշխատինք, որ գործնական դառնա այս ճշմարտությունը մեր հայկական կյանքեն ներս, ի փառս Հայաստանյայց Ս. Եկեղեցվո և ի պարծանս հայ հավատացյալ ժողովրդյան։

Ի խորոց սրտի կաղոթենք, որ Բարձրյալն Աստված միշտ անշարժ ու անսասան պահե ու պահպանե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Կիլիկյան Կաթողիկոսության Ս. Աթոռը, Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքությունները, և Ձերդ Վեհափառության պարգևե բազառողջ և արեշատ երկար կյանք, բեղուն գործունեություն և բարի գործոց լիակատար հաջողություն, որպեսզի միշտ անմար պահեք Լուսավորչի կանթեղը Արագածի գագաթին։

Այս բոլորեն ետք, երբ կգտնվիմ Հայաստանի մեջ, Մայր Հողին վրա, ցանկություն ունիմ, որ Հայաստանը միշտ մնա լույսի և հույսի կեդրոնը հայության և ըլլա խարիսխը մեր համագործակցության և համերաշխության։ Առ այդ շնորհավորելով հայրենի բարեխնամ կառավարությունը, նորանոր հաջողություններ կմաղթեմ։

Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների միության նախագահ վերապատվելի Հովհաննես Աճառեանը հանդես է գալիս հետևյալ հայրենաշունչ և հայրենասիրական ուղերձով.

«Վեհափա՛ռ Տեր.

Հինգ վայրկյանները, որ այս պահուս ինձի տրամադրված են, կնկատեմ անգուգական առիթ մը։ Այս հանդիսությունը պատմական իմաստ պարունակող պատեհություն մըն է։

Մեզի, հայրենակարոտ այցելուներուս համար, Մայր Հայրենիք գտնվիլ, անոր օդը շնչել, ջուրը խմել առանձնաշնորհում մըն է։ Հայրենիքի ամեն մի քարը, լեռն ու ձորը մեր սրտերը թունդ հանող և մեր զգացումներուն թռիչք տվող առիթներ են։ Գտնվիլ Մայր Հայրենիքի ծոցին մեջ, Ս. Էջմիածնի դարավոր կամարներուն տակ և Իշման Սեղանի առջև մեր ուխտը կատարել՝ կյանքի կարոտալից մեր երազն է։ Տեսնել Հայրենիքը իր ծաղկուն և նոր ոսկեդար մը կերտելու ճամբուն վրա՝ մեր սրտերը համակ հպարտությամբ և հրճվանքով կպարուրեն։ Մենք հիացումով կդիտենք Մայր Հայրենիքի ներկա իրականությունը և հավետ երախտապարտենք անոր բարեխնամ սիրության արձանագրած հաջողությանց համար։ Մեր հույսը և ապագան հոս է, քանի որ այստեղ է միայն

Հայաստանը, այստեղ է հայ մշակույթի և հանճարի ակն ու աղբյուրը։ Առանց Մայր Հայրենիքի, Սփյուռքը անօգնական է։ Մենք հայրենիքով կխրախուսվինք և հայրենիքով մեր ազգային երազները կիրականանան։

Աննախընթաց է այս համահավաքին առիթ տվող պարագան։ Մեծ եղեռնի հիսնամյակը իր հիշատակությամբ ահռելի և իր ահավորությամբը անպատմելի ու անըմբռնելի է, բայց իր ահռելիությանը մեջ, եկեղեցական և ազգային միության ու միասնականության սերմերը կգտնվին, ինչպես ի հայտ եկավ մեր գաղութին մեջ, ինչպես նաև ուրիշ գաղութներու մեջ։ Հույս մը, չարիքեն՝ բարիք, և վշտեն՝ օրհնություն և միասնականություն հառաջ բերելու։

Բայց կրկնակի նշանակալից է այս համահավաքը, մասնակցությամբ Հայ և օտար եկեղեցիներու ու նաև քաղաքական ու մշակութային զանազան կազմակերպություններու, Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության և գործունեության տասնամյակի առթիվ։ Վեհափառ Հայրապետը աշխատած է եկեղեցական և ազգային համերաշխության, միության և քրիստոնեական սիրո հոգիեն մղված։ Այս հանդիսությունն մըն է, որ ոչ միայն հատկանշական է Հայ Առաքելական Եկեղեցվո համար, այլ նաև մեր եկեղեցիներու ու համայն հայության համար։ Էջմիածնի Աթոռը անխտրաբար իր հոգևոր և հայրապետական շունչը ամեն կողմ տարածած է՝ Մայր Հայրենիքեն մինչև Սփյուռքի հեռավոր ծայրերը։ Զանազանություն դրած չէ Վեհափառը եկեղեցիներու միջև, Ան Իր հոգևոր պատգամը տված է Հայ Ավետարանական եկեղեցվո բեմեն, ինչպես պիտի տար Հայ Առաքելական եկեղեցվո բեմեն։

Մեր ժամանակները աննախընթաց տասնամյակ մը արձանագրած են միջեկեղեցական հարաբերությանց մեջ. շրջան մը՝ միջազգային գետնի վրա, եկեղեցիներու իրարու մոտենալու և Եկեղեցիի Տիրոջ անունով զիրար հասկնալու։ Եկեղեցական պատմության մեջ հատկանշանական շրջան մըն է համաեկեղեցական գործակցության ուղիով։ Վեհափառ Հայրապետի հրավերով, այսօր նույն հոգիով, Մայր Հայրենիքի մեջ և Ս. Էջմիածնի կամարներուն ներքև, Հայ Առաքելական, Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական եկեղեցիները իրարու քով կուգան։ Այս աննախընթաց և անզուգական երևույթ է՝ իրարհասկացողության և սիրո այս հոգին է, որ եկեղեցիները և ազգերը իրարու պիտի մոտեցնե, ատելության և բաժանումի հովերը պիտի հանդարտեցնե և ժողովուրդներու հա-

Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքներ միության խորհրդանիշ ոսկյա ադամանդակուռ հուշամեդալը

(Նվեր վերապատվելի Հովհաննես Ահարոնյանից)

վետ բաղձալի եղող խաղաղությունը պիտ հաստատե աշխարհիս վրա։

Այս հանդիսությունը պատմական է Հա Ավետարանական Եկեղեցվո 120 տարվա կյանքին մեջ։ Առաջին անգամ է, որ Հա Ավետարանական եկեղեցիներու միությունմը պաշտոնապես կներկայանա Մայր Հայրենիքի մեջ, Ս. Էջմիածին, իր մասնակցությունը բերելու նմանորինակ հանդիսության մը։

Այս պահուս հաճույքն ունիմ, Վեհափա՛ Տեր, Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական Եկեղեցվո, Հայ ավետարանական միջմիութենական խորհուրդի և Հայ ավետարանական ընկերակցության բարեմաղթությունները, ողջույնները և շնորհավորությունները բերելու, Աստուծո օրհնությունները հայցելով։ Կմաղթեմ արևշատություն և երջանիկ կյանք ու նորանոր հաջողություններ Քրիստոսի Եկեղեցվո և Մայր Հայրենիքին համար։ Մեր հրճվանքը անհուն է՝ վերածաղկող հայրենիքի մեջ տեսնել վերածաղկող Առաքելական եկեղեցին։ Աստված հաստատ պահե Մայր Աթոռը և կեցցե՛ Մայր Հայրենիքը։

Այս պահուս, Վեհափա՛ռ Տեր, կուզեմ, որպես մեր շնորհավորություններու և բարեմաղթություններու վավերակը, Ձեզի տալ մեր միության խորհրդանիշը ադամանդակուռ ոսկի մեդալի ձևով այն վստահությամբ, որ զայն պիտի ընդունիք եղբայրական սիրով։

Եգիպտոսի հայոց առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը իր ողջույնի խոսքում ասում է.

«Վեհափա՛ռ Տեր.

Ես կուզեմ շեշտել կարևոր երկու պարագա միայն։

Ի՞նչ բանի կպարտինք մենք այս փառավոր հանդիսությունները։

Առաջին՝ Ձեր բարոյական հզոր անձին, որ Ձեզի կապեցիք, Ձեզի քաշեցիք, Ձեզի միացուցիք բովանդակ հայությունը, ուր որ գացիք, հմայք ստեղծեցիք, ամենքը Ձեզմով խանդավառվեցան։ Ոմանք Ձեր մասին ըսին. «Հրեշտակ է», ուրիշները՝ «Սուրբ մըն է», Օտարներ կըսեն նույնիսկ. «Շատ կփափագինք, որ ամեն ազգի պետը այսպիսի անձ մը ըլլա՛ր»։

Ուրեմն ես կմտածեմ, որ այս փառավոր հանդիսությունները Ձեր բարոյական հզոր անձին կպարտինք։

Երկրորդ պարագա մը կա, որ շեշտվեցավ, բայց քողարկված կերպով։ Այս բոլորը կպարտինք նաև մեր կառավարության։ Եթե Հայկական կառավարություն չունենայինք, եթե Հայաստան չունենայինք, այսպիսի հանդիսություններ կմտածե՞ինք որ կունենայինք։ Երբեք։ Ուրեմն մենք, ըլլալով երախտապարտ մեր պատվական և անզուգական Հայրապետին, նույնքան երախտապարտ ենք մեր փառավոր Հայրենիքի պատվական կառավարության, որ հայրախնամ կերպով կտնօրինե ամեն բան։ Մենք ունեցանք այս փառավոր Վեհարանը, մենք ունեցանք բարեզարդված մեր Ս. Էջմիածինը և մենք ունեցանք մանավանդ մեր փառավոր Հայրապետը։ Ես Եգիպտոսեն միայն իմ փոխանորդովս եկա, բերելու ամբողջ Եգիպտահայության սերն ու հավատարմությունը այս Աթոռին և անոր Հայրապետին։

Կմաղթենք երկար և բազմաշատ տարիներ մեր սիրելի Հայրապետին։

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանն իր ելույթում ասաց.

«Վեհափա՛ռ Տեր.

Հոգեկան մեծ հրճվանքով, այսօր կտոնախմբենք Ձերդ Ս. Օծության գահակալության 10-րդ տարեդարձը։

Տարեդարձները առիթներ են հաստատության մը կամ հանրային մեծ անձնավորության կյանքն ու գործը վերաքննության ենթարկելու, կատարված աշխատանքին արդյունքը կշիռքի վրա դնելու և արժանի հարգանքը ընծայելու եղած նվաճումներուն և մատուցված ծառայությանց համար։

Անցնող տասը տարիներու ընթացքին, Մայր Աթոռը վերագտավ իր վաղեմի փառքն ու հմայքը, իր վեհությունն ու հարգանքը հայս հայ ժողովուրդին։

Ս. Էջմիածինը այսօր իր պատմական վսեմ դերին մեջ է վերստին։

Ինչպես Ղազար Ջահկեցի կաթողիկոսը կըսե՝ «Էջմիածին Մայր նաւատոյ, Էջմիածին նաւ փրկութեան, Էջմիածին ծնող լուսոյ, գլուխ և մայր եկեղեցւոյ»։

Ս. Գրիգոր Լուսավորչի աջին ու Ս. Էջմիածնի վրա հաստատված է բովանդակ հայ ժողովուրդը, իբրև անխախտ ու անսասան հավատքի ժայռին վրա։

Սփյուռքի մեջ հայ ժողովուրդը կապրի պանդուխտի նեղեհ կյանքը հայրենիքի ու Ս. Էջմիածնի վառ կարոտով տոչորուն։ Մայր Աթոռն է հոգևոր օղակը գաղութահայության ու հայրենիքի միջև, այն ոսկի շղթան, որ սիրով ու հավատքով կզոդե սրտերը բովանդակ հայության, Սփյուռքի և հայրենի երկրի մեջ։

Հայության արմատները հայրենի հողին մեջ տնկված են, հայկական ծառը Հայաստանի հողին վրա միայն կրնա զորավոր արմատներ բռնել, աճիլ ու պտղաբերիլ։ Արտասահմանի հայությունը, Սփյուռքի գաղութները հայկական ծառին ճյուղերն են, որոնք չեն կրնար կյանքի ավիշ ստանալ և ապրիլ, եթե կտրվին հայրենի ծառեն, այլապես պիտի թոշնին ու մեռնին, ինչպես ծառին ճյուղերը կչորնան, եթե կտրվին իրենց բունեն։

Հոգևոր և ազգային վերածնունդի շրջան մը բացված է հայ ժողովուրդին առջև, հայրենի երկրի մեջ։ Մեր նախահարց պատմական հայրենիքը վերաշինության ու բարգավաճման մեծ նվաճումներ կատարած է ու կկատարե գեղարվեստի, գիտության, դրականության ու ճարտարարվեստի բոլոր մարզերուն մեջ, հայ մշակույթը կծաղկի հայրենի երկրին մեջ և վերապրելու ու կենսունակության ավյուն կներարկե արտաշխարհի հայ բեկորներու սրտին մեջ։

Նոր ժամանակներու մեջ կապրինք։ Նոր ժամանակները նոր պահանջքներ, նոր պարտավորություններ կդնեն նաև եկեղեցիին վրա։ Նոր մարտահրավեր ուղղված է նաև Հայ Եկեղեցիին ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։ Արտասահմանի հայությունը պետք ունի հոգևոր առաջնորդության, ամուր կռվանի, հույսի ու լույսի փարոսի, լկորսվելու համար, և պահելու համար իր ազգային ու կրոնական ինքնությունը։

Շնորհազա՛րդ Հայրապետ.

Ինձի համար բացառիկ պատիվ է այսօր, հանուն Ամերիկայի և Կանադայի հայության



Արծաթյա կլուպոնե նկար (Ըվեր Իրանի հայերից)

և մասնավորաբար մեր թեմին, հարգանքի տուրք մատուցանել Ձերդ Ս. Օծության։

Սփյուռքի հայությունը հայրենիքի և Ս. Էջմիածնի կարոտով կապրի։ Դուք Ձեր հայրապետական այցելությամբ, անցնող տարիներու ընթացքին, ականատես և ականջալուր եղաք անոնց անսահման սիրո և հավատարմության, հանդեպ Մայր Աթոռին և Ձեր անձին։

Աստվածարյա՛լ Հայրապետ, Դուք եղաք նոր Մովսեսը հայ ժողովուրդին, որ գաղութահայության աչքերը դարձուցիք դեպի Հայրենիք, որ Ս. Էջմիածնի լույսը տարածեցիք ամենուրեք, և քաջ Հովվին պես, հայրապետական ցուպը ձեռք առած, այցի ելաք Ձեր պանդուխտ զավակներուն, զանոնք մխիթարելու, օրհնելու և հավատքի մեջ ամրապնդելու համար։

Դուք եղաք արդարև «Հայրապետ սուրբ և անբիծ», որ Ձեր զորավոր հավատքով ու բարի ու մեծ անձին հմայքով, բարձրացուցիք վարկը Ս. Էջմիածնի, նման Ձեր մեծանուն և շինարար նախորդներուն։

Կմաղթենք, որ հայրապետական գավազանը միշտ ծաղկյալ մնա Ձեր օծյալ սուրբ ձեռքին մեջ և իմաստությամբ հովվեք Ձեր հավատարիմ ու բարի հոտը, ցրված ի սփյուռս աշխարհի։

Օրհնեցե՛ք, Վեհափա՛ռ Տեր։

Կեցցե՛ Ամենայն Հայոց շինարար Հայրապետը։

Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանն իր ելույթում ասաց.

«Այսօր կրկին բարեբախտությունը և բախտավորությունը կունենամ գտնվելու Մայր Աթոռին մեջ և վկայելու, թե ինչպես վերանորոգված և կենսունակ շրջան մը սկսած են բոլորել Հայ Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

Վեհափա՛ռ Տեր, ոչ միայն Մայր Հայրենիքի մեջ շնորհալիր կենսունակություն մը ստեղծեցիք, այլ նաև խանդավառություն տարածեցիք ամբողջ Սփյուռքի հայության մեջ։

Ձեզմե առաջ, Վեհափա՛ռ Տեր, Սփյուռքի տարաբախտ հայության համար Ս. Էջմիածին, Ամենայն Հայոց Հայրապետ, նույնիսկ Մայր Հայրենիք երազ էր։ Այս տասը տարվան ընթացքին, Ձեր քանիցս արտասահման այցելությամբ, թե՛ Ս. Էջմիածինը, թե՛ Ամենայն Հայոց Հայրապետությունը և թե՛ մանավանդ Մայր Հայրենիքը Սփյուռքի համար շոշափելի իրականություն են դարձած։ Այսօր արտասահմանի մեջ



Ս. Թադեի վանքը (Ջրաբերկ) (Նվեր իրանահայ նկարիչ Արսեն Փարունցի)

կարծես թե երեք բառեր, երեք իրողություններ շրջան կրնեն՝ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա, Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք։

Ես կհավատամ, որ Աստուծմե ընտրյալ և Աստուծմե նշանակված բացառիկ մարդիկ են, որ պատմությունը կկերտեն։ Եվ Դուք, Վեհափա՛ռ Տեր, այս աստվածընտիր և Աստուծմե նշանակված անձն եք, որ այս տասը տարվան կարճ ընթացքին մեջ, մեր պատմության նոր իմաստ մը, նոր կենսունակություն և նոր ուղղություն տվիք։

Մենք Ձեր ընտրությունը կնկատենք նախախնամության ամենազեղեցիկ բարիքներեն և շնորհքներեն մեկը մեր Եկեղեցիին և մեր ժողովուրդին համար։

Թե՛ Հայաստանյայց Եկեղեցին և թե՛ հայ ժողովուրդը հպարտ են Ձեզմով։ Ապրիք երկար տարիներ, որպեսզի կարենաք Ձեր աստվածատուր շնորհքը բաշխել մեր հավատավոր ժողովուրդին և մեր Եկեղեցիին, ի փառս Աստուծու։

Վեհափա՛ռ Հայրապետ, ուրիշ նվիրական պարտականություն մըն ալ ունիմ՝ հանուն Հայ Եկեղեցվո Գերագույն Հոգևոր Խորհուրդի, այս սկիհը նվիրել Ձերդ Ս. Օծության։

Ան մտածած է զուտ ոսկի սկիհ մը նվիրել Ձերդ Սրբության գահակալության տասնեքորդ տարեդարձի առթիվ, իբրև տեսակ մը խորհրդանիշ։ Հայ ժողովուրդի ոսկի սիրտն է այս, որ այսօր Ձեզ կնվիրվի։ Այս սկիհին նյութը, այսինքն ոսկին, նվիրած են լոնդոնարնակ ազգայիններեն տեր և տիկին Սարգիս Քյուրֆեյանները։ Ան անցած է Հայաստանի մեր ճարտար, վարպետ ոսկերիչներու ձեռքերեն և ստացած է այս գեղեցիկ տեսքը։ Այս սկիհը Ձեզ կնվիրենք, Վեհափա՛ռ Տեր, հայ ժողովուրդի կողմե, որպեսզի Դուք մեր ժողովուրդի երազները, մեր ժողովուրդի իղձերը, մեր ժողովուրդի փափագները ամփոփած այս ոսկի սկիհին մեջ, մատուցանեք իբրև պատարագ Աստուծու, որպեսզի Ան օգնության հասնի մեզի և մեր ազգային-եկեղեցական բոլոր ազնիվ, արդար երազնե-

ը իրականանան և հայ ժողովուրդը ամբողջությամբ ապրի իր ամբողջական հայրենիքին մեջ։

Ջափազանց հուզիչ, չերմ ու անմիջական էր 85-ամյա բայց միշտ երիտասարդ ու խանդավառ Վարպետի, աշխարհահռչակ Մարտիրոս Սարյանի ուղերձը.

«Վեհափա՛ռ Տեր.

Այսօր Հայության հոգևոր և աշխարհիկ պատվիրակները հավաքվել են տոնելու Ձեր գահակալության տասնամյակը։ Ես ևս միացնում եմ բոլորին իմ սրտագին ողջույնը։

Հայ ժողովուրդը մեծ և բարի ժողովուրդ է։ Դարեր շարունակ տրորել են նրան, նրա հողը, խմել նրա արյունը, զրկել պետականությունից, ցրել աշխարհով մեկ։ Դրանից է, որ մեզ համար առանձին նշանակություն է ստացել Եկեղեցին, որ շատ հաճախ փոխարինել է պետությանը, տեր կանգնել ժողովրդին։ Այսօր մենք Մայր Հայրենիքում ունենք պետություն և պետականություն, բայց մեր ժողովրդի կեսը դեռևս սփռված է աշխարհի չորս ծայրերը։ Ուրեմն Եկեղեցին նորից հանդիսանում է մեր աշխարհասփյուռ բեկորներին ի մի բերող զորեղ ուժերից մեկը։

Վեհափա՛ռ Տեր, ահա տասը տարի է, ինչ Դուք կոչումն ու պարտականությունն ունեք հոգևոր Հովվապետը լինելու հայության։

Թեև Դուք այս նվիրական Գահին բարձրացաք շատ երիտասարդ, սակայն հարազատ ժողովրդի հանդեպ ունեցած նվիրումն ու պատասխանատվությունը Ձեզ ներշնչեց բազմաձև մի իմաստություն, բարձր պահելու մեր գոյության հնամեի ամրոցը, Էջմիածնի կոթողը։ Գլխավորն այն է, որ Դուք կարողացաք մի նոր թափով նորոգել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուժն ու կոյությունը, համախմբել մեր ժողովրդին, անմար պահելու նրա մեջ ապրելու և հարատևելու կամքը, ստեղծելու և ստեղծագործելու ոգին։

Թույլ տվեք, որպես ամենաավագը այստեղ հավաքվածներից, մեր ամբողջ ժողովրդի կողմից շնորհակալություն հայտնել Ձեզ Ձեր այդ մեծ, ազգօգուտ գործունեության համար և ցանկանալ Ձեզ հետագա ուժ և կորով, իմաստնորեն առաջնորդելու Ձեր արդար առաքելությունը, ի փառս հայ հավատացյալ ժողովրդի։

Վեհափա՛ռ Տեր, ես ուրիշ առիթներով նկարել եմ Ձեզ։ Խոստանում եմ Ձեր տասնամյա գործունեության պայծառ լույսի ներքո նորից նկարելը։

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, պրոֆ. Ա. Առաքելյանը հանդես է գալիս հետևյալ ուղերձով.

«Առավելագույն հաճույքն ունեմ Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից շնորհավորելու Ձեր փառավոր տասնամյա հոբելյանը։

Վեհափա՛ռ Տեր, ելույթ ունեցողները ասացին այն ամենը, ինչ որ հեռավոր աշխարհում լսել և զգացել են։ Նրանք ինչքա՞ն ճիշտ են տեսել, ինչքա՞ն ճիշտ են դիտել Ձեր գործունեությունը։ Տասը տարի է, որ Ձեր սրբազան գահակալությունից սկսած, պատիվ ունեմ լինելու Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և աշխատելու Ձերդ Սրբության հետ։

Վեհափա՛ռ Տեր, միանալով բոլոր այն բարձանքներին, մաղթանքներին, որոնք արտահայտվեցին այստեղ, ես կկամենայի, որ Դուք արժանանայիք բազմաթիվ տասնամյակների։ Եվ այդ տասնամյակները կատարվեին մեր հայրենիքից հեռու գտնված սփյուռքահայության ներկայացուցիչների ներկայության, այլ ես կկամենայի, որ Ձեր հեռավոր տասնամյակին վերադարձած լինի Սփյուռքահայությունը իր հայրենիքը, և ցնծությամբ տոնեին Ձեր հարյուրամյակը, և երբ հայրենիքի բառարանից դուրս նետված լինի «Սփյուռք» բառը։ Ձեր փառավոր գործունեության մեջ ես կկամենայի կանգ առնել հատուկ նշել Ձեր գործունեությունը հանուն խաղաղության մղված աշխատանքում, թե՛ Ս. Էջմիածնի, թե՛ Մայր Հայրենիքի մեջ, թե՛ միջազգային շրջանակներում, կոնֆերանսներում։ Հայ Եկեղեցին, որ միացած հայ ժողովրդի հետ, միշտ եղած է խաղաղության օրրանը և երազել է վերացումը պատերազմների։

Պայքար ընդդեմ պատերազմի, պայքար հանուն խաղաղության. այդ երազանքը հայ ժողովրդի դարավոր ձգտումն է եղել նրա էության մեջ, արտահայտվել Հայ Եկեղեցու շարականների մեջ։

Ես պատեհ առիթ եմ համարում հիշեցնելու այստեղ մեր շարականների մի փոքրիկ կտորը։

«Մայր Սուրբ սքանչելի լուսոյնս» է կոչվում այդ շարականի սկիզբը, ուր ասվում է.

«Աղաչեա վասն մեր Սրբուհի, զմիածին քո զՈրդին.. զի չտեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի»։

Այս սրբազան պատգամը Դուք աշխատեցիք դարձնել համաշխարհային սեփականություն։ Եվ Ձեր այդ հիասքանչ գործունեության հետևանքով է, որ բարձր գնահատեց մեր հայրենի սիրելի կառավարությունը Ձեզ տվեց ամենարարձր պարգևը՝ Գերագույն սովետի նախագահության պատվոգիրը։

Փավստոս Բյուզանդ
(Նվեր քանդակագործ պրոֆ. Ստեփանյանից. Երևան)

Ձեր տասնամյակի հետ միասին, մենք շնորհավորում ենք նաև Ձեզ այդ բարձր պատվի համար։

Թող երկար ապրի մեր սիրելի Վեհափառը, բարձր բռնած իր ձեռքում խաղաղության նվիրական դրոշակը։

Այնուհետև ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ պր. Պուզինի ուղերձն է ընթերցում խորհրդի աշխատակից պր. Սոլովյովը.

«Ձե՛զ Սրբություն.

Հայ Առաքելական Եկեղեցու Հայրապետական Գահին բազմելու Ձեր տասնամյա գործունեության նվիրված հանդիսությունների առթիվ, թույլ տվեք ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի և անձամբ իմ անունից Ձեզ սրտագին շնորհավորել։

Մենք ճանաչում ենք Ձեզ, Ձերդ Սրբություն, որպես ժողովուրդների միջև խաղաղության և բարեկամության ակտիվորեն աշխատողի, որպես խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի մշտական անդամի, որպես խաղաղության կողմնակիցների միջազգային և համամիութենական բոլոր կոնգրեսների մշտական մասնակցողի և բարձր ենք գնահատում Ձեր ջանքերը այդ կարևոր գործում։

Ձեր ընտրությամբ որպես Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս և Ձեր գործուն մասնակցությամբ ու ղեկավարությամբ հատկապես լայնորեն ծավալվեց Հայ Եկեղեցու մեծ ու կարևոր աշխատանքը արտասահմանի հայերին Սովետական Սոցիալիստական Հայաստանի կյանքին և նվաճումներին ծանոթացնելու, դեպի Մայր Հայրենիքն ունեցած բոլոր հայերի հայրենասիրական զգացմունքները զարգացնելու ուղղությամբ։

Մաղթում եմ Ձեզ, Ձերդ Սրբություն, քաջառողջություն, երջանկություն և նորանոր մեծ հաջողություններ Ձեր ազնիվ, հայրենասիրական գործունեության ասպարեզում։

Ողջույնի ջերմ խոսքով հանդես է գալիս Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաֆյանը.

«Ձերդ Սրբություն.

Պատիվն ունեմ Հայաստանի կառավարության առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ կողմից սրտանց շնորհավորելու Ձեզ, Ձերդ վեհափառություն, Ձեր բազմաբեղուն գահակալության 10-րդ տարեդարձի առիթով։

Բազում տասնամյակներ և տասնյակ հարյուրամյակներ են անցել հայ ժողովրդի գլխից։ Եղել են վշտի, տառապանքի, պանդխտության տասնամյակներ, եղել են մաքառման ու պայքարի տասնյակ տարիներ և եղել են հաղթանակի ու ցնծության տասնամյակներ։ Հետադարձ հայացք ձգենք վերջին հինգ տասնամյակների վրա։ Այդ հիսուն տարիները, ինչպես մի կաթիլ ջրի մեջ, արտացոլում են մեր ժողովրդի կյանքի ու պատմության բնութագրական էությունը։

Այդ հիսուն տարիների առաջին տասնամյակը՝

Ցաքաղան ու մահ, Դեր-Զոր ու մահ, Եփրատ ու մահ, և այնուհետև, մահից մազապուրծ, բույներ օտար երկինքների տակ, պայքար ու մաքառում մարդկային գոյությունը պահպանելու համար։ Այդպես էր այն հայության համար, որը պատմության դժխեմ խաղով դժբախտությունն ունեցավ սփյուռքահայություն կոչվելու։

Մայր հողի վրա, սակայն, այդ տասնամյակի երկրորդ կեսին, ծնվեց մեր նոր պետականությունը, Սովետական Հայաստանի Հանրապետությունը, որը թիկունքը հենած հյուսիսի իր հզոր բարեկամներին, արևմուտքից իր վրա չռած արյունոտ աչքերի պղտոր հայացքի տակ, սկսեց կապել ժողովրդի վերքերը, հույս տալ նրան ապրելու և հաղթանակելու։

Այդ հիսուն տարիների երկրորդ, երրորդ, չորրորդ տասնամյակները՝

Սփյուռքը մաքառում է, մաքառում արդեն ազգային գոյությունը պահպանելու համար, ստեղծում հոգևոր հերոսական մշակույթ, որպես կռվան այդ մաքառման մեջ: Հիմնական կռվանը, սակայն, կոփվում է Մայր Հայրենիքում, կոփվում է օրեցօր հասակ նետող հզորագույն գործարանների քուրայում, կռանվում արևները երկինքն ի վեր շարտող հայ գիտնականների մտքի հրդեհի մեջ, ծուլվում մեր ծաղկող մշակույթի հարահոսուն նեկտարի շաղախով:

Այդ հիսուն տարիների հինգերորդ տասնամյակը՝

Ճիշտ հինգ տասնամյակ առաջ արյունախում թշնամին հոխորտում էր, թե հիսուն տարի հետո հայ չի լինի աշխարհիս երեսին: Այսօր մենք կանք, կանգուն ենք մեր հայրենիքի հողի վրա ոտքերով ամրապինդ՝ ներաճած, կանգուն ենք նաև Սփյուռքում: Եվ, ինչպես երբեք, սերտացել են Սփյուռքն ու հայրենիքը, մեկ սիրտ, մեկ մարմին, մեկ հույզ՝ հզոր տեսնելու երկիրը մեր, Սովետական Հայաստանը՝ հայ ժողովրդի փրկության միակ պատվարը:

Ձերդ Սրբություն.

Թվարկածս տասնամյակներից հինգերորդը համընկավ Ձերդ Սրբության գահակալության տարիներին, որպես Հայ Եկեղեցու Գերագույն Պետի: Այդ տասնամյակի ընթացքում Դուք Ձեր կարելին արեցիք՝ նվիրաբերելու համար Հայաստանյայց Եկեղեցու և անձնապես Ձեր բոլոր ուժերը խաղաղության պաշտպանության սրբազան գործին:

Ինչո՞ւ շեշտել այդ, կարող են հարցնել:

Խաղաղության դատը պաշտպանելով Դուք և Ձեր գլխավորած Եկեղեցին մեծագույն ծառայություն եք մատուցում ոչ միայն ամբողջ մարդկությանը, այլև մասնավորապես մեր Մայր Հայրենիքին, մեր հերոսական հայ ժողովրդին:

Մեր հինավուրց երկիրը վերաշինող հայ ժողովուրդը խաղաղություն է ուզում, որովհետև տևական խաղաղության մեջ միայն կարող է արդյունավետ պտղաբերել նրա շինարար հանճարը, մինչև լիակատար հաղթական ավարտի հասցնել ահա շուրջ հինգ տասնամյակ կառուցվող շենքը:

Սփյուռքի քույրերին ու եղբայրներին դր հարկի տակ առնելու ձգտող Մայր Երկիրը խաղաղություն է ուզում՝ մինչև վերջ և մինչև վերջին մարդը սպիտակ ջարդի ապրիլքսանչորսյան սպառնալիքից փրկելու համար:

Իր փոքր թիվը ուռճացնելու, մեր քաղցրիկ մանուկների դեմքին ժպիտը մշտապես կարկաչել տալու համար է ահա, որ հայ ժողովուրդը խաղաղություն է ուզում:

Դուք, Ձերդ Սրբություն, Ձեր այդ բարձր դիրքի մեջ, տասը տարի շարունակ, եղաք անխոնջ կինվորը խաղաղության բանակի:

Երեկ էր դեռ, երբ Ձեր ձայնը բարձր հնչեց խաղաղության վերջին, Հելսինկյան համաժողովին, պահանջելով և գործնական առաջարկներ անելով ամրապինդ խաղաղություն հաստատելու համար: Նույն Հելսինկյան համաժողովն էր որ միաձայնությամբ ընդունած իր որոշումներին մեջ դատապարտեց հայ ժողովրդի նկատմամբ գործադրված ցեղասպանությունը 50 տարիներ առաջ:

Նկատի ունենալով և ըստ արժանվույն գնահատելով Ձեր գործունեության այդ համամարդկային կողմը, մեր Մայր Հայրենիքի գերագույն իշխանությունը Ձեզ պարգևատրել է իր բարձրագույն պարգևով՝ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետի պատվոգրով:

Ընդունեցեք, խնդրեմ, Ձերդ Վեհափառություն, խորհրդիս և իմ սրտագին շնորհավորանքները նաև այս առիթով:

Տասնամակյաներ շատ են անցել մեր ժողովրդի գլխից, բայց ոչ մի տասնամյակում այնպես անքակտելի չի եղել կապը Մայր Հայրենիքի ու Սփյուռքի միջև, ինչպես վերջին տասնամյակում: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և նրա Գահակալը այստեղ էլ ունեցան իրենց արժանավոր ներդրումը: Արտասահմանի թեմերին տված Ձեր բազմաթիվ այցելություններով, Ձեր հայրենաշունչ խոսքով, Դուք մեծապես նպաստեցիք, որպեսզի սփյուռքահայությունը օրավուր համախմբվի Մայր Աթոռի և Մայր Հայաստանի շուրջ, առնի իր ազգային կեցության անմար կրակը այնտեղից ու տարածի շուրջը, խավարի և ազգալքման հոսանքի դեմ մաքառելով:

Թույլ տվեք մեկ անգամ ևս շնորհավորել Ձեզ այս հանդիսավոր հոբելյանի առիթով և քաջառողջություն ցանկալ ու հաջողություն Ձեր բեղուն գործունեության մեջ»:

Ընդհանուր խանդավառության և սրտագին մթնոլորտում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը՝ *իր շնորհակալության և օրհնության խոսքն ասելու.*

«Մեր գահակալության տասը տարիներուն մասին, կբոլորենք Մեր կյանքի հիսուն և յոթ տարիները: Եթե հետադարձ ակնարկ մը նետենք անցնող այս տարիներուն վրա, կնկատենք, թե Մեր հանրային գործունեությունը կբաշխվի երեք շրջաններու վրա, գրեթե հավասար տարիներով: 1929—1943 աշխատած ենք մանկավարժական ասպարեզի մեջ իբրև ուսուցիչ Բուքրեշի հայոց ազգային վարժարանի, 1943—1955 ստանձնած ենք հոգևոր առաջնությունը Ռումանահայ թեմին, իսկ 1955-են

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՊԱՏՐԻԱՐՔ ՊԱՊԱՆՑԱՆԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՑԱՆԸ։

ցայսօր. Աստուծոյ ողորմությա՛ր. կնառայենք մեր Ս. Եկեղեցիին իբրև Հայրապետ:

Թե ապագան ինչքա՞ն տարիներ ևս և գործունեության ի՞նչ արդյունքներ կվերապահե Մեկի. անծանոթ կմնա անշուշտ. բայց Մեր աղոթքը պիտի ըլլար. որ Տերը բավարար ժամանակ շնորհե՝ Մեկի. որպեսզի կարողանայինք շարունակել Մեր սկսբնավորած աշխատանքները. և գուցե նույնպես բախտ ունենայինք վանոնք բոլորը իրենց լրումին հասցնելու:

Այսօր. սակայն. Մենք մանավանդ գոհության և անհուն երախտագիտության խոսք ունինք ուղղյալ նախախնամության, որ Մեր տկար անձը արժանի դարձուց շուրջ 35 տարիներու աշխատանքի և ծառայության. նվիրված մեր Ս. Եկեղեցիին և մեր հարազատ ժողովուրդին:

Գուցցե սխալած չենք ըլլար. եթե վկայենք. թե տակավին Մեր երիտասարդության տարիներուն, ներքին սպասումի և որոնումի զգացումներ խլրտած են Մեր հոգիեն ներս. անորոշ, սակայն տևական ու հետզհետե խռովիչ ուժգնությամբ:

Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներու միջև ժամանակաշրջանին, շնորհիվ Ռումանիո ազգային-եկեղեցական կյանքեն ներս ստեղծված մթնոլորտին և շնորհիվ այդ շրջանին գործող մտավորական անձնավորությանց Մեր վրա թողած ազդեցության. կարողացանք գտնել պատասխանը Մեր հոգիի սպասումներուն: Ոգին և լույսը. որ փոխանցվեցան Մեկի այդ տարիներուն, ճշմարիտ ու վավերական հայտնություններ հանդիսացան Մեր գիտակցության որոնումներու ճանապարհին վրայ: Այդպես է. որ օտար հյուրընկալ ափերու վրա, մեր սերունդն ալ կարողացավ գտնել ազբյուրը հայկական ոգեկանության և ազգային գիտակցության ու արժանապատվության: Խոսելով անձնապես Մեր պարագայի մասին. պետք է հաստատենք. թե Մեր ոգեկան-իմացական կազմավորման հիմքերը հանդիսացած են Մեր գիտակցության մեջ աճող ու հետզհետե տիրական դարձող երկու ապրումներ՝ մեր ժողովուրդի 1915-ի ահավոր ողբերգությունը և ապա հաջորդող վերածնունդը. հայ պետության վերականգնումը: Այս ոգեկան ապրումներու. հույսի և լույսի որոնումներու Մեր կյանքի ճամբուն վրա. Մեկի հայտնվեցավ սրբազան բարձունք մը, Աստուածակառույց Ս. Էջմիածինը, բյուրեղ խորհուրդը հայ քրիստոնեության, ծնող մայրը Հայաստանյայց Եկեղեցիին, գերագույն ապավենը հայ հավատացյալ ժողովուրդին:

Այս պահուն Մենք կանգնած ենք Մեր գահակալության տասներորդ տարեդարձի սեմին և դուք և Մենք մեր հայացքը կուղղենք դեպի անցյալ տասը տարիները և այդ շրջանին Մայր Աթոռիս ծավալած գործունեությունը:

Սույն հանդիսավոր պահուն. նախ կու գանք Մեր ջերմ շնորհակալությունը հայտնելու մեր քույր եկեղեցիներու պետերուն և բարձր ներկայացուցիչներուն, որոնք ներկա են այստեղ և իրենց քաղցր խոսքով եկան առավել ամրապնդելու քրիստոնեական սիրո կապերը. որ դնեկ բոլորս կմիացնեն տարիներե ի վեր: Եղբայրական սրտաբուխ զգացումներով խոնջունենք Նորին Սրբություն Եփրեմ Կաթողիկոսը Համայն Վրաստանի. Նորին ամենապատվություն Իգնատիոս-Պետրոս Սրբազան Պատրիարքը կաթողիկե Հայոց. Նորին Ամենապատվություն Եղիշե Սրբազան Պատրիարքը հայոց Երուսաղեմի. Նորին Գերաշնորհություն Իոսաֆ Միտրոպոլիտը՝ բարձրապատիվ ներկայացուցիչը Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցվո. Նորին Գերաշնորհություն Տ. Տաճատ Արքեպիսկոպոս՝ սրբազան ներկայացուցիչը Նորին Սրբություն Խորեն Կաթողիկոսի Տանն Կիլիկիո. Նորին Գերաշնորհություն Աբունա Պետրոս Միտրոպոլիտը՝ բարձրապատիվ ներկայացուցիչը Նորին Սրբություն Բասիլիոս Պատրիարքի Եթովպական Եկեղեցվո. Նորին Գերապայծառություն Ժան Ռուպ Սրբազան Եպիսկոպոսը Մոնակոյի:

Բազմադարյան Ս. Էջմիածինը կգնծա այսօր և փառք կուտա Ամենակալին. որ իրեն կշնորհվի երջանկությունը իր կամարներուն ներքև համախմբված տեսնելու այսքան փայլուն ներկայացուցիչներ քույր եկեղեցիներու: Ահավասիկ վկայություն մը ևս քրիստոնեական սիրո և բարեկամության ոգիի. որ մանավանդ մեր օրերուն հետզհետե կաճի ու կպայծառանա: Ոգի մը. որ կը հուսանք. թե գալիք ժամանակներուն. իր զորության ու տիեզերական ճառագայթումի լրումին պիտի հասնի. ի կենսագործում աշխարհի բոլոր քրիստոնյաներ մարդոց եղբայրության և եկեղեցիներու միության. Քրիստոսի աստվածային սիրույն մեջ: Թող Տերը օգնե Մեկի. որպեսզի սորվինք Իր կամքը իրագործել երկրի վրա:

Տասը տարիները. որ անցան. եղան իրոք աշխատանքի և իրագործումներու տարիներ Հայաստանյայց Եկեղեցիի և հատկապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար: Այդ մասին ունկնդրեցինք զեկուցումը Գերագույն Հոգևոր Խորհուրդին: Այդ մասին խոսվեցավ երեկ ու այսօր: Ցույց տրվեցավ Մեր անձը իբրև առաջին աշխատողը այդ իրագործումներու ճանապարհին վրա: Մենք շնորհակալություն կհայտնենք բոլորին. Մեկի ուղղված գնահատանքի խոսքերուն համար. բայց կուզենք հաստատել անկեղծ սրտով. թե Մայր Աթոռիս ձեռք բերած բոլոր հաջողությունները և շինարարա-

կան ձեռնարկները եղած են արդյունքը հավաքական գործակցության, մեր երկրի մեջ ստեղծված օրինական և գործնական նպաստավոր պայմաններուն և մեր բարեպաշտ ժողովուրդի նվիրաբերած լումաներուն: Անձնապես Մենք, պարզապես աշխատած ու հետապնդած ենք կազմակերպել Մեր շուրջի կենդանի ուժերը և օգտագործել տվյալ պայմանները և հնարավորությունները, Մեր Եկեղեցիին և Մայր Աթոռին առավելագույն օգուտին համար: Չենք տարվիր տուրք տալու մակերեսային համեստության մը զգացումին, թերագնահատելու համար Մեր գործունեության արդյունքները, սակայն չենք ալ վարանիր մտածելու և վկայելու, թե կրցանք իրագործել ոչ այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր և ըղձալի: Անհրաժեշտը ավելին էր քան հնարավորը: Անտարակույս թե տակավին շատ բան կա ընելիք, տակավին երկար ճամբա կա կտրելիք, հասնելու համար և հասցնելու համար մեր Ս. Եկեղեցին այն բարձունքին, որուն ան արժանի է իսկապես: Այդ՝ մեր բոլորի կյանքի սուրբ նպատակը պետք է ըլլա, այժմ և այսուհետև:

Մայր Աթոռի վերջին տասը տարիներու գործունեության արդյունավետությունը կպարտինք նախ մեր հայրենի պետական իշխանությանց, ինչպես նաև մեր միութենական կառավարության, որոնք ամեն հնարավորություն և նպաստավոր պայմաններ ստեղծեցին, որպեսզի Մենք կարողանանք քայլ առ քայլ կյանքի կոչել մեր ծրագիրները և առաջադրանքները: Ավելին, մեր պետական իշխանությունները եղան Մայր Աթոռիս և անձամբ Մեզի հանդեպ հույժ բարյացակամ և քաղցրորեն ուշադիր: Հարգալից երախտագիտություն կհայտնենք մեր Մայր Հայրենիքի պետական իշխանության և Խորհրդային Միության կեդրոնական կառավարության, այն համոզումով, որ նաև հառաջիկային Ս. Էջմիածինը և մեր Եկեղեցին պիտի շարունակեն վայելել մեր պետական իշխանություններու նույն ուշադրությունը և բարյացակամությունը, օրենքի սահմաններու մեջ: Մեր խորին շնորհակալությունը Հայաստանի մեր հարգալատ կառավարության այն պատվոգրին համար, որ Մեր սրտին համար գերագույն մխիթարություն կհանդիսանա:

Պարտինք այստեղ Մեր շնորհակալությունը հայտնել նաև Մեր բոլոր գործակից հոգևորական եղբայրներուն, մեր Եկեղեցվո նվիրապետական Աթոռներու գահակալներուն և թեմական սրբազան առաջնորդներուն, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, և Մայր Աթոռիս կինվորյալ միաբանության, որոնք Ս. Էջմիածնի աստուածային օրհնության ներքո, իրենց նվիրական առաքելությունը ի գործ կդնեն անխախտ ուխտապահությամբ, նվիրյալի հավատարմությամբ և բարեջան գործունեությամբ: Մեր շնորհակալությունը կտարածվի նաև բոլոր անոնց վրա, որ կշրջապատեն մեր թեմական առաջնորդները ու կաշխատակցին անոնց, իբրև թեմական-եկեղեցական կազմակերպությանց անդամներ, հոգևորական թե աշխարհական, հարազատ կավակները մեր Ս. Եկեղեցվո, և իրենց անձնվեր և բանիմաց աշխատանքով, շեն ու պայծառ կպահեն մեր եկեղեցիները, ի հոգևոր շինություն Մեր հավատացյալ կավակներուն:

Ջերմ երախտագիտություն նաև Մայր Աթոռիս բարերարներուն: Մեր գահակալության տարիներուն, Մեր հաւատավոր ժողովուրդի ծոցին մեջ գտանք և ճանչցանք պատվական ազգայիններ, ճշմարտապես ընտրյալ հայ հոգիներ, որոնք անհուն սիրով, գուրգուրանքով և հայկական զմայլելի գիտակցությամբ մոտեցան Մայր Աթոռիս, մեր հին փառքի օրերու բարեպաշտ ոգիով, և իրենց սրտի ընծան նվիրաբերեցին, որպեսզի վերաշինվին մեր շարք մը սուրբ տաճարները, որպեսզի ապրի ու գործե մեր Հոգևոր Ճեմարանը, որպեսզի վերստին կյանքի կոչվի մեր տպարանը, որպեսզի ուրախ ու բարօր ապրի և փառավորվի Ս. Էջմիածինը, որպեսզի մխիթարվի Հայոց Հայրապետի սիրտը: Մենք հպարտ ենք Մեր ժողովուրդով: Մենք հպարտ ենք Մեր բարերարներով: Շնորհակալություն և օրհնություն բոլորին: Անոնց անունները, որոնք հիշվեցան Գերագույն Հոգևոր Խորհուրդի վեկուցագրին մեջ, անջնջելի պիտի մնան Մեր սրտերուն մեջ և մեր սրբավայրերու հավատամյա քարերուն վրա:

Պարտինք Մեր գոհունակությունը և շնորհակալությունը հայտնել այսօր Մայր Աթոռիս Գերագույն Հոգևոր Խորհուրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներուն, ինչպես և ճարտարապետներու մեր հանձնաժողովին, որոնք Մեր գործունեության տասը տարիներու ընթացքին եղան Մեր թանկագին ու անփոխարինելի խորհրդականները և աշխատակիցները: Գերագույն Հոգևոր Խորհուրդի և Վերստուգիչ հանձնաժողովի հարգելի անդամները, ամբողջական նվիրվածությամբ ու հավատարմությամբ, միշտ Մեր կողքին գտնվեցան, իրենց կարելին ընելով ի խնդիր մանավանդ Մայր Աթոռիս և ներքին թեմերու վարչա-կազմակերպչական և տնտեսական գործունեության, բարեկարգման ու կարգապահության:

Մայր Աթոռիս կից ճարտարապետներու հանձնաժողովին Մեզի ընծայած նպաստը վեր է ամեն գնահատանքե: Անոնք իրենց գիտությամբ ու փորձառությամբ, հայ ճարտարապետության և արվեստի խոր ճանաչողությամբ ու վաստակական զգացողությամբ, այլ և Մեզի հիացում առթող գուրգուրանքով և անշահախնդրու-

ամբ, տևականորեն տարիներ շարունակ հսկե-
ս, հետևաբար, ուղղություն տվին Մեր շինա-
րական բոլոր աշխատանքներուն և ապահո-
վին հաջողությամբ պսակումը և փայլուն կա-
տարումը Մեր բոլոր առաջադրանքներուն և
ծրագիրներուն, անմիջական ղեկավարության
տակ Մայր Աթոռիս գլխավոր ճարտարապե-
տին: Շնորհակալություն մեր սքանչելի և սիրելի
ճարտարապետներուն:

Մեր ջերմ գնահատանքի և գոհության խոսքը
ուղղվի նաև տաղանդաշատ նկարիչներուն և
մանդակագործներուն, որոնք իրենց արվեստով
զարդարեցին մեր շինարարական աշ-
խատանքները, ի մասնավորի Մայր Տաճարին և
իր Վեհարանին ներս, Օշականի եկեղեցին՝
ուանկարներով, և Նահատակաց հուշարձանի
գրտումով, որուն բացումը կատարեցինք երեկ:

Մեր անկեղծ գնահատանքը պետք է հայտ-
նենք նաև քանդակող հմուտ վարպետներուն,
մնարար արհեստավորներուն և բանվորներուն,
որոնք կատարողական վարպետությամբ, իրենց
ուրդար քրտինքով ու բարի ձեռքերով իրագործ-
ցին մեր ճարտարապետներու, նկարիչներու
քանդակագործներու հղացումները և նախա-
գծերը:

Մեր մասնավոր գնահատանքին արժանի են
նաև Մայր Աթոռիս մեջ գործող հաստատու-
թյուններու և վարչակազմակերպչական բաժին-
երու ղեկավարները: Մեր դասախոսական
ազմը, ի գլուխ ունենալով տեսչությունը, իր
արելին ի գործ դրած է միշտ, բարձր պահելու
համար կրթական-դաստիարակչական մակար-
դակը մեր Հոգևոր Ճեմարանին: Մայր Աթոռիս
աշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը վերջին
սաս տարիներուն արձանագրած է հարատև
առաջընթաց, դառնալով սիրված ու հեղինա-
վոր կրոնական և գիտական պարբերաթերթ
ը, թե՛ այստեղ և թե՛ արտասահմանի մեջ:

Մեր դիվանատունը և տնտեսա-հաշվապա-
ական վարչությունը, ինչպես և Մայր Աթոռիս
ամանգարանը և միաբանական ճաշարանի բա-
ինները, իրենց պատասխանատու վարիչներով
պաշտոնյաներով, լավ կազմակերպված ու
արեխիղճ ղեկավարված բաժիններ են, որոնք
գնահատելի արդյունավետությամբ կկենսա-
գործեն Մեր առաջադրանքները, աշխատանքի
զարգացման հոյակապ գիտակցությամբ: Շնոր-
հակալություն բոլորին:

Պետք է այստեղ գոհունակությամբ վկայենք
նաև, թե Մայր Աթոռիս միաբան և աշխարհական
վարիչներու ձեռքին տակ աշխատող Մեր պաշ-
տոնյաները, արհեստավորները, մեքենավարնե-
ը, հավաքարարները և բանվորները, առ-
հասարակ չարքաշ ու սրտցավ աշխատանքի
բարի մարդիկ են: Մենք շատ հաճախ կզգանք,
թե անոնց բոլորին հոգիներեն ներս կառկայծե
Ս. Էջմիածնին ծառայելու բարեպաշտ ու ակնիվ
զգացումը:

Մեր գնահատանքը և Մեր Հայրապետական
օրհնությունը անոնց բոլորին անխտիր:

Մեր գործունեության ընթացքին եթե պատա-
հած են պարագաներ, երբ մեր միաբաններուն,
մեր պաշտոնյաներուն կամ ծառայողներուն
նկատմամբ ունեցած ենք խիստ վերաբերմունք
և կամ տված ենք որոշումներ, որոնք նկատված
են անարդար, Մենք այդ բոլորի համար Մեր
ցավը կհայտնենք անկեղծորեն:

Սրբազա՛ն Հայրեր, մեծարգո՛ պատգամավոր-
ներ և հյուրեր.

Գոհության և շնորհակալության խոսքեն հե-
տո, կկամենանք Մեր մտածումը արտահայտել
հետագա Մեր գործունեության նկատմամբ:

Ինչպես տասը տարիներ առաջ, այսօր ալ
Մեր առաջ կանգնած են բազում հարցեր և բա-
զում ծրագիրներ: Մենք ուրախ ենք անշուշտ և
հոգեպես իրոք մխիթարված, ցարդ կատարված
իրագործումներուն համար: Այս իրողությունը
Մեզի ստույգ ապահովություն կներշնչե, թե
նաև այսուհետև Մեր և Մեր լծակից եղբայր-
ներու և Մեր բոլոր գործակիցներու միասնա-
կան ու կազմակերպված համառ աշխատանքով,
պիտի կարենանք նոր շինարար իրագործումներ
արձանագրել մեր Ս. Եկեղեցվո և Մայր Աթո-
ռիս առաքելության ճամբուն վրա:

Մենք բոլորս նախ մեր ուշադրությունը պետք
է կեդրոնացնենք մեր ներքին հոգևոր կյանքին
վրա և ոչ մեկ ջանք ու զոհողություն չխնա-
յենք, որպեսզի ապահովենք մեր եկեղեցիներու
պաշտաոնությունը և մեր հավատացյալ ժողովուր-
դի հոգևոր կյանքի շինությունը և առաջնոր-
դությունը՝ առավել աստուածահաճո արդու-
նավետությամբ: Արթուն կերպով պետք է հսկենք
մանավանդ, որպեսզի մեր Եկեղեցվո բոլոր
սպասավորները հավատարիմ մնան իրենց ուխ-
տին և իրենց նվիրական ծառայությունը կա-
տարեն, իբրև արժանավոր և առանց ամոթի
մշակներ: Այս կերպով միայն պիտի կարողա-
նանք ամրապնդել մեր Եկեղեցվո ներքին զո-
րությունը, հեղինակությունը և հմայքը հայս
ժողովուրդին: Մեր իղձն է և սպասումը, որ հայ
հոգևորականությունը, գիտակից իր վսեմ կո-
չումին, հոգիով չտկարանա և զոհ չդառնա
այլևայլ փորձությանց:

Հայ Եկեղեցին իր հերոսական պատմությամբ,
իր հին փառքերով, իր իմացական ոգեկան ար-
ժեքներու շտեմարանով և արդի հոգևոր և ազ-
գային առաքելությամբ, սքանչելի և անկրկնելի
սրբություն մըն է և հոյաշեն կոթող մը, որուն
Սեղանին պետք է ծառայել գիտանք իրավ
հավատքով, անձնուրացությամբ, խոնարհու-
թյամբ և անհոգնաբեկ աշխատանքով: Փա՜ռք և
պատի՜վ բոլոր Մեր Սրբազան Եղբայրներուն,

մեր գերաշնորհ եպիսկոպոսներուն, հոգեշնորհ վարդապետներուն և արժանապատիվ քահանա հայրերուն, որոնք այս գիտակցությամբ կապրին ու կգործեն Տիրոջ այգիին մեջ:

Հայ Եկեղեցին արևի լույսին պես կարիքը ունի նաև ներքին խաղաղության և միության: Նվիրապետական Աթոռներ, առաջնորդություններ և հովվություններ իրենց հոգևորական և աշխարհական պատասխանատու ղեկավարներով, մեկ և անբաժանելի ամբողջություն կկազմեն, ապրող ու գործող պատմականորեն ծնած ու զարգացած բազմադարյան կենդանի մարմին մը, ի գլուխ ունենալով Հայրապետական աստվածադիր Աթոռը ամենայն հայոց, ի Ս. Էջմիածին:

Հայ Եկեղեցվո միությունը և հավատացյալ ժողովուրդի միասնությունը ամրապնդելու ճամբուն վրա, վերջին տասը տարիներուն, Մենք ունեցանք, այո՛, որոշ դժվարություններ և հուսախաբություններ Անթիլիաս հաստատված մեր Կիլիկիայան Աթոռին կողմե, իբրև հետևանք որոշ մտայնությանց և իրադրությանց, որոնք աղերս չունին հոգևոր-եկեղեցական կյանքի հետ: Այդ անբաղձալի կացությունը կշարունակվի ցայսօր, նաև 1963-ի Երուսաղեմի ողջագուրումեն հետո:

Հակառակ Մեր բարի կամեցողության ու խաղաղասիրական հրավերներուն, դժբախտ մտայնությամբ մը, կշարունակվի Սիսյանքի մեր եկեղեցիները և թեմերը Ս. Էջմիածնեն բաժանելու ծրագրի գործադրությունը: Մենք անձանձրույթ կերպով միշտ բարձր պիտի հնչեցնենք ներքին խաղաղության, միասնության և օրինականության հրավերները ու եղբայրական զգացումներով լի, պիտի սպասենք, որ ուղղամտորեն կենսագործվի, մեր եկեղեցական կյանքին մեջ, Երուսաղեմի ողջագուրումի շնորհաբեր դգին: Այդ իսկ նպատակով, Մեր հոգեկան բոլոր ուժերով պիտի շարունակենք վճռականությամբ պաշտպանել Ս. Էջմիածինը, Հայ Եկեղեցվո դարավոր կանոնները, նվիրապետական ավանդական իրավունքները և մեր հոգևոր, ազգային կյանքի միությունը:

Ի սիրուս աշխարհի ցիրուցան ապրող մեր ժողովուրդի զավակները, մնալով օրինապահ և հավատարիմ քաղաքացիները իրենց բնակած երկիրներուն և կազմակերպելով իրենց եկեղեցական-մշակութային կյանքը համաձայն տեղական պետական օրենքներուն և պայմաններուն, բնական է, հնարավոր է և անհրաժեշտ, որ պահեն իրենց կրոնական ավանդները և եկեղեցական միասնությունը՝ Ամենայն Հայոց Հայրապետության հոգևոր իշխանության ներքև:

Արտասահմանի Մեր զավակներուն նկատմամբ Մեր գերագույն մտահոգությունն է հայ հոգիի ամբողջ ու անաղարտ պահպանումը, ձուլման հզոր հորձանքներուն դեմ: Հայությունը իր բոլոր ուժերով պետք է համախմբվի կազմակերպե իր գոյատևման պաշտպանությունը: Այդ նվիրական նպատակի կենսագործման ճամբուն վրա, վճռական նշանակություն ունի Մայր Աթոռի աշխատանքի բաժին Առանց Սուրբ Էջմիածնի, անհաղորդ մնալու անոր աստվածային օրհնության շնորհներու և ավելին տակավին՝ հակադրվելով անոր, հարավոր չէ երկար ժամանակ առողջ, ամբողջ կենդանի պահպանել արտասահմանի Մեր վատացյալ ժողովուրդի հայկական հոգին:

Համայն հայ հավատացյալ ժողովուրդի հոգևոր ու ազգային միության ամրապնդումը Ս. Էջմիածնի աստվածային օրհնությունները, պատմական առաքելություն մըն է, ավելի քան երբեք կենսական անհրաժեշտություն է այսօր:

Մեր ապագա գործունեության մեջ նաև սուհետև կեդրոնական ու առաջնահերթ պիտի գրավեն Մեր շինարարական աշխատանքները: Մեր առօրյա կյանքի տևական դրախությունն է տեսնել Մայր Աթոռիս շինարարական առաջադրանքներու քայլ առ քայլ կատարումը: Հայ հողի վրա բնակող մարդիկ հոգեբանության անբաժան խոր ապրումներ վերաշինելու, կառուցանելու ակնով կիրքը, երբև պատասխան՝ անցնող դարերու աղետներով ու ողբերգություններով լեցուն դարերուն ժամանակներուն: Մայր Աթոռը, այստեղ մեր բոլորս, համակված ենք այդ կիրքով, որ մեր գերագույն երջանկությունը կհանդիսանա Հայոց Մայր Հողի վրա կառուցանելով, վերականգնելով ու ստեղծագործելով միայն, ճշմարտապես մեր հարգանքը մատուցած կըլլանք մեր նահատակներու հիշատակին և ստուգապես նպաստած կըլլանք մեր հայրենիքի կորացման մեր ազգի հառաջդիմության և մեր ապագայի առավել պայծառացման:

Վստահ ենք, թե նաև արտասահման ապրող մեր հավատացյալները, նույն զգացումներով լեցուն, պիտի շարունակեն իրենց նյութական ու բարոյական օժանդակությունը ընծայաբերել որպեսզի նոր պատմական հուշարձաններ՝ եկեղեցիներ, վանքեր վերաշինվին, որպեսզի նոր շինարարական ու բարեկարգման ծրագիրներ կարենան կյանքի կոչվիլ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, քրիստոնեական մարդասիրական հոգիով ու տուրբ եռանդով, պիտի շարունակե նաև իր խոսքը ըսել և իր ազատանքը ծավալել հանուն եկեղեցիներու ժողովուրդներու մերձեցման, փոխըմբռնման սերտ բարեկամության և հանուն աշխարհի խաղաղության: Եկեղեցիներու և ժողովուրդների խաղաղ համակեցությունը և շինարար գործակցությունը այն միակ ուղին է, որ կրնա մարդ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՍԿԵԶՈՒՅԼ ՍԿԻՀ

Նվեր Գերագույն Հոգևոր Խորհրդի, արդյամբ տեր և տիկին Ա. Գյուրջյանների:

(Գործ՝ ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի և քանդակող ոսկերիչ Փիրայր Զուլոյանի):



թյունը առաջնորդել դեպի կյանք, դեպի լույս, դեպի արդարություն և ապատություն: Բարոյական տիեզերքը նվաճող և հյուլեական մեջ սանձապերծող մարդկությունը, եթե կկանգնա իր կյանքը և իր առաքելությունը շարունակել այս երկրագնդի վրա, պետք է գտնե ճարտարարը, նվաճելու համար նաև մարդու հոգեկան տիեզերքը և հայտնաբերելու ու սանձաբերելու այդ տիեզերքի ոգեկան-բարոյական ուժերը: Քրիստոսի Ս. Ավետարանը, կհավատանք Մենք, թե «աշխարհի լույս»-ն է, որ մարդկության ցույց կու տա ճամբան դեպի այդ տիեզերքը: Հետևաբար բախտորոշ կնկատենք մենք քրիստոնեական եկեղեցիներու նպաստը՝ խնդիր մարդոց եղբայրության և աշխարհի խաղաղության:

Մենք, Հայոց Հայրապետ, Ս. Էջմիածնի աստվածապարգև բարձունքեն կոչ կընենք մեր եկեղեցվո բոլոր նվիրապետական Աթոռներուն, մեր բոլոր թեմական առաջնորդներուն և հոգևոր դասավորներուն, որպեսզի սուրբ եռանդով քարոզեն ու գործեն, Հայ Եկեղեցիին, հայ ժողովուրդին ու մարդկության ծառայելու վճիտ գիտակցությամբ:

Աստուծո օրհնությունը և օգնականությունը հայցենք բոլոր խաղաղարար ուժերուն և ձեռնարկներուն:

Տասը տարիներ առաջ, երբ կոչվեցանք բարձանալ Լուսավորչի Ս. Աթոռին վրա, կկգանք այրող ծանրությունը Մեր ուսերուն դրված լուծին: Այդ լուծը իրոք ծանր էր, իսկ Մեր ուսերը՝ շատ տկար: Առաջին օրերուն հուսահատության պահեր ապրեցանք: Մեր ուրջը ամեն բան երերուն և անորոշ կթվեր, խաղվան օրը անստույգ ու երկյուղաբեր: Իսկ Մեր կողքին՝ ոչ ոք, որ կարողանար Մեր ձեռքեն բռնել: Այնքան էինք տկար ու երկչոտ, որ վստահություն չունեինք ոչ ոքի վրա և ոչ մեկ բանի վրա: Այդ էր Մեր հոգեկան վիճակը այդ օրերուն: Եվ սակայն շատ չանցած, օգնական ձեռքը հասավ Մեզի: Աստուծո ամենակոր և սերևույթ օգնությունն էր այդ, ներշնչող ու հզորիչ խորհուրդը այս հինավուրց Ս. Տաճարի ծանր քարերուն, թե պատգամը, որ Մեզի կուգար դարերու խորքեն և մեր ժողովուրդի հավատքի լույս աղբյուրներեն:

Տակավ Մեր հոգին պայծառացավ, Մեր միտքը հստակացավ, սկսանք տեսնել աշխատանքի ճամբան շինարար, սկսանք ճանչնալ ու սիրել մարդիկը, որ կը շրջապատեին Մեզ: Եվ Մեր սիրտն ու ձեռքը այլևս չդողացին:

Սրբական կիրք մը կրակ առավ Մեր էության մեջ: Փարատեցան Մեր բոլոր երկյուղները մեր շուրջ ալեկոծվող դժվարություններուն և տագնապներուն առջև: Հստակորեն, նույնիսկ շոշափելի կերպով զգացինք, թե Մեր անձին մեջ մարմին ու կյանք կառնե գաղափարը Հայրապետին Հայոց: Մեր եսը շիջեցավ ու չքացավ գրեթե:

Մենք կհավատանք հիմա, թե հայոց աստվածահաստատ այս Ս. Աթոռին վրա, Ս. Գրիգոր Լուսավորչի օրերեն սկսյալ, կա ու կմնա հավետ անսասան, հավետ անփոփոխ՝ Հայրապետը Ամենայն Հայոց: Կան գաղափարներ, որոնք ավելի իրական են, քան շոշափելի և երևելի իրողությունները: Անոնք բյուրեղացումներն են դարերու հոլովույթով գոյացած ավանդություններուն, սերունդներու կենսափորձով նվիրագործված ու դավանանք դարձած ըմբռնումներուն:

Հայոց քրիստոնեական հավատքը, հայ հողին վրա Փրկչի իջման տեսիլքով կոթողված այդ հավատքի հրեղեն սյուն Ս. Էջմիածինը, Հայոց Հայրապետության Ս. Աթոռը, ահա՝ վեմ գաղափարները մեր Եկեղեցիին, մեր հավատացյալ ժողովուրդին:

Մենք կհավատանք այդ մեծ գաղափարներուն և անոնց ապրող կորության: Մենք կհավատանք, թե այդ հավետ կենդանի գաղափարներն են, որ պահ մը կգործեն նաև Մեր միջոցավ, համաձայն նախախնամության մը, որ «անիմանալի է և ի վեր քան զմեզ»:

Եվ եթե իրոք մխիթարություն մը ունինք այս պահուս, Մեր աշխատանքի տասը տարիներու լրումին, այն է, թե Մեր տկար անձը բախտավորությունը ունեցավ Իր ուսերուն վրա կրելու այրող լուծը այդ գաղափարներու լույսին, որ առաջին անգամ շողաց հայոց աշխարհի վրա Ս. Լուսավորչի հրաշք տեսիլքով: Այդ տեսիլքն է, որ կհետապնդե, կոգեշնչե ու կառաջնորդե մեզ բոլորս: Ս. Էջմիածինը Աստված պարգևեց մեզի: Ս. Էջմիածինը Հայոց Սրբություն Սրբոցն է: Ս. Էջմիածինը Տիրոջ պահապան ու պաշտպան Աջն է Հայոց աշխարհի վրա տարածվող, երեկ, այսօր և հավիտյան:

Մեր կյանքի ու աշխատանքի այս հանգրվանին, Մենք կխոնարհինք Ս. Էջմիածնի և անոր փառաց լույսին առջև ու կհայցենք Աստուծո օգնականությունը և օրհնությունը Մեր ապագա գործունեության համար:

«Ցույց մեզ, Տէր, զողորմութիւնս Քո, և զփրկութիւնս Քո տուր մեզ» (Սաղմ. ՁԴ 8):

Ամէն»:

Պաշտոնական ընդունելություն

Նոյեմբերի 1-ին, երկուշաբթի, *երեկոյան ժամը 7-ին, Երևանի «Արմենիա» հյուրանոցի ընդարձակ և շքեղ սրահում, Գերագույն Հոգևոր Խորհուրդը, Վեհափառ Հայրապետի գահակալության 10-րդ տարեդարձի առթիվ, կազմակերպել էր պաշտոնական ընդունելու-*

թյուն, մասնակցությամբ ավելի քան 200 հրավիրյալների։

Պատվո սեղանի շուրջ տեղ էին գրավել Վեհափառ Հայրապետը, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաբյանը, Համայն Վրաց Կաթողիկոս Տ. Եփրեմ Բ-ը, Հայ Կաթողիկե եկեղեցու Պատրիարք Տ. Իգնատիոս-Պետրոս Պաքանյանը, Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Եղիշե Արքեպիսկոպոսը, Իսպահ Միտրոպոլիտը, Մոնակոյի Ժան Ռուպ եպիսկոպոսը, Տ. Մամբրե, Տ. Սիոն, Տ. Սերովբե, Տ. Տաճատ արքեպիսկոպոսները։

Հրավիրյալների թվում են բոլոր հոգևորական և աշխարհիկ ներկայացուցիչները, հյուրերը, մտավորականներ և արվեստագետներ Մայր Հայրենիքից և Սփյուռքից։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Որպես սեղանապետ այն ղեկավարում է Եղիշե Պատրիարքը։

Հայրենի երկրի բազմազան բարիքներով զարդարված սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ, սրտագին մթնոլորտ։

Հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ մթնոլորտում, Ամենապատիվ Տ. Եղիշե Պատրիարքը առաջին բաժակը բարձրացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, հավերժության և Վեհափառ Հայրապետի թանկագին կյանքի արևշատության համար։

Ամբողջ դահլիճով մեկ, հոտնկայս, հանդիսավոր և վեհ, հնչում է «Էջ Միածինն ի Հօրէ» Մայր Աթոռի հիմնը։

Ջերմ ծափերի մեջ, Վեհափառ Հայրապետը երկրորդ բաժակը առաջարկում է խմել, երախտագիտական ու շնորհակալության զգացմունքներով, հայրենի բարեխնամ կառավարության և ընդունելության ներկա պետական անձնավորությունների կենաց, ի դեմս Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաբյանի։

Երրորդ բաժակը պր. Կ. Դալլաբյանն առաջարկում է հայ ժողովրդի կենացը և նրա արժանավորագույն զավակ Վեհափառ Հայրապետի կենացը։

Վերջին քաղցր բաժակը Վեհափառ Հայրապետը առաջարկում է խմել հայ մտավորականության և նրա արժանավոր ներկայացուցիչների՝ գրողների, արվեստագետների, պատմաբանների, գիտնականների կենացը։

Ամբողջ դահլիճով մեկ թնդում է ուրախ ծափերի որոտը։ Բաժակ են բարձրացնում բոլորը՝ ընդունելության ներկա բանաստեղծների, գրողների, արվեստագետների, ճա տարապետների կենացը։

Բարեշնորհ Գրիգոր սարկավագ Բուենա յանը արտասանում է գրաբար մի հատվ նվիրված՝ Վարդանի ճառից և Գեղամ Սարյան «Դեպի կառափնարան»-ը։

Շնորհալի բանաստեղծուհի Սիլվա Կապ տիկյանը, խորին լռության մեջ, հուզմունք արտասանում է «Հոգ Արարատի մասին» անտիպ քերթվածներից մեկը, սրտագին ծ փեր խլելով։

Նույնքան սիրված բանաստեղծ Գեորգ միլը արտասանում է «Մենք փոքր էինք» գ ղեցիկ բանաստեղծությունը, որոտընդո ծափերի արժանանալով։

Ընդունելության երկրորդ մասի սեղան պետը՝ պր. Ստեփան Սրապյան, շնորհալի բեն և խանդավառ կերպով ղեկավարում ճաշկերույթը, որի ընթացքում շնորհավոր կան և հայրենասիրական ջերմ, սրտառ ելույթներ են ունենում «նարիրի» շարաթ թերթի խմբագիր Ա. Ծառուկյանը, (Բելգրա պրոֆ. Մանասե Սեակը (ԱՄՆ), «Արարատ» ամսագրի արտոնատեր և խմբագրապ Հայկ Գալուստյանը (Լոնդոն), Սեդրակ Քա յանը (Փարիզ), Հակոբ Դավթյանը (Բ ռուք), Հ. Ներսես վարդապետ Տեր-Ներսե յանը (Վենետիկ)։

Սեղանների շուրջ ժամերն անցնում արագ, բայց հաճելի և բովանդակալից։ Վե ջին խոսողն է Հարավային Ամերիկայի հա բապետական պատվիրակ և առաջնորդ գ բաշնորհ Տ. Բարգեն արքեպիսկոպոս Ապա յանը, որն իր գեղեցկահյուս և անկեղծ զգ ցումներով հարուստ ելույթով մեծ տպավ ություն է թողնում բոլոր ներկաների վրա։

Վեհափառ Հայրապետի գահակալության 10-րդ տարեդարձի պատվին կազմակերպվա ընդունելությունը վերջանում է գիշերվա ժ մը 13.30-ին, նորին Ս. Օծության «Պահպա նիչ»-ով։

Եպիսկոպոսական ժողովի գումարում Մայր Աթոռում

Նոյմբերի 3-ին, երեքշաբթի, առավոտյա ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետի բարձ նախագահության տակ, Վեհարանում գու մարվում է եպիսկոպոսական ժողով, որի մասնակցում են հանդիսության ներկա 1 թեմական առաջնորդ եպիսկոպոսները։

Ժողովն ընտրում է իր դիվանը հետևյա կազմով. ատենապետ՝ Ամենապատիվ Տ. Ե ղիշե Սրբազան Պատրիարք և ատենադպիր գերաշնորհ Տ. Բարգեն արքեպիսկոպոս Ա պատյան։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՆՏՈՆ ԶՈՋԻՆՅԱՆԸ
(Նոյեմբերի 6-ին, պաշտոնական այցելության առթիվ)

Ժողովը բացվում է նախագահ Վեհափառ Հայրապետի աղոթքով և ողջույնի խոսքով։

Այնուհետև «Հոգւոց» է արտասանվում վերջին 3 տարիների ընթացքում վախճանված յուսահոգի Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի, Տ. Եղնիկ եպիսկոպոս Աղնավուրյանի և Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանի հոգիների խաղաղության համար։

Մայր Աթոռում գումարված եպիսկոպոսական ժողովը իր աշխատանքները շարունակում է մինչև ժամը 3, քննության առնելով օրակարգի հարցերը և ընդունելով համապատասխան որոշումներ։

Ժողովի վերջում նախագահ Վեհափառ Հայրապետը գոհունակության և օրհնության խոսք է ուղղում եպիսկոպոսական ժողովին։

Ատենապետ նորին Ամենապատվություն Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքը, հանուն ժողովի, Վեհափառ Հայրապետին երախտագիտություն է հայտնում և անում բարեմաղթություններ։

Ժողովն ավարտվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով և օրհնությամբ։

Համերգ և կինոժապավենի ցուցադրում Վեհարանում

Նոյեմբերի 2-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 7-ին, Վեհարանի հանդիսությանց սրահում, ի պատիվ պատգամավորների, հյուրերի և այլ հրավիրյալների, տրվում է համերգ։

Առաջինը ելույթ է ունենում Երևանի ֆիլհարմոնիայի լարային քառյակը, մասնակցությամբ շնորհալի արվեստագետներ Լևոն Մամիկոնյանի (առաջին ջութակ), Մարտին Երիցյանի (երկրորդ ջութակ), Ռուբեն Ալթունյանի (ալթ) և Ֆելիքս Սիմոնյանի (թավջութակ)։

Լարային քառյակը մեծ հաջողությամբ կատարում է Հենդելի «Պասակալիա»-ն, Կոմիտաս վարդապետի «Հաբրբանա»-ը, «Քելեր-ցոլերա»-ը, «Շողեր ջան»-ը, «Քելե-քելեռ»-ն, «Երկինքն ամպել ա»-ն և «Վաղարշապատի պարա»-ը։

Ծրագրի երկրորդ բաժնում շնորհալի թավջութակահար Մեղեա Աբրահամյանը ապրումով կատարում է Ֆրեսկոբալտի «Տոկկատա»-ն, Կոմիտաս վարդապետի «Հով արեքա»-ը Ալեքսանյանի վերածումով և Ալեքսանդր Հարությունյանի «Էքսպրոմտ»-ը։

Ծրագրի երրորդ բաժինը ամբողջությամբ նվիրվել էր ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի, հանրածանոթ երգչուհի Գոհար Գասպարյանին։ Անվանի արվեստագիտուհին մի անգամ ևս գերեց բոլորին իր արվեստով և կատարման բարձր վարպետությամբ։

Ներկաները հոգեկան անխառն բերկրանքով ունկնդրեցին Նկմալյանի պատարագի «Ամեն, Հայր Սուրբ»-ը, «Սրհնություն»-ը, Կոմիտասյան «Կռունկ»-ը, «Անտունիս»-ն և վերջում հատված «Անուշ» օպերայից։

Համերգի վերջում Վեհափառ Հայրապետը շնորհակալության և օրհնության խոսք ասաց շնորհալի արվեստագետներին։

Համերգից հետո տեղի ունեցավ 1955 թվականին Վեհափառ Հայրապետի կաթողիկոսական ընտրության և օծման նվիրված կինոժապավենի ցուցադրությունը։

Ուխտագնացություններ, այցելություններ

Նոյեմբերի 3-ին, չորեքշաբթի, 4-ին, հինգշաբթի և 5-ին, ուրբաթ, պատգամավորներն ու հյուրերը հանդիսություններից ազատ իրենց ժամերը նվիրում են Մայր Հայրենիքի տեսարժան վայրերի, պատմական հուշարձանների ուխտագնացության և այցելության։

Չորեքշաբթի օր, առավոտյան ժամը 11-ին, ավտոմեքենաները հայրենի ուխտավորներին տանում են Գառնի ամրոցը և Ս. Գեղարդի վանքը։

Ճանապարհին խումբը կանգ է առնում Եղիշե Չարենցի հուշարձանի առաջ և դիտում Արարատի սքանչելի համայնապատկերը։

Մի այլ խումբ այցելում է մայրաքաղաքի տեսարժան վայրերը՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարանը, Պատմական թանգարանը և Պատկերասրահը։

Երեկոյան, բոլոր պատգամավորներն ու հյուրերը ներկա են լինում Հովհաննես Ջեքիչյանի համերգին, Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում։

Ուրբաթ, նոյեմբերի 5-ին, ուխտագնացություն դեպի Ծաղկաձորի և Սևանի վանքերը։

Առավոտյան ժամը 11-ին, ավտոմեքենաները ուխտավորներին տանում են Ծաղկաձոր և ապա Սևան։

Հաճելի է ուղևորությունը։ Աշնան պայծառ արևը ոսկեզօծել է հայրենի դաշտերն ու սարալանջերը։ Մեքենաները սուրում են ասֆալտապատ գեղեցիկ ճանապարհներով։

Բարձր է նաև ուխտավորների տրամադրությունը։ Ոմանք երգում են, ուրիշներ խանդավառ զրուցում, հայրենի երկնքի տակ, հայրենի քաղցրություններով արբշիռ։

Եվ ահա վերջապես կապույտ, երազ Սևանը սրբազան, հայրենի սեղ լեռների գրկում, իր հստակ ջրերի հայելին փռած... և հեռո՜ւն՝ Սևանի պատմական վանքերը, իրենց անուշ հայկական կաթողիկեներով...։

Ուխտավորները բարձրանում են վանք, մի ծուռ աղոթք մրմնջելու և մում վառելու, և ապա զբոսնում լճի ափին, ավագների վրա։

Ժամը 2-ին, «Աղթամար» ճաշարանում, Սևանի ափին, ուխտավորների պատվին տրվում է ճաշկերույթ։

Ժամը 5-ին, պատգամավորները վերադառնում են մայրաքաղաք, հոգեկան մեծ բավականությամբ։

Պաշտոնական ընդունելություն

Նոյեմբերի 5-ին, ուրբաթ, *երեկոյան ժամը 7-ին, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհուրդը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, պատգամավորների և հյուրերի, կազմակերպում է ընդունելություն «Կոռունկ» ճաշարանում։*

Ընդունելությանը ներկա են ավելի քան 100 հրավիրյալներ, որոնց թվում նաև պաշտոնական անձնավորություններ, մտավորականներ, արվեստագետներ։

Պատվո սեղանի շուրջ տեղ են գրավել Վեհափառ Հայրապետը, *Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ* պր. Կ. Դալլաքյանը, Իգնատիոս-Պետրոս Պաքանյան Պատրիարքը, Երուսաղեմի նայոց Տ. Եղիշե Պատրիարքը, վերապատվելի Հովհաննես Անառոնյանը, *կուլտուրայի մինիստրի տեղակալ* Ս. Գասպարյանը, *Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի տեղակալ* Ս. Մարտիրոսյանը, *Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի ընկերության նախագահ* Բերսաբե Գրիգորյանը, *Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ* Ս. Հովհաննիսյանը։

Ընդունելությունը ղեկավարում է Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կ. Դալլաքյանը, *որը և առաջին բաժակը առաջարկում է խմել Վեհափառ Հայրապետի կենաց։*

Նորին Ս. Օծությունը *բաժակ է բարձրացնում հայրենիքի բարօրության և հայրենի բարեխնամ կառավարության անդամների աշխարհաշեն գործերի հաջողության և նրանց արևշատության կենաց։*

Սեղանների շուրջ ստեղծվում է հայկական ջերմ և անկեղծ մթնոլորտ։

Ընդունելության ժամանակ շնորհավորական և *հայրենասիրական ջերմ ելույթներով հանդես են գալիս* Հայ-Կաթողիկե Պատրիարք Պաքանյանը, *Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների միության նախագահ* վերապատվելի Հովհաննես Անառոնյանը, Տ. Գնել. Տ. Նավարշ, Տ. Տիրայր. Տ. Ասողիկ եպիսկոպոսները. Տ. Հակոբ. Տ. Նահե, Տ. Գարեգին վարդապետները. պր. Հ. Ճ. Սիրունին *(Ռումինիայից)*, պր. Սամ Ավետիսյանը *(Կալկաթայից)*, պր. Օննին Ասլանյանը *(Սոֆիայից)*, պրոֆ. Առաքել Առաքելյանը, *շնորհալի բանաստեղծուհի* Սիլվա Կապուտիկյանը, *որն արտասանում է «Մայրը» քերթվածը, «Նաիրի» շաբաթաթերթի խմբագիր* Անդրանիկ Մատուկյանը, *որն արտասանում է իր անտիպ մեկ քերթվածը։ Սիրված բանաստեղծ* Գեորգ Էմինը *հանդես է գալիս «Ախ այս Մասիսը» իր քերթվածի արտասանությամբ, բանաստեղծ* Հրաչյա Հովհաննիսյանը *արտասանում է Դամասկոսում գրած իր մեկ քերթվածը։*

Ընդունելությանն իրենց շնորհալի մասնակցությունն են բերում սիրված երգչուհիներ Լուսիկ Քոչյանը *և* Վարդուհի Խաչատրյանը։

Ընդունելությունը վերջանում է գիշերվա ժամը 11.30-ին, ջերմ մթնոլորտում։

Ընդունելություն Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ պր. Անտոն Քոչինյանի մոտ

Նոյեմբերի 6-ին, *շաբաթ, առավոտյան ժամը 10-ին, Երևանում, Կառավարական տանը,* Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ պր. Անտոն Քոչինյանն *ընդունում է* Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին *և բոլոր պատգամավորներին։*

Ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետն ու պատգամավորները արդեն տեղ են գրավել վարչապետարանի շքեղ դահլիճում։

Ներս է մտնում հայոց մեծահարգ վարչապետը *և ընդունվում սրտագին ծափերով։*

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, *ողջունելով Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի* պր. նախագահին, *շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում հայրենի բարեխնամ կառավարության, իր գահակալության տասնամյակի առթիվ Հայաստանի կառավարության ընձեռած դյուրությունների և ուշադրության համար։*

Նորին Ս. Օծությունն *այնուհետև* պր. վարչապետին *է ներկայացնում ներկա հոգևոր պետերին, թեմական առաջնորդներին և պատգամավորներին, որոնց սրտերը լցված են անսահման սիրով և ուրախությամբ, ազգային հպարտությամբ դեպի մեր վերածընված Մայր Հայրենիքը և նրա հարազատ կառավարությունը։*

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ պր. Ա. Քոչինյանը *ջերմորեն շնորհավորում է* Ամենայն Հայոց Վեհափառ

Ամենայն Հայոց Հայրապետը, Հոգևոր պետերը և պատգամավորներն ու հյուրերը Վարչապետարանում,
1965 թվականի նոյեմբերի 6-ին, պաշտոնական ընդունելության ժամանակ:
Ողջույնի խոսք է ասում Եգիպտոսի հայոց բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը:

Հայրապետի գահակալության տասնամյակը, ողջունում հոգևոր պետերին և բոլոր պատգամավորներին, բարի գալուստ մաղթելով։

Այնուհետև տեղի է ունենում ջերմ զրույց սրտագին ու հայրենասիրական մթնոլորտում, որին մասնակցում են Վեհափառ Հայրապետը, Իգնատիոս-Պետրոս Պաթանյան Պատրիարքը, վերապատվելի Հովհաննես Աճառոնյանը, Մամբրե և Տաճատ արքեպիսկոպոսները և Տիրայր եպիսկոպոսը։

Ելույթ ունեցողները խանդավառ կերպով խոսում են հայ ժողովրդի պատմական նվաճումների, Հայաստանի կառավարության հայրենանվեր աշխատանքների, մշակույթի զարգացման մասին։

Զրույցի ընթացքում Հայաստանի պր. վարչապետը պատմում է հայրենիքի տնտեսության, գիտության և մշակույթի զարգացման հետագա հեռանկարների մասին, որոնք ազգային հպարտության քաղցր զգացումներով են լցնում ներկաների սրտերը։

Վերջում Վեհափառ Հայրապետը, հոգևոր պետերը, պատգամավորներն ու հյուրերը հրաժեշտ են առնում Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ պր. Ա. Քոչինյանից անմոռանալի տպավորություններով։

Երեկոյան ժամը 7.30-ին Վեհափառ Հայրապետը, հոգևոր պետերը, բոլոր պատգամավորներն ու հյուրերը ներկա են լինում օպերայի շենքում հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության 48-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստին ու համերգին։

Պատարագ Օշականում, Ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցում

Նոյեմբերի 6-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, Իգնատիոս-Պետրոս Պաթանյան Պատրիարքը իրենց շքախմբերով, բոլոր պատգամավորներն ու հյուրերը, Մայր Աթոռի միաբանությունն ու Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը ուխտի են գնում Օշական, Ս. Մեսրոպ Մաշտոցի համբուրելի դամբարանին։

Ժամը 11.30-ին սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը։ Պատարագում է եպիսկոպոսի հայոց բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը։

«Հայր մերդ»-ի ժամանակ քարոզում է Կալիֆոռնիայի հայոց բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը՝ օրվա հանդիսությունների ազգային-եկեղեցական նշանակության և սուրբ Քարգմանիչ վարդապետների մշակութային փառավոր գործունեության մասին։

Հավարտ սուրբ պատարագի, բոլոր պատգամավորներն ու հյուրերը, Մայր Աթոռի միաբանությունը և ուսանողությունը իջնում են Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը՝ իրենց ուխտն ու երկրպագությունը կատարելու։

Ժամը 2-ին, ուխտավորները Օշականից վերադառնում են Մայր Աթոռ։

Նոյեմբերի 7-ին, կիրակի, օծում Տ. Եղիշե եղբայրապետ եպիսկոպոսի։

Եպիսկոպոսական ձեռնադրություն

Նոյեմբերի 7-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետի գահակալության 10-րդ տարեդարձի առթիվ կատարված հանդիսությունների վերջինն էր եպիսկոպոսական ձեռնադրությունը։

Նոյեմբերի 6-ին, շաբաթ, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է նորընծաների՝ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սիմոնյանի, հոգեշնորհ Տ. Հակոբ վարդապետ Վարդանյանի, հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Սահեմյանի և հոգեշնորհ Տ. Զավեն վարդապետ Զինչինյանի «Ընտրությունն և ուխ-

Նոյեմբերի 7-ին, կիրակի,
օծում նորապսակ Տ. Հակոբ եպիսկոպոսի:

տադրութիւն ըստ սահմանի Հայաստանեայց Եկեղեցւոյ, Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի հսկողությամբ։

Կիրակի, առավոտյան ժամը 10-ին, Մայր Տաճարի զանգերի օրհնյալ ղողանջը ավետում է հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագի սկիզբը։

Նոր Վեհարանից, զգեստավորված և ամպհովանու տակ, Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Մայր Տաճար, սուրբ պատարագ մատուցելու և եպիսկոպոսական ձեռնադրություն կատարելու։

Մայր Տաճարի երկու դասերում տեղ են գրավել պատգամավորներ, հյուրեր և ուխտավորներ։

Ս. Ստեփանոսի սեղանի առաջ սկսվում է նորընծաների եպիսկոպոսական ձեռնադրության խորհրդի առաջին մասը, առընթերակայությամբ Տ. Ասողիկ և Տ. Տիրայր եպիսկոպոսների։

Խարտավիլակի պաշտոնը կատարում է Տ. Կոմիտաս եպիսկոպոսը։

Նորին Ս. Օծությունը, օրհնությամբ և աղոթքով, շնորհում է մինչև յոթ աստիճանները։

Սուրբ պատարագը շարունակվում է Ավագ Ս. Սեղանի առաջ, մինչև Ճաշու գրքի ընթերցումը։

Հանդիսության ներկա են Տ. Իգնատիոս-Պետրոս Պատրիարքը և Տ. Եղիշե Պատրիարքը իրենց շքախմբերով։

Ձեռնադրիչ Վեհափառ Հայրապետը, նստած առաքելական Իր Աթոռի վրա և շրջապատված չորս նորընծաներով, Մայր Մաշտոցից ընթերցում է ձեռնադրության մեծ աղոթքը։

Ապա նվիրյալները, ծնրադիր, դեմքերը դեպի ժողովուրդը դարձրած, ձեռները վեր բարձրացրած, «հրաժարվում են աշխարհի ունայնությունից և պատրանքներից։

Նույն պահին Մայր Տաճարի կամարների տակ թնդում է սրտառուչ շարականը՝ «Աստուածային և երկնային շնորհ», մինչ նորընծաները դառնում են դեպի Վեհափառ Հայրապետը և շարվում Նրա Աթոռի շուրջ ծնրադիր, լսելու մեծ աղոթքը, որը նրանց թելադրում է ճշմարտությամբ, հեզությամբ, ժուժկալությամբ ապրել և օրինակ լինել հավատացյալներին։

Այնուհետև սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն»։

Հանդիսավորությամբ բերվում և ձեռնադրիչ Հայրապետին է մատուցվում Սրբալույս Մեռոնի աղավնին։

Նորին Ս. Օծությունը մեռոնաթաթ աղավնիով տյառնագրում է և քաղցրաձայն երգում «Առաքելոյ ազատնոյս շարականը՝ ի նշան Ս. Հոգու իջման նորընծաների վրա։ Մեռոնի լույս կաթիլները թափվում են մեռոնամանի մեջ։

Նորընծաները, եպիսկոպոսական լրիվ զգեստավորման մեջ, կանգնել են Ավագ Ս. Սեղանի աջ կողմում։

Օծման խորհրդավոր պահն է։

«Օրհնեսցի, օծցի և սրբեսցի ճակատ...», — լսվում է Վեհափառ Հայրապետի հուզումից թրթռացող ձայնը, ի տես Հայ Եկեղեցու պայծառացման, օծմամբը չորս եպիսկոպոսների։

Ապա, համապատասխան աղոթքներով և օրհնությամբ, նորօծ եպիսկոպոսներին տրվում են իրենց նոր աստիճանի համապատասխան իշխանության գավազան և մատանի։

Կարդացվում է վերջին Ավետարանը, որից հետո Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով, ավարտվում է եպիսկոպոսական ձեռնադրության և օծման հանդիսությունը։

Վեհափառ Հայրապետը մեկ առ մեկ համբուրում է մեռոնադրոշմ ճակատները Իր

հոգևոր եպիսկոպոս զավակների, օրհնում և տալիս է Իր հայրապետական հուզիչ, սրտագրավ պատգամն ու հորդորը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը և Հոգևոր պետերը առաջնորդվում են Վեհարան։

Հանուն Մայր Աթոռի միաբանության, Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Տ. Կոմիտաս եպիսկոպոսը՝ օրվա շնորհաշխության առթիվ։

Ժամը 4-ին, Վեհարանի սեղանատանը, ընդունելություն է կազմակերպվում միայն հոգևորականների համար։

Հյուրերի ու պատգամավորների մեկնումը

Վեհափառ Հայրապետի գահակալության տասնամյակին նվիրված հանդիսություններն անցնում են հաճելի, հետաքրքրական և բովանդակալից, հայրենասիրական և եկեղեցասիրական խոր ապրումներով և անմոռանալի տպավորություններով լեցուն, բայց արագ և երազանման։

Մոտենում է հրաժեշտի ժամը։

Ծրագրում նոյեմբերի 8—9 օրերը նշանակվել էին որպես պատգամավորների և հյուրերի հրաժեշտի և մեկնման օրեր։

Պատգամավորները խումբ-խումբ այցելում են Վեհափառ Հայրապետին, ստանալու Նրա օրհնություններն ու հրաժեշտ են առնում Մայր Տաճարում իրենց վերջին աղոթքն ու ուխտը կատարելուց հետո և ապա մեկնում օդանավակայան ու ճանապարհվում Մայր Աթոռի միաբանության կողմից։

Նոյեմբերի 8-ին, երկուշաբթի երեկոյան, պատգամավորներն ու հյուրերը Երևանում, օպերայում ներկա են լինում «Անուշ»-ի ներկայացման։

Գահակալության հանդիսության օրերին, բոլոր այն պահերին, երբ պատգամավորներն ու հյուրերը պաշտոնական արարողություններից ազատ էին, ամեն հնարավորություն ունեցան իրենց ազատ ժամանակն անցկացնելու շահեկան և հետաքրքրական այցելություններով և ուխտագնացությամբ դեպի մեր բազմադարյան հայրենիքի հնամյա ու նվիրական վանքերն ու եկեղեցիները, ընության հիասքանչ գեղեցկությունները, հայրենի տեսարժան քաղաքներն ու գյուղերը, մեր ուսումնական ու մշակութային հիմնարկներն ու հաստատությունները։ Նրանք կարոտակեզ շրթներով, ծնողադիր, համբուրում էին մեր սուրբ վանքերի մամռապատ քարերը, հիանում Ս. Գեղարդի վանքի զարմանալի վիմափոր տաճարներով, զմայլվում սիրելի Սևանով, մշտաժպիտ Արագածով և Արարատով։ Անսահման հպարտությամբ և երջանկությամբ ու հուզումներով

Նոյեմբերի 7-ին, Կիրակի, օծում նորապսակ Տ. Շահե եպիսկոպոսի։

էր համակվում նրանց հոգին հայրենիքի շքեղ վերելքի, Երևանի սրընթաց բարգավաճման, ժողովրդի օրավուր բարեփոխվող առօրյային ականատես լինելով։ Մասնավորապես նրանց հոգեկան խորին հրճվանք էր պատճառում Հայրենիքի հարուստ մշակութային կյանքը։ Ո՞ր ճշմարիտ հայը, մանավանդ տարագիր պանդուխտ հայը, իրեն անհունորեն երջանիկ չպիտի զգա ի տես գիտական, ուսումնական և մշակութային բազմաթիվ այն հաստատությունների և նրանց մեջ կատարվող ստեղծագործական ու մեղվաջան աշխատանքի և այն վիթխարի նվաճումների, որոնք մեր փոքրիկ երկրին և մեր լավագույն մարդկանց համաշխարհային նոր ճանաչում ու փառք են բերում։ Այցելելով գիտությունների ակադեմիան, պետական համալսարանը, բժշկական և այլ ինստիտուտներ, հանրային գրադարանը և մանավանդ Պետական մատենադարանը, թանգարանները, նրանց սիրտը լցվում էր խանդավառ զգացմունքներով և պայծառ լավատեսությամբ դեպի մեր տոհմիկ գիտության, գեղարվեստի և մշակույթի լուսաշող ապագան։

ԴԱՎԱԶԴԻՍԵՍԻՈՎԵՑ ԶՕՅԱՐ Ի ՄԱՍԱՅԻՆԻՆՅԱՐՔ ՆՏԳԵՏՅԱՅՈՒՄ ՎՈՒՓՈՒՂԻ

Նոյեմբերի 7-ին, կիրակի, օծում Նորապսակ Տ. Զավէն Եպիսկոպոսի

Պատգամավորներն ու հյուրերը ներկա եղան նաև օպերային և թատերական ներկայացումների, զանազան համերգների և ապրեցին գեղարվեստական խոր հաճույք՝ լավագույնս գնահատելով իրենց տեսածներն ու լսածները։

Պատգամավորներն ու հյուրերը զանազան առիթներով սիրալիր հանդիպումներ ունեցան Հայրենիքի անվանի գիտնականների, արվեստագետների ու գրողների հետ։ Այս հանդիպումները երջանկությամբ համակեցին նրանց հոգիները։

Հարգարժան պատգամավորները, հյուրերն ու ուխտավորները ներկա եղան Մայր Աթոռում կատարված բոլոր եկեղեցական ու հոբելյանական արարողություններին, բարձր գոհունակությամբ ականատես եղան և հաստատեցին Մայր Աթոռում ձեռք բերված նվաճումները շինարարական, վարչական-կազմակերպչական, ուսումնական, հոգևոր և բարոյական ասպարեզներում, նորին Վեհափառության հոգեռանդ ջանասիրության, մշտարթուն հսկողության շնորհիվ։ Բոլորն էլ այցելեցին Հոգևոր Ճեմարան, ծանոթացան դասախոսական կազմի և ուսանողության հետ, դիտեցին ննջարանները, ճաշարանը, հանգամանորեն հետաքրքրվեցին Ճեմարանի ուսանողական և դաստիարակչական կյանքով, նրանց վարքով և կենցաղով։ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը պատվարժան պատգամավորների, հյուրերի և ուխտավորների վրա թողել է լավագույն տպավորություններ և այնտեղ տարված աշխատանքը արժանացել է բոլորի գնահատանքին և քաջալերության։

Պատգամավորներն ու հյուրերը ծանոթացան նաև Մայր Աթոռի միաբանների հետ և նրանց կյանքին։ Բոլորն էլ միահամուռ հաստատեցին նրանց եռանդուն աշխատասիրությունը, հավատարմությունն ու անձնվիրությունը՝ հանուն Մայր Աթոռի պայծառության և Հայաստանյայց Եկեղեցու հաստատության։

Պատգամավորները մեծ գոհունակությամբ այցելեցին նաև Մայր Աթոռի տպարանը, ուր տնօրեն Մկրտիչ Մինասյանը բացատրություններ տվեց Մայր Աթոռի հրատարակությունների և տպարանի հետագա աշխատանքների մասին։

Պատգամավորները այցելեցին նույնպես Մայր Աթոռի տնտեսական բաժնի գրասենյակները, զրույց ունեցան բաժնի վարիչների և աշխատակիցների հետ, այցելեցին Մայր Աթոռի արհեստանոցները, պահեստները, իրենց գոհունակությունը հայտնեցին տիրող կարգ ու կանոնի, մաքրության, աշխատանքների կանոնավորության համար։

Պատգամավորները եղան նաև Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի խմբագրատանը և Մայր Աթոռի դիվանատանը։

Գահակալության առթիվ կազմակերպված բոլոր հանդիսություններն անցան խանդավառ և սրտառուչ իրադրության մեջ։

1965 թվականի հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 9-ը խոշոր իրադարձությունների օրեր հանդիսացան մեր ազգային-եկեղեցական կյանքում։

Թովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղթանքն այն է, որ երկա՜ր, երկա՜ր տարիներ, Վեհափառ Հայրապետի սուրբ ձեռքերում, միշտ ծաղկած մնա «զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին, զի օրհնեսցուք զՔեզ, Տէր, այժմ և յաւիտեան»։

Գայրագույն վարդապետական իշխանության տվչություն

Նոյեմբերի 9-ին, երեքշաբթի, Վեհափառ Հայրապետը, Իր գահակալության ուրախ առիթով, առավոտյան ժամը 12-ին, Մայր Տա-

ճարում, ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն շնորհեց Եթովպիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Կորյուն վարդապետ Մանվելյանին, Լիոնի հայոց հոգևոր հովիվ Տ. Դավիթ վարդապետ Սաճակյանին, որոնք ուխտավորաբար գտնվում էին Մայր Աթոռում, և Ճեմարանի վերատեսուչ Տ. Ներսես վարդապետ Պոզապալյանին:

Տ. Կորյուն ծայրագույն վարդապետը ծնվել է Այնթապում 1915 թվականին. ավարտել է Հալեպի Կրթասիրաց վարժարանը և 1935 թվականին ընդունվել Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան։ 1938 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել։ Տ. Կորյուն ծայրագույն վարդապետը կատարել է հոգևոր հովվի պարտականություններ Յաֆա և Ամման քաղաքներում և 1962 թվականից ի վեր հոգևոր հովիվն է Եթովպիայի հայ համայնքի։

Տ. Դավիթ ծայրագույն վարդապետը ծնվել է 1935 թվականին Երուսաղեմում, սովորել է Երուսաղեմի հայոց Ս. Թարգմանչաց վարժարանում և ապա Ժառանգավորացում։ 1958 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել։ Հովվական պաշտոններ է վարել Բաղդադում, Կալկաթայում։ Այժմ հոգևոր հովիվն է Լիոնի հայոց։

Տ. Ներսես ծայրագույն վարդապետը ծնվել է Գրբգ-Խանում (Թուրքիա) 1936 թվականին։ Նախնական կրթությունն ստացել է Բեյրութի Նուպարյան վարժարանում և ապա, 1951—1955 թվականներին, սովորել է Անթիլիասի դպրեվանքում։ 1957 թվականին ընդունվել է Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանը։ 1961 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել Վեհափառ Հայրապետից։

Տ. Ներսես ծայրագույն վարդապետը Մայր Աթոռում վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ։ 1963—1965 թվականներին աստվածաբանական իր ուսումը շարունակել է Անգլիայում, ավարտելով Մերֆիլդի աստվածաբանական ճեմարանը և ստացել աստվածաբանության վկայական։ Այժմ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչն է։ Նա աշխատում է իր վարդապետական ավարտաճառի վրա, որի նյութն է «Հայ Եկեղեցու ձեռնադրության մաշտոցը»։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընծաներին, մաղթելով նրանց հաջողություններ իրենց պաշտոններում այն խոր հավատով, որ նրանք իրենց հետագա ծառայությամբ կարդարացնեն հայրապետական բարձր վստահությունը։

Հանդիսությանց փակում

Նոյեմբերի 19-ն է, ուրբաթ։

Անցան Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձին նվիրված խանդավառ ու պատմական օրերի հանդիսությունները։

Պատգամավորներն ու հյուրերը մեկնել են արդեն։

Մայր Աթոռը, նորին Ս. Օծության գլխավորությամբ, նորից ներամփոփվել է իր վանական աղոթքի ու աշխատանքի խաղաղ ու լռին շրջանակի մեջ։

Վեհափառ Հայրապետը մտածել է ներքին մի ընդունելությամբ փակել գահակալության հանդիսությունները։

Ուրբաթ, երեկոյան ժամը 4-ին, Վեհարանի սեղանատանը, նորին Ս. Օծության շուրջ են հավաքվել նրա գահակալության տասը տարիների անմիջական գործակիցներն ու աշխատակիցները՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի և միաբանության անդամները, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների խումբը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական և Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի բոլոր բաժինների ղեկավարները, Մայր Տաճարի երգեցիկ խմբի և աշխատավորության ներկայացուցիչները, շուրջ 70 հոգի։

Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապետը։

Ընդունելության ընթացքում, Տ. Կոմիտաս եպիսկոպոսն առաջին բաժակը առաջարկում է խմել Վեհափառ Հայրապետի կենաց։ Հոտնկայս երգվում է «Էջ Միածին ի Հօրէ» շարականը, նորին Ս. Օծության քաջառողջության և կենաց արեշատության սրտագին մաղթանքներով։

«Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Ա. Հատիսյանը, իր խանդավառ ելույթի մեջ վեր հանելով հայ ժողովրդի կյանքում Ս. Էջմիածնի կատարած նախախնամական դերն ու առաքելությունը Լուսավորչի օրերից մինչև մեր ներկա ժամանակները, բաժակ է առաջարկում Ամենայն Հայոց Հայրապետության գերագահ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավերժության, անսասանության և պայծառության համար։

Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը բաժակ է առաջարկում հայ ժողովրդի բարօրության և վերածնված Մայր Հայրենիքի ապագա նվաճումների կենաց, խաղաղության և ապահովության պայմաններում։

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ. Ա. Առաքելյանը, ջերմորեն և երախտագետ

սրտով ողջունելով ներկայությունը Մայր Աթոռին առընթեր անվանի ճարտարապետների կազմի անդամների, այդ թվում Միքայել Մազմանյանի, դոկտ.-պրոֆ. Կարո Վաֆադարյանի, դոկտ.-պրոֆ. Վարազդատ Հարությունյանի, Կոնստանտին Հովհաննիսյանի, Ռաֆայել Իսրայելյանի, Բաղդիկ Արզումանյանի և Արծրուն Գալիկյանի, բաժակ է բարձրացնում նրանց առողջության և ապագա գործունեության կենաց, նույն եռանդով և նույն նվիրումով համագործակցելու Վեհափառ շինարար Հայրապետին՝ նրա ապագա վերանորոգչական աշխատանքների մեջ։

Ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ծանոթ մտավորական Հ. Ճ. Սիրունին իր բովանդակալից ելույթի մեջ խոսում է ազգային, եկեղեցական և մշակութային մեծ կենտրոնից՝ Ս. Էջմիածնից և նրա Գահակալի տասնամյա հայրենաշեն գործունեությունից ստացած իր անջնջելի տպավորության մասին։

Գերագույն Հոգևոր խորհրդի նախկին անդամ, դոցենտ Ա. Տիրացյանը հուշեր է պատմում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարված նիստերի ընթացքում քննվող բազմապիսի հարցերի և ընդունված որոշումների շուրջ տիրող համագործակցության մասին, Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի և Մայր Հայրենիքի գերագույն շահերի պայծառ գիտակցությամբ։

Հանդիսության գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունն են բերում Մայր Տաճարի երգեցիկ խմբի մենակատարներ ծոզեֆիֆեա Սեհսենյանը, Լուսինե Զաքարյանը և դաշնակահար Լևոն Աբրահամյանը։

Հոգևոր Ճեմարանի դասախոս և վերստուգիչ հանձնաժողովի անդամ Գրիգոր Գյուլյանը բովանդակալից իր ելույթում վեր է հանում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դերը և Վեհափառ Հայրապետի տասնամյա գործունեությունը, ի պայծառություն Հայ Եկեղեցու և ի շինություն հայրենիքի։

Ճեմարանի գրաբար լեզվի դասախոս Սամվել Անթոսյանը խանդավառորեն արտասանում է Եղիշեից երկու հատված՝ Ղևոնդ երեցի և Վարդանի ճառերից։

Ընդունելության վերջում գոհունակության, շնորհակալության և օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը, վեր հանելով Իրեն գործակից և խորհրդակից մարմինների աշխատակիցների նվիրյալ ծառայությունը, հոգուտ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և ի բարգավաճում Հայ Երկրի։

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով։

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԱՃՅՈՒՆՆԵՐ ԴԵՐ-ԶՈՐԻՑ

Կիրակի, 21 հոկտեմբերի 1965 թվականի: Նոյեմբերի կեսերին Մայր Հայրենիք ժամանած սիրիահայ ներգաղթողների նոր խմբից երեք հայրենադարձ երիտասարդներ, ուխտի գալով Մայր Աթոռ Ս. Էջմիածին, նոյեմբերի 18-ին, երկյուղածորեն և արցունքոտ աչքերով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին են հանձնում Դեր-Զորից իրենց հետ բերած ապրիլյան եղեռնին զոհ գնացած հայ նահատակների նվիրական աճյուններից, Ս. Էջմիածնի նորակառույց նահատակաց հուշարձանի խաչքարերի ներքո ամփոփելու համար։

Նորին Ս. Օծությունը խոր հուզումով և գոհունակությամբ ստանում է այս սրբացած մասունքները և որոշում սուրբ պատարագի մատուցմամբ ու հոգեհանգստյան հանդիսավոր արարողությամբ ամփոփել նահատակաց աճյունները նորակառույց խաչքար-հուշարձանի տակ։

Ժամը 11-ին, Մայր Տաճարում, սուրբ պատարագ է մատուցում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Իրաքի հայոց հայրապետական պատվիրակ գեղաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը։

Ավագ Ս. Սեղանի առաջ, բեմի ատյանի կենտրոնում, ձախակողմյան և աջակողմյան դասերի միջև, սևով ծածկված սեղանի վրա, ապակեպատ մասնավոր մի արկղիկի մեջ զետեղված են նահատակների աճյունները։

Սուրբ պատարագը շարունակվում է մինչև Արձակման Ավետարանը։ Զորս սարկավագներ աճյունների առաջ սաղմոս են քաղում։ Մայր Աթոռի միաբանությունը, զգեստավորված, աճյունների սեղանի շուրջ բոլորված, հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարում է հոգեհանգստյան հատուկ կարգը։

Արարողությունից առաջ, Նորին Ս. Օծությունը, կրոնարույր և հայաշունչ իր քարոզի մեջ, ոգեկոչում է հիշատակը ապրիլյան եղեռնի երկու միլիոն մեր նահատակների, շեշտելով, որ 1965 տարին, արդարև, բովանդակ հայության համար, և՛ Մայր Հայրենիքում և՛ Սփյուռքի բոլոր տարածությունների վրա, եղավ աղոթքի, սուգի և ուխտի տարի, և հայ ժողովուրդը, ամեն տեղ, համազգային լրջությամբ և խորին ապրումներով, նշեց այդ հիշարժան տարեթիվը։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ դեռևս մնում է վեր-

ջին մի սրտագին պարտականություն։ Դա Դեր-Զորից նոր բերված նահատակների աճյունների ամփոփումն է Հուշարձան-խաչքարի ներքո։

Հոգեհանգստյան արարողությունից հետո, Մայր Տաճարում, բազմահազար ուխտավորներ և հավատացյալներ, մեծով և փոքրով, խորին հարգանք և երկյուղածորեն, լուռ ու խոհուն անցնում են մեր նահատակների աճյունների առջևով, ուխտավորի ջերմեռանդությամբ, իրենց երկրպագության, համբույրի և աղոթքի կնդրուկը բերելով նրանց անմոռաց հիշատակին։

Ժամը 2-ին, եկեղեցական թափորը, ժողովրդի հոծ բազմության ընկերակցությամբ, ուղղվում է դեպի Հուշարձան-խաչքարը։ Զորս սարկավագները կրում են նահատակների աճյունների արկղը՝ սևածածկ սեղանի վրա։

Հուշարձանի առաջ կատարվում է թաղման կարգը, ապա Վեհափառ Հայրապետը, աղոթքով և օրհնությամբ, աճյուններն ամփոփում է Հուշարձան-խաչքարի ներքո։

Ըստ եկեղեցական կանոնի, աճյունների հետ միասին արկղի մեջ զետեղվում է Հայոց Հայրապետի հետևյալ գրավոր վկայությունը.

«Այսու կվկայեմ, թե Ս. Էջմիածնի խաչքար հուշարձանի տակ ամփոփված սույն աճյունները բերված են Դեր-Զորի անապատեն, ուր զոհվեցան հարյուր հազարավոր հայեր 1915-ի մեծ եղեռնի օրերուն, սուլթանական Թուրքիոյ կառավարության հրամանով։

Հավերժական հանգի՛ստ և լո՛ւյս մեր ազգի երկու միլիոն նահատակներու հոգիներուն։

«Յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հյուսիսային կողմում, Կաթողիկեի օրհնության ներքո և Արարատի նայվածքի տակ, կանգնել է հայ ժողովրդի աղոթքի և ուխտի Հուշարձան-խաչքարը։

Վերջապես մեր բյուրավոր նահատակները, հիսուն տարի հետո, խորհրդանշանականորեն, վերադառնում են վերածնված հայրենի հողի ծոցը, որպես աճյուն, որպես նշխար, որպես սրբություն, շրջապատված մեր ժողովրդի երախտագիտությամբ, սիրով ու պաշտամունքով։

Հանգչեցե՛ք, մեր սիրելի նահատակներ, հայրենի հողի վրա։

Հանգչեցե՛ք խաղաղ ու հպարտ։

Հայրենի հողը թեթև լինի Ձեր աճյունների վրա։

Փա՜ռք Ձեր հավերժական սուրբ հիշատակին։



Վեհափառ Հայրապետի վկայագիրը դրված աճյունների հետ։



Ռ. ԻՍՐԱՑԵԼՅԱՆ
(Արվեստի վաստակավոր գործիչ)

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԻՄ ՄՏԱՀՂԱՑՈՒՄԸ

Չի գտնվի հայ, որ առանց հոգու ճիչի չհիշի 1915 թվականը։

1915 թվականը աշխարհի մարդիկ ընդունել են միատեսակ, որպես հերթական թվական։

Այլ է սակայն հայի համար այս տարին, սև, անհուն խորությամբ։

Այս մեծ, տիեզերական արհավիրքի, ցավի, հուշերի դեմ կանգնած իմ վտիտ մտքով, ճիգ եմ անում պատկերելու համար ողբերգության ուժը, նրա էությունը վերարտադրելու, նրա կերպարանավորված գաղափարն արտահայտելու հայի լեզվով, Հայոց աշխարհի քարի լեզվով։

Միամիտ են և անչափ դժգույն բոլոր պատկերները, որ հորինում եմ, ծեփում երևակայությանս մեջ, ասելու խոսք՝ հիշեցնող մեծ եղեռնը։

Քարակույտեր են դեմս երևում, փռված ամայի, անշունչ, անբմբռնելի, անծայրածիր, լքված հողերում հայոց։

Հայոց հեռավո՞ր աշխարհ...։

Ամեն մի քարն այնտեղ հայ վարպետի ստեղծարար, սուրբ ձեռների գուրգուրանքն է զգացել, նրա շոյանքը, և թողել հետքեր հայի շինարար մտքի և շունչի։

Իսկ ա՞յժմ։ Ամայությո՞ւն անծայրածիր, թեև երկինքն էլի՝ կապույտ է այնտեղ, էլի՝ արևով պայծառացած, բայց հողը չորացած է, հայի կենսաբեր եռանդից զրկված։

Ու քարերն անթիվ աչքիս առաջ խտանում, դառնում են մեծ-մեծ սալեր իրար վրա բարձրացած, իրար հենված, իրար բարձրացնող ու վեր ձգվող։ Քարեր են դրանք, լերկ քարեր։ Ու հետո, բյուր անգամ բյուր ձեռքեր են ձգվում, հայի ձեռքեր, ձգվում այդ քարերին և իրենց մատներով, եղունգներով քերում նրանց, փորփրում, հղկում միլիոնավոր ձեռներով, մշակում ու տալիս նրանց հոգի, լեզու, որ խոսեն, գոչեն, աղաղակեն աշխարհով մեկ իրենց չմաշված, չմոռացված և երբեք չմոռացվող ցավի մասին, իրենց հայրերի, մայրերի, որդիների, քույրերի ու եղբայրների, իրենց նախնիների ողբերգության մասին, իրենց աննկուն հոգու մասին, իրենց պայքարի մասին, իրենց քաջ սրտերի մասին և իրենց այսօրվա մասին։

Խաչքարեր, որ դարերի ընթացքում հայը կանգնեցրել է հիշատակելու և՛ իր նախնիները, և՛ իր հաղթանակները, և՛ իր սխրագործությունները սերնդից սերունդ հաղորդելու համար։ Իսկ այսօր, այդ քարերը պատմելու են մեծ եղեռնի մասին, իրենց ոճով, իրենց լեզվով, քարի՛ լեզվով, ասելու են, թե ինչպե՞ս են այրել դարավոր մշակույթը, հայի ստեղծածը։ Եվ ահա զարդաքանդակ խաչը, հույսի այդ գաղափարը, բոցերի մեջ է։ Ու էլի՛ խաչքար, որ բարձրացել է ավելի վեր, ի տես աշխարհի, հիշատակելով բոլոր նրանց, ովքեր զոհվել են և չեն գտել իրենց գերեզ-

մանները, չեն արժանացել անգա՛մ մի հասարակ տապանաքարի։ Հայի անթիվ զոհերին են նվիրված այն խաչերը, որ քանդակված են այս խաչքարի վրա։

Էլի՛ խաչքար, որ հուշարձանի մի կողմից կանգնեցված է, պատկերելու մեր հայրենիքի այն հողերը, որ հիսուն տարի մնացել են դատարկ, անբնակ, ավազների ալիքներ, որ տանում են, հասցնում մեզ Դեր-Զորի անապատների ավազներին, արյունով ծրծված։

Բայց կա՛, գոյություն ունի հայ ժողովուրդը, նա պայքարել է եղեռնի սև օրերին, ամենաչնչին հնարավորությունն անդամ օգտագործելով, գիմել անհավատալի քաջագործ մարտերի, պայքարել քարով ու զենքով թշնամու դեմ և մինչև վերջին շունչը, կաթիլ առ կաթիլ թափելով իր արյունը, դիմադրել հրեշավոր, հարյուրապատիկ գերազանցող թշնամու ուժին և չի ընկճվել։ Ահա այդ է ասելու, մտածում եմ, այն թուրն ու վահանը, որի վրա մեր նախնիների ձեռվ բոլորել ենք վահանի շրջագծով հերոսական քաղաքների անունները՝ Վան, Մուսա լեռ, Շարին Գարահիսար, Հաջրն, Մարաշ, Եղեսիա, Ջեյթուն Սասուն և Սարդարապատ։

Ու էլի՛ ժողովուրդն անմահ, իր զավակների և հայրերի արյունից ծլած, վեր է խոյանում և աճում հայոց կենաց ծառը, հուժկու, ամրակազմ, վեր ձգվող դեպի արև։ Եվ այնտեղ, արևի ներքո, հաստատուն կանգնել է հայ ժողովրդի աննկուն հոգին արծիվ, ի ցույց աշխարհին, որ հայը կա, գոյություն ունի, նա միայն գաղթական ու պանդուխտ չէ, այլ ունի իր հայրենիքը, բացի «կոունկ» երգելուց, երգում է իր հուժկու, պատանի ձայնով երիտասարդ՝ պետական իր հիմնը, իր հանրապետության գովքն անելով։

Կանգնել է այժմ կոթողը ամենայն հայոց սրբավայր հավերժական Մայր Տաճարի հովանու տակ, նրա կանաչների մեջ, նրա օրհնանքի ներքո, որպես մի մատուռ, ուր մարմնով չեն մտնում, այլ միայն հոգով, ուր մոմ են վառում ո՛չ թե խաչի տակ, այլ իրենց սրտերում, և անմար այդ մոմերը տանում հեռու և մոտիկ տեղեր, տալիս ուրիշներին, իրենց հուշից, իրենց հուզից ու լույսի հույսով լցնում ամեն մի հանդիպած հայի սիրտը, լինի նա էջմիածնեցի թե Երևանցի, եկած լինի նա հեռավոր Կալիֆոռնիայից, թե Բելգրադից։

Եվ իմ հիշած բազում ձեռքերը հավաքվում են, իրար ձուլվում, դառնում մեր այսօրվա կենդանի փորագրողների ամուր ձեռքերը, ստանում կերպարանք մեր սքանչելի վարպետներ Հրաչիկ Ստեփանյանի, նրա ընկեր Սողոմոն Դուզդաքանյանի, արծիվ փորագրող Սարգիս Գրիգորյանի, որի կոփած արծիվը իմ մտերիմ ընկերոջ՝ քանդակագործ Արա Հարությունյանի, նրա շնորհքի ու բարի շունչի արդյունքն է, կոփված այս հուշարձանի վրա։

Կանգնած է հայոց սուգի և կենսունակության հուշարձանը Ս. էջմիածնի բակում, նայելով մեկ Մայր Տաճարին և հեռավոր Արարատին, այս երկու վեհ գագաթներին, և շրջապատված միշտ ստեղծարար, միշտ պայքարող, միշտ կենսասեր հայոց ժողովրդով։

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
(Հայրապետական պատվիրակ
Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի)

Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԿԻ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ-ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տանս Թորգոմայ շառաւիղ ծաղկեալ,
Տեառնական շնորհօք սրբութեամբ փայլեալ:

Վազգէն վեհ անուն օծմամբ ընկալեալ,
Առաջնորդ հօտին յազգէն ընտրեալ,
Զաւակաց իւրոց ի խնդիր ելեալ,
Գաւազան Սրբոյն Գրիգորի առեալ,
Էին անեղին փառս վերառաքեալ,
Նորին շնորհաց արժանի եղեալ:

Աքսոր դպրութեան սա գերադասեաց,
Քան հոգւոց մանկանց զուտումն ցամքեաց·
Առաւել ջանիւք և իմաստութեամբ,
Զանն սուրբ լուսոյ վառեաց խնդութեամբ:
Թափ և ի ցայգ ի ճմին վարժեալ,
Նոցին իսկ հոգին յինքն ժառանգեալ:

Հայաստան երկիր կոչմամբ դրախտավայր,
Ոռաւել սիրեաց քան զիւր ծննդավայր.
Յարկն ատուածային տանար հայ ցեղին,
Քամից բոլորիցն աղօթատեղին,
Արքուն գիշերօք աննկուն կամօքն,
Պարսպեալ պատեաց փառօք կամարօքն.
Եւ պիտանփայլեալ քան յառաջագոյն,
Տեղիք սրբութեան ազգին մեր ողջոյն:

Աշխարհին համայն ցանկացող բարեաց,
Միածաւ ցնծութեամբ գիսաղաղն ընտրեաց,
Եւ ի բարբառոյ և գրոց կոնդակաց,
Նոյն սէր խնդութեան ընդմիշտ քարոզեաց:
Աղաւնւոյ առեալ ծիրանեայ դալար,
Ցոստին պատուաստեաց հոգւոցն արդար,
Նոյեան ծիածան ազգաց խոովարար:

Հայր մեր երկնաւոր և ամենազօր,
Արա գծառայդ Սուրբ Հոգւով հզօր.
Յազգէ ազգ մնայ անուանն իւր բարի,
Որում Դու դատես գործովք արժանի,
Յաւուցս այս հովտի, ո՞վ Տէր համայնի:

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ

Գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյանը ծնվել է 1900 թվականի մարտի 15-ին, Զմյուռնիայի շրջանի Քասաբա գյուղաքաղաքում։ Ավարտել է տեղի ազգային վարժարանը։

1913—1918 թվականներին աշակերտել է Երուսաղեմի Հայոց Սրբոց Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժարանին։

1919 թվականին վերադառնալով ծննդավայրը, հաճախել է Իզմիրի Ամերիկյան կոլեջը, որի դասընթացը հաջողությամբ ավարտելով, ստացել է B. A. (պսակավոր արվեստից) աստիճանը 1922 թվականին։

1924 թվականին հաստատվել է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում և հաճախել Նորթֆորդի աստվածաբանական ճեմարանը և ապա Նյու-Յորքի Յունիոն աստվածաբանական ճեմարանը։ Այնուհետև շրջանավարտ է եղել Պրովիդենսի Բրոուն համալսարանից M. A. (մագիստրոս արվեստից) աստիճանով։

1932 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել նահատակ հոգելույս Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանից։ Երկար տարիներ ծառայել է որպես հոգևոր հովիվ Նյու-Յորքի հայոց Ս. Խաչ եկեղեցում։

1965 թվականի նոյեմբերի 7-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետից։

Գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյանը հավատավոր, եկեղեցական լուրջ պատրաստություն ունեցող հոգևորական է։ Սրբազանը յուրովսանն և խղճի մտոք ծառայում է Հայ Եկեղեցուն։

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը, ավազանի անունով Ավետիս, ծնվել է 1918 թվականի հունվարի 1-ին Ուրֆայում, արհեստավորի ընտանիքում։ Հայրը՝ Կարապետ, մայրը՝ Սիրանուշ, գոնիա-ազատայցի։

1920 թվականին, Ուրֆայի հերոսամարտից հետո, գաղթական՝ Հալեպում, ուր հաճախում է Հայկազյան ազգային վարժարանը և 1932 թվականին շրջանավարտ է լինում Կիլիկյան վարժարանից։

Նույն տարին ընդունվում է Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժարանը, որի դասընթացը հաջողությամբ ավարտելով 1936 թվականին, սարկավագ է ձեռնադրվում հոգելույս Տ. Թորգոմ պատրիարքից և 1939 թվականին՝ կուսակրոն քահանա, հոգելույս Տ. Մեսրոպ պատրիարքից։

Այնուհետև երիտասարդ հոգևորականի առաջ Ս. Աթոռում բացվում է գործունեության լայն ասպարեզ. տպարանի տեսուչ 1939—1941 թվականներին, Հայֆայի հայոց հոգևոր հովիվ 1941—1945 թվականներին, «Սիոն» ամսագրի խմբագիր 1945—1951 թվականներին, Ս. Աթոռի մատակարար 1951—1956 թվականներին, Տնօրեն ժողովի անդամ և ատենապետ 1960—1964 թվականներին ժառանգավորաց վարժարանի տեսուչ, 1964—1965 թվականներին՝ Ս. Աթոռի նվիրակ և այժմ հայրապետական պատվիրակի փոխանորդ Մարսելի թեմի։

1965 թվականի նոյեմբերի 7-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Ամենայն Հայոց Հայրապետի կողմից։

Գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը պատրաստված և հավատավոր հոգևորական է։ Սրբազանը գտնվում է իր ուժերի ծաղկման և հասունության շրջանում։

Ազգը և եկեղեցին նրանից սպասում են նորանոր ծառայություններ։ Սրբազանը կարդարացնի այդ ակնկալությունները։



ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՇԱՀԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆ

Գերաշնորհ Տ. Շահէ եպիսկոպոս Աճեմյանը ծնվել է Հալեպ քաղաքում 1926 թվականին։ Նախնական կրթությունն ստացել է տեղի Հայկազյան վարժարանում և այնուհետև, 1937—1939 թվականներին, Մխիթարյան հայրերի վարժարանում։

1939—1943 թվականներին հաճախել է Հալեպի Ֆրերների դպրոցը, որի ընթացքը փայլուն հաջողությամբ ավարտելով, նույն տարին ընդունվել է Անթիլիասի դպրեվանքը, սարկավագ ձեռնադրվելով։

Դպրեվանքի Ընծայարանի լսարանական բաժինը ավարտելով, 1947 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել հոգելույս Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանից։

1947—1950 թվականներին հետևել է Բրյուսելի համալսարանի գրականության և փիլիսոփայության դասընթացներին և ավարտել է գրականության և փիլիսոփայության պակավորի աստիճանով։

Այնուհետև երիտասարդ և խոստումնալից վարդապետի առաջ բացվում է ծառայության լայն և պատասխանատու ասպարեզ։ Նա ձեռնհասորեն վարում է Անթիլիասի դպրեվանքում և Բեյրութի Հովակիմյան—Մանուկյան մանչերի միջնակարգ դպրոցում ուսուցչի պաշտոն, իսկ 1952—1956 թվականներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի դիվանապետությունը։

1960 թվականից անդամ է Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց միաբանության, ուր վարում է դիվանապետի և կալվածոց տեսչի պաշտոնները, մեծ ձեռնհասությամբ և արդյունավետությամբ։

Երկար տարիներ եղել է նաև Ս. Աթոռի նվիրակը Ս. Հարության Տաճարի նորոգության հանգանակության գործում։

Գերաշնորհ Տ. Շահէ եպիսկոպոսը աշխատակցում է նաև «Սիոն» ամսագրին պատմա-փիլիսոփայական արժեքավոր ուսումնասիրություններով։

1965 թվականի նոյեմբերի 7-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

Գերաշնորհ Տ. Շահէ եպիսկոպոս Աճեմյանը պատրաստված, նվիրյալ և հավատավոր հոգևորական է։ Սրբազանը գտնվում է իր ուժերի հասունության շրջանում։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Երուսաղեմի Ս. Աթոռը նրանից սպասում են նորանոր արդյունքներ։

Շահէ սրբազանը կարդարացնի այդ բոլոր ակնկալությունները իր բոլորանվեր ծառայությամբ։

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԶԱՎԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆ

Գերաշնորհ Տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյանը ծնվել է 1929 թվականի հոկտեմբերի 29-ին, Հալեպում, կիլիկեցի ծնողներից (Մարաշ)։ Ավազանի անունն է Գևորգ։ Սովորել է Հալեպի Կիլիկյան վարժարանում։ Այնուհետև ընտանյոք Պաղեստին հաստատվելով, սովորում է Երուսաղեմի հայոց Սրբոց Թարգմանչաց վարժարանում և դասընթացը ավարտելով 1945 թվականին, ընդունվել ժառանգավորաց վարժարանը։

1949 թվականին փայլուն հաջողությամբ ավարտելով իր ուսումը, սարկավագ է ձեռնադրվել։

1951 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել Տ. Խորեն եպիսկոպոս Բարոյանից Երուսաղեմում։

Այնուհետև երիտասարդ և խոստումնալից հոգևորականի առաջ բացվում է վանական-վարչական, մանկավարժական, հովվական բեղուն գործունեության ասպարեզ, որպես ուսուցիչ Սրբոց Թարգմանչաց և ժառանգավորաց վարժարաններում, որպես տեսուչ տպարանի, անդամ «Սիոն» ամսագրի խմբագրական մարմնի, քարտուղար Ս. Տեղյաց և դիվանապետ։

1958 թվականից ի վեր ձեռնհասորեն վարում է Ալեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդի պաշտոնը։

1965 թվականի նոյեմբերի 7-ին եպիսկոպոս է ձեռնադրվում Ս. Էջմիածնում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից։

Գերաշնորհ Տ. Զավեն սրբազանը հավատավոր, պատրաստված և նվիրյալ հոգևորական է։

Սրբազանը երիտասարդ է, գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման և հասունության շրջանում։

Տ. Զավեն սրբազանը իր նորանոր արդյունքներով և բարի ծառայություններով կարդարացնի Վեհափառ Հայրապետի ակնկալությունները, հօգուտ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայ հավատացյալ ժողովրդի։

ՄԱՅՐԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 17-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը «Դոքա են՝ չորք հողմք երկնից» (Զաք. Զ 1) բնաբանով։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Հոկտեմբերի 24-ին, կիրակի, *«Տօն Գիւտ խաչի։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Գարեգին քահանա Քիրազյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պոզապալյանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Նոյեմբերի 8-ին, երկուշաբթի, *Մայր Տաճարում եպիսկոպոսական իր անդրանիկ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Շահե եպիսկոպոս Աճեմյանը։*

Ս. Հռիփսիմեի տաճարում իր անդրանիկ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Զավեն եպիսկոպոս Ցինչինյանը։

***

Նոյեմբերի 10-ին, չորեքշաբթի, հետմիջօրեի ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանում դասախոսություն կարդաց ուսանողության, միաբանության և պաշտոնեության համար Հ. Ճ. Սիրունին, «Հայ եկեղեցին Սփյուռքի մեջ թեմայով։ Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Վերջում վերատեսուչ վարդապետը շնորհակալություն հայտնեց պր. քանախոսին՝ հետաքրքրական և բովանդակալից դասախոսության համար։

***

Նոյեմբերի 14-ին, կիրակի, *Մայր Տաճարում եպիսկոպոսական իր անդրանիկ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը և քարոզեց հավուր պատշաճի։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Նոյեմբերի 21-ին, կիրակի, *երեկոյան ժամը 4-ին, Վեհարանում, շուրջ երկու ամիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ռումինահայ ծանոթ գրագետ, բանասեր և «Էջմիածին» ամսագրի սիրված աշխատակից Հ. Ճ. Սիրունու պատվին կազմակերպվել էր ողջերթի ընդունելություն։*

Հարգելի պրոֆեսորը մասնակցեց Վեհափառ Հայրապետի գահակալության տասնամյա հանդիսություններին, այցելեց պատմական վանքեր, հուշարձաններ, մայրաքաղաքի և հանրապետության տեսարժան վայրեր, տեսակցություններ, շփումներ ունեցավ մտավորականների, արվեստագետների հետ և ավելի քան 30 շահեկան, պատմա-հայագիտական դասախոսություններ կարդաց Մատենադարանում, պետական համալսարանում, գիտությունների ակադեմիայում, արվեստի տանը և պետական արխիվում և այլուր, արժանանալով ամենուրեք ջերմ ընդունելության։

Արդարև, ամենայն գնահատության արժանի են մեծավաստակ գրագետի 60-ամյա մշակութային, գիտական և հասարակական ծառայությունն ու վաստակը։

60 տարի, տքնաջանորեն, խոր նվիրումով և շատ հաճախ նյութական և բարոյական աննպաստ պայմաններում, Հ. Ճ. Սիրունին ծառայել է հայ մշակույթին և դարձել նրա խանդավառ տարածողներից մեկը, մանա-

վանդ ռումեն մտավորական շրջանակների մեջ։

Նա իր աննկուն, բեղմնավոր աշխատասիրությամբ կատարել է մի ամբողջ ինստիտուտի շնորհակալ գործ։

Ավելի քան հարյուրի է հասնում Հ. Ճ. Սիրունու հայ մշակույթին նվիրած հայերեն հրատարակված և անտիպ աշխատությունների թիվը, և շուրջ հարյուր աշխատություն ռումիներեն և ֆրանսերեն լեզուներով գրված՝ հայ մշակույթի պատմության, օտար մշակույթների հետ մեր մշակութային կապերին և պատմության ուսումնասիրության նվիրված։

Ողջերթի սեղանին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մտավորականության և արվեստի ներկայացուցիչներ, որոնցից շատերը սրտագին ելույթների և ջերմ ճառերի մեջ ողջունում են հոբելյար Հ. Ճ. Սիրունուն՝ նրա գրական, հասարակական գործունեության 60-ամյակի ուրախ առիթով, նշելով միաժամանակ Երևանում Հ. Ճ. Սիրունու կարդացած դասախոսությունների գիտական բարձր մակարդակը, հայրենասիրական ոգին ու շունչը, հայ մշակույթի հանդեպ նրա անսահման սերն ու նվիրվածությունը։

Վերջում, խորապես հուզված և երախտագետ, Հ. Ճ. Սիրունին իր շնորհակալության և հրաժեշտի ջերմ խոսքն է ասում։

Նոյեմբերի 22-ին, երկուշաբթի առավոտ, Հ. Ճ. Սիրունին մեկնում է Մոսկվա—Բուխարեստ։

Բարի՜ ճանապարհ վաստակավոր բանասերին և մեր սիրված աշխատակցին.

***

Դեկտեմբերի 4-ին, շաբաթ, «Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»։ Մայր Տաճարում, օրվա տոնի առիթով, պատարագ է մատուցում հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը։

***

Դեկտեմբերի 5-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պողոսալյանը «Ժիր մշակ անպարտելի Կաթողիկէ Եկեղեցւոյ և պսակ պարծանաց հաւատացելոցն» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Դեկտեմբերի 5-ին, կիրակի, հետմիջօրեի ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետին այցելեց տաղանդավոր դաշնակահար և կոմպոզիտոր 12-ամյա Զոհրապ Փարեմուզյանը, իր հոր հետ։

Նորին Ս. Օծությունը հայրաբար և սիրով հետաքրքրվեց տաղանդավոր պատանու կյանքով և աշխատանքով։ Ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Զոհրապը դաշնամուրի վրա կատարեց իր ստեղծագործություններից մի քանիսը, ինչպես նաև հատվածներ դասական երաժշտությունից, արժանանալով Հայոց Հայրապետի օրհնության և քաջալերանքին։

Հետմիջօրեի ժամը 2.30-ին, Մայր Աթոռ այցելեց Երևան նոր ժամանած, Նյու-Յորքի Մետրոպոլիտեն օպերայի ծանոթ երգչուհի Լուսին Ամարան։ Անվանի արվեստագետը Մայր Տաճարում իր ուխտը կատարելուց և սուրբ պատարագին ներկա լինելուց հետո, այցելեց Հայոց Հայրապետին Վեհարանում, ուր տեղի ունեցավ ջերմ զրույց։

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 28-ին, կիրակի, առավոտյան ժամը 11-ին, Մայր Տաճարում մատուցվում է սուրբ պատարագ, վերածնված հայ ժողովրդի ազգային պետական մեծ տոնի երջանիկ առիթով։ Պատարագում է հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Սուրբ պատարագին ներկա է Ամենայն Հայոց Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվում է է կառավարական մաղթանք, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։

Արարողությունից առաջ հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը քարոզում է օրվա տոնի ազգային, հայրենասիրական նշանակության մասին։

Նոյեմբերի 29-ին, երկուշաբթի, հայրենիքի մեծ տոնի բարեբաստիկ և ուրախ առիթով, փակ է Հոգևոր Ճեմարանը։

Առավոտյան ժամը 12-ին, Ճեմարանի հանդիսասրահում, տեղի է ունենում հանդիսավոր նիստ, նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-ամյակին։

Հանդիսության նախագահում է Վեհափառ Հայրապետը։

Ներկա են Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը։

Հանդիսությունն սկսվում է Հայկական ՍՍՌ Պետական հիմնի նվագով։

Վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պոզապալյանը կատարում է հանդիսության բացումը, վեր հանելով օրվա տոնի ազգային, պետական նշանակությունը հայ ժողովրդի կյանքում։

Ճեմարանի երգչախումբը հաջողությամբ կատարում է «Ծաղկի՛ր, ազատ իմ հայրենիք», «Հայրենիքում», «Արևն ելավ, զեյթունցիներ» խմբերգերը։

Գ լսարանի ուսանող բարեշնորհ Գրիգոր սարկավագ Բունիաթյանը արտասանում է Սիլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» բանաստեղծությունը, իսկ բարեշնորհ Եղիշե սարկավագ Բաղրամյանը՝ Ն. Զարյանի «Վերածնունդ»-ը, խոր ապրումներով և հուզումով։

Գ դասարանի ուսանող Արարատ Գալըստյանը դաշնամուրի վրա հաջողությամբ կատարում է Բեթհովենի Առաջին սոնատայի առաջին մասը։

Հանդիսության գլխավոր բանախոսն էր Հոգևոր Ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս Պարգև Շահբազյանը, որը հանդես է գալիս Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-ամյակին նվիրված քովանդակալից և կուռ զեկույցով։

Հայրապետական Իր պատգամի վերջավորության, Վեհափառ Հայրապետն օրհնում է մեր վերածնված Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, մեր շինարար և խաղաղասեր, ստեղծագործ ժողովրդին, բարեմաղթելով, որ խաղաղություն լինի հայ երդիկների տակ և համայն աշխարհում։

Հանդիսությունը վերջանում է ազգիս հայրենասեր Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով։





ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԻ ՏԱՍՆՀԻՆԳԱՄՅԱԿԸ

Այս տարի լրացավ Մայր Տաճարի երգեցիկ խմբի կազմության 15-ամյակը։

1951 թվականին, հանգուցյալ Գևորգ Զ Կաթողիկոսի օրով, կազմվել էր Մայր Տաճարի երգչախումբը, 14 երգիչներից և երգչուհիներից բաղկացած։

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության 10 տարիների ընթացքում, որակապես և քանակապես զգալիորեն բարելավվեց երգչախմբի կազմը և այն դարձավ շնորհալի մի խումբ։ Ներկայումս Մայր Տաճարի երգչախումբը բաղկացած է մեծ մասամբ երաժշտական բարձր կրթություն ունեցող 35 երգիչներից և երգչուհիներից։

1961 թվականից երգեցիկ խմբի գեղարվեստական ղեկավարը և դիրիժորն է Հոգևոր Ճեմարանի նախկին սան և Երևանի կոնսերվատորիայի դիրիժորական բաժնի գերազանցիկ շրջանավարտ Խորեն Մելխանաչյանը։

Վերջին 5 տարիների ընթացքում երգչախումբը, իր շնորհալի ղեկավարի առաջնորդությամբ, կատարել է գնահատելի աշխատանք։ Ամբողջացվել և գեղարվեստական որոշ մակարդակի են հասցվել Եկմալյան և Կոմիտասյան պատարագները։

Եղեռնի հիսնամյակի առթիվ, երգեցիկ խումբը սովորեց և կատարեց խորին ապրումով Ալեքսանդր Հարությունյանի դաշնավորած «Գթա Տէր»-ը։

Մայր Աթոռի հանդիսություններին երգչախումբը հաճախ իր մասնակցությունն է բերում ժողովրդական երգերի բարձր կատարումով։

Շնորհավորելով Մայր Տաճարի երգչախմբի 15-ամյակը, ցանկանում ենք նրան աշխատանքային նոր հաջողություններ։

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Մատենադարանի ձեռագրերի ցուցակը.—Հայաստանի գիտությունների ակադեմիան լույս է ընծայել «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի» ծավալուն և արժեքավոր աշխատության առաջին հատորը:

Գրքում տրված է Մատենադարանի շուրջ 5 000 ձեռագրերի ցուցակը, ինչպես նաև ձեռագրերի հակիրճ նկարագրությունները: Հատորն ունի ընդարձակ ներածական բաժին և ծանոթագրություններ:

Այս աշխատությունը Մատենադարանի ձեռագրերի լրիվ պատկերն արտացոլող առաջին տպագիր գործն է: Հատորը կազմել են Մատենադարանի գիտական աշխատողներ Օ. Եգանյանը, Ա. Ջեյթունյանը և Փ. Անթաբյանը:

Ներկայիս հրատարակության է պատրաստվում ձեռագրացուցակի երկրորդ հատորը:

Մատենադարանի նոր գրապահոցը.—Ինչպես պահել Մատենադարանի հարստությունը՝ թանկարժեք ձեռագրերը, որպեսզի նրանք կերծ մնան ժամանակի քայքայիչ ազդեցությունից: Այս հարցը միշտ էլ զբաղեցրել է մեր գիտնականներին: Մատենադարանի շենքը նախագծելիս, ճարտարապետները մտածել էին նաև այդ մասին:

Մատենադարանի նոր շենքն ուներ իր գրապահոցը: Սակայն այդ գրապահոցը 2 տարուց ի վեր փորձարկման մեջ էր գտնվում, ստուգելու համար, թե արդյոք այն համապատասխանո՞ւմ է ձեռագրերի պահպանման պահանջներին, թե ոչ: Փորձարկումը դրական արդյունք տվեց և նոյեմբերի վերջերին ձեռագրական ամբողջ հավաքածոն փոխադրվեց գրապահոցը:

Գրապահոցում կան հատուկ սարքավորումներ, որոնց միջոցով պահպանվում է միապաղաղ կլիմա: Տարվա բոլոր եղանակներին սրահներում պահպանվում է 18—22 աստիճան ջերմություն և անհրաժեշտ խոնավություն: Օդափոխությունը կատարվում է ջրի օգնությամբ: Երբ ջերմաստիճանը խիստ փոփոխվում է, սարքերը ավտոմատ կերպով ազդանշան են տալիս:

Այս ամենը հնարավորություն է տալիս մագաղաթներն ու գրքերը պահպանել արտաքին միջավայրի ներգործությունից:

Դանիել Վարուժանի «Նամականի»-ն.—«Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց հայ տաղանդավոր, մեծ բանաստեղծ Դ. Վարուժանի «Նամականի»-ն, որը Հանրապետության կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի «Գրական ժառանգություն» հերթական հրատարակության 4-րդն է:

Ներկա հրատարակությամբ առաջին փորձն է կատարվել հրապարակ հանելու բանաստեղծի գրած նամակների այն մասը, որոնց բնագրերը կամ սնագիր պատճենները հասել են գրականության և արվեստի թանգարան տարբեր ուղիներով, սակայն հիմնականը (անտիպներ) հեղինակի տիկնոջ՝ Արաքսի Վարուժան—Աբիկյանի և ժառանգներ տիկին Վերոն Վարուժան—Սաֆրապյանից և Արմեն ու Հայկակ Վարուժաններից, որոնք ներկայումս բնակվում են ԱՄՆ-ում:

«Նամականի»-ի մեջ ամփոփված են նաև հայ պարբերական մամուլում ցրված և 1955 թվականին Կահիրեում Դ. Ճիլմեճյանի «Դանիել Վարուժան» խորագրով գրքում լույս տեսածները:

Հատորում չմտնեղված Դ. Վարուժանի 162 նամակների կեսից ավելին հրապարակվում է առաջին անգամ, իսկ ստացած 225 նամակներից տեղ են գտել միայն 66-ը:

Հատորը կազմել, ծանոթագրել և անձնանունների բառարանը պատրաստել է թանգարանի ավագ գիտական աշխատակցուհի Գոհար Ակնավուրյանը, խմբագրել և առաջաբանը գրել է բանասիրական գիտությունների թեկնածու Գևորգ Մադոյանը:

Այս հատորի հրատարակության առնչությամբ, գրականության և արվեստի թանգարանի դիրեկցիան, օգտվելով առիթից, դիմում է սփյուռքահայ բոլոր կազմակերպություններին, հայ մշակույթի ակնիվ և անձնվեր բարեկամներին, որպեսզի թանգարանի հասցեով (Երևան, Սպանդարյան № 1) ուղարկվեին այն բոլոր ձեռագրերը, նամակները, լուսանկարները, որոնք կհարստացնեն և կամբողջացնեն թանգարանում կազմակերպված բանաստեղծի արխիվը, որով և մեծապես նպաստած կլինեն Դ. Վարուժանի հիշատակի հավերժացմանը:

«Դինամո» սպորտընկերության նոր դահլիճը.—Երևանում, ռեսպուբլիկական ստադիոնի կողքին, շահագործման հանձնվեց մի հոյակապ շինություն՝ «Դինամո» կամավոր սպորտընկերության նորադասույց դահլիճը: Այն աչքի է ընկնում ճարտարապետական ոչ բարդ, բայց հիանալի լուծումով: Ճարտարապետներ Ն. Ալահվերդյանը և Կ. Հակոբյանը մտածել են բոլոր հարմարությունների մասին:

Հիմնական մեծ դահլիճը նախատեսված է ուսումնամարզական պարապմունքների, ինչպես նաև բասկետբոլի, թենիսի, մարմնամարզության և սպորտային այլ ձևերի մրցումներ անցկացնելու համար:

Ահա և փոքր դահլիճը, որտեղ կմարզվեն բռնցքամարտիկները, ըմբիշները, սուսերամարտիկները, ծանրորդները: Սպորտային բազան ունի առանձնասենյակներ տեսուչների, բժիշկների համար, ինչպես նաև ցնցուղ-հանդերձարաններ և հանգստի սենյակներ:

Դահլիճն ունի հանդիսականների համար նախատեսված մշտական 1 000 տեղ, իսկ հիմնական դահլիճի օգտագործման դեպքում հնարավոր է այն գրեթե կրկնապատկել, հասցնելով 3 700-ի:

Այստեղ կանցկացվեն նաև համերգներ, շախմատի տուրնիրներ, սպորտային այլ միջոցառումներ:

Հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-ամյակին.—Նոյեմբերի 29-ի երեկոյան, Երևանում, «Դինամո» կամավոր սպորտային ընկերության նորակառույց փառահեղ դահլիճում, շուրջ 4 000 հոգու ներկայությամբ, տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-րդ տարեդարձին:

Սովետական Հայաստանի 45 տարվա նվաճումների և առաջիկա խնդիրների մասին բովանդակալից և գեղեցիկ զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Ա. Քոչինյանը: Նա ներկայացրեց հանրապետության նվաճումները արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, մշակույթի, գիտության և արվեստի բնագավառներում, մատնանշեց այն կարևոր խնդիրները, որոնք կանգնած են հայրենի կառավարության առաջ առաջիկա հնգամյակում:

Իր զեկուցման վերջավորության Ա. Քոչինյանն ասաց.

«Այս տարի մեր ամբողջ ժողովուրդը, թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս, լայնորեն նշեց 50 տարի առաջ զոհված իր անմեղ զավակների հիշատակը: Զայրույթով դատապարտելով սուլթանական Թուրքիայի կառավարող շրջանների հրեշավոր գործողությունները, մենք հպարտությամբ նշում ենք, որ բռնակալների ոճրագործություններն իրենց նպատակին չհասան: Հայ ժողովուրդը հարատևեց, փյունիկի պես վերածնվեց մոխիրներից, արիացավ, դարձավ իր բախտի տերը և այսօր վերստին ընթանում է դեպի կոմունիստական հասարակարգի շողշողուն գագաթները:

Հանդիսավոր նիստից հետո տրվեց մեծ համերգ:

Հայ նկարիչների ու քանդակագործների տարեկան ցուցահանդեսը.—Երևանի նկարիչների տանը բացվել է հայ կերպարվեստի տարեկան ցուցահանդես: Նման ցուցահանդեսներ կազմակերպվում են ամեն տարի աշնանը, նոյեմբերի վերջերին:

Այս տարվա ցուցահանդեսը ավելի մեծ է և հարուստ: Ներկայացված են շուրջ 70 նկարիչների, քանդակագործների, խեցեգործների մի քանի հարյուր գործեր: Զգալի տեղ է հատկացված երիտասարդ, շնորհալի արվեստագետների գործերին:

Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն առաջ բերեց մայրաքաղաքի արվեստասեր հասարակության շրջաններում: Ավելի քան մեկ ամսվա ընթացքում այն այցելեցին տասնյակ հազարավոր երևանցիներ:

Թանգարան Գառնիում.—Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի որոշմամբ, Գառնիում կառուցվելու է թանգարանի շենք, ուր ցուցադրվելու են պեղումների ժամանակ հայտնաբերված հնագիտական առարկաները:

Շենքը կառուցվելու է հեթանոսական տաճարից ոչ հեռու, Գառնի գետի անդնդախոր կիրճի եզրին, հայկական տուֆ և բազալտ քարերից:

Թանգարանը կունենա հատուկ սրահ, ուր այցելուները կկարողանան դիտել գիտական-պատմական ֆիլմեր Հայաստանի պատմական հուշարձանների վերաբերյալ:

Երաժշտական կյանքը Երևանում.—Խիստ հետաքրքրական և լեցուն անցավ Երևանի երաժշտական կյանքը ընթացիկ տարում: Մեր երաժշտասեր հասարակությունը բուռն հետաքրքրությամբ հետևեց և իր մասնակցությունը բերեց այդ ուղղությամբ կատարված միջոցառումներին:

Երևանյան գարունն սկսվեց ռուսական երաժշտության տասնօրյակով, որին մասնակցեցին Մոսկվա-ի և Լենինգրադի լավագույն ուժերը: Տասնօրյակին անմիջապես հաջորդեց «Անդրկովկասյան երաժշտական գարուն»-ը, մասնակցությամբ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի երաժշտական ուժերի: Ապա երևանցիները ըմբոշխնեցին «Բրիտանական երաժշտական օրեր»-ը և խուռներամ բազմությամբ ներկա եղան երկրորդ փառատոնին:

Գարնան, ամռան և աշնան ամիսներին, Երևանում հյուրախաղերով հանդես եկան օպերային և էստրադային երաժշտության մի ամբողջ շարք կատարողներ, որոնք հրավիրված էին ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Անգլիայից, Լիբանանից, Բուլղարիայից, Հունգարիայից, ինչպես նաև Մոսկվայից, Լենինգրադից, Ելստոնիայից, Թբիլիսիից:

Բեղուն երաժշտական տարին եզրափակվեց այսպես կոչված «Երևանյան երաժշտական օրեր»-ով: Այս եզրափակիչին, հրավիրյալների հետ միասին, իրենց կատարողական արվեստը ցուցադրեցին նաև Հանրապետության լավագույն երաժշտական խմբերն ու մենակատարները:

Հայաստանի առաջին պետական մրցանակակիրները.—Հայաստանի Մինիստրների սովետին առընթեր ստեղծված է Գրականության և արվեստի պետական մրցանակների մշտական հանձնաժողով: Քննարկելով ներկայացված մի շարք աշխատանքներ, հանձնաժողովը որոշում է ընդունել 1965 թվականի պետական մրցանակներ շնորհելու մասին:

Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության պետական մրցանակներ են շնորհվել 1963—1964 թվականներին ստեղծված հետևյալ առավել աչքի ընկնող ստեղծագործություններին.

Գրող Հրաչյա Քոչարին (հետմահու)՝ «Նահապետ» վիպակի համար:

Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանին՝ «Թավջութակի և նվագախմբի սոնատինա» աշխատության համար:

Կոմիտասի անվան կվարտետին՝ համերգային նոր ծրագրի համար, որի մեջ մտնում են հայ և սովետական ժամանակակից ու դասական, ինչպես նաև արևմտաեվրոպական դասական կոմպոզիտորների մի շարք ստեղծագործությունները:

Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանին՝ 4 նոր կտավների համար:

Ժողովրդական դերասանուհի Գոհար Գասպարյանին՝ Ռոնիգետտիի «Լուչիա դի Լամերմուր» օպերայի մեջ հանանուն դերի կատարման, ինչպես նաև Շեքսպիրի ստեղծագործությունների հիման վրա գրված երաժշտական կտորներից կազմված համերգային ծրագրի համար:

Հանձնաժողովի տված որոշումը հաստատված է Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի կողմից:

Միքայել Նալբանդյանի արձանի բացումը.—Սովետական Հայաստանի 45-րդ տարեդարձի օրը, նոյեմբերի 29-ին, Երևանում, տեղի ունեցավ հայ ականավոր քանանդակագործ և հրապարակագիր Միքայել Նալբանդյանի արձանի բացումը հանդիսավոր իրադրության մեջ: Հանդեսը բացեց Երևանի քաղաքային սովետի նախագահ Գ. Հասրաթյանը: Ելույթ ունեցողները դրվատեցին Մ. Նալբանդյանի գրական-հասարակական գործունեությունը հայ ժողովրդի լուսավորության և առաջադիմության ասպարեզում:

Միքայել Նալբանդյանի արձանը ձուլված է բրոնզից, ամբողջ հասակով: Պատվանդանը ցածր է, ողորկ, պատրաստված սև, փայլուն գրանիտից: Արձանի հեղինակն է քանդակագործ Նիկոդոս Նիկոդոսյանը: Պատվանդանը պատրաստված է ճարտարապետ Գիմ Թորոսյանի նախագծով: Արձանը կանգնեցված է Նալբանդյան և Խանջյան փողոցների հատման վետում, պուրակի եզրին:

Գերմաներեն—հայերեն բառարան.—«Լույս» հրատարակչությունը, որն զբաղվում է ուսումնա-մանկավարժական գրականության հրատարակությամբ, լույս է ընծայել գերմաներեն—հայերեն դպրոցական բառարան: Բառարանը, որն ընդգրկում է 8 000 առավել գործածական բառեր, կազմել են Երևանի տուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի դասախոսներ Գ. Անդրեասյանը և Ա. Տիրացյանը:

Ուսանողների և դպրոցականների համար նման բառարաններ են հրատարակվելու նաև այլ լեզուներից:

Հարկ է նշել, որ առաջին գերմաներեն—հայերեն բառարանը լույս է տեսել 1889 թվականին Վիեննայում: Այն կազմել էր Մխիթարյան ուխտի միաբան Հ. Ավետիք Կոյլավյանը: Երկրորդ այդպիսի բառարան լույս է տեսել 1913 թվականին Թիֆլիսում, որը կազմել ու հրատարակել է Ե. Ֆրանգյանը., իսկ երրորդը՝ 1952 թվականին Մյունխենում, դոկտ. Տիրայր Ֆրունցյանի կողմից:

Հետաքրքրական թվեր Հայաստանի արդյունաբերության զարգացման մասին.—Վերջին 7 տարվա (1959—1965) ընթացքում Հայաստանում կառուցվել և շահագործման են հանձնվել շուրջ 300 գործարաններ, ֆաբրիկաներ, էլեկտրակայաններ և այլ արտադրական ձեռնարկություններ: Այդ տարիներին ստեղծված արդյունաբերությունը իր ծավալով հավասար է սովետական կարգերի հաստատման նախորդ 38 տարիների ընթացքում ստեղծված արդյունաբերության ծավալին: Արդյունաբերության զարգացման համար կատարված հատկացումների 56 տոկոսը արված է վերջին 7 տարվա ընթացքում:

Միայն 1964 թվականին ժողովրդական տնտեսության զարգացման համար կատարված հատկացումները մեկ երրորդով ավելի են, քան նախապատերազմյան 20 տարիների հատկացումները միասին վերցրած:

Առաջիկա 5 տարիներին արդյունաբերության զարգացման համար կարվեն նոր խոշոր հատկացումներ: Ի հաշիվ այդ հատկացումների, կառուցվելու են Հրազդանի լեռնաքիմիական գործարանը, պլաստիկ իրերի գործարանը Մասիս կայարանում, պղնձաձուլական նոր գործարան Ղափանում, պոլիպատածուլական գործարան և այլ ձեռնարկություններ:



ՀԱՆԳՈՒՍՏ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

(1877—1965)

Նոյեմբերին Մոսկվայում, 88 տարեկան հասակում, վախճանվեց արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քահանա Տեր-Հարությունյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1877 թվականին Ղափանի շրջանի Արցևանիկ գյուղում, քահանայի ընտանիքում։ Սովորել է Շուշիի թեմական դպրոցում և ապա, 1892 թվականին, ընդունվել Սևանի վանական դպրոցը։ Երկար տարիներ պաշտոնավարել է հայ եկեղեցիներում որպես տիրացու և 1920 թվականին քահանա է ձեռնադրվել Պիատիգորսկ քաղաքի Տ. Բաղրատ արքեպիսկոպոս Վարդազարյանից։ Մինչև 1930 թվականը պաշտոնավարում է Պիատիգորսկում և ապա տեղափոխվում Մոսկվա, ուր քահանայագործում է մինչև իր ծերությունը։

Հանգուցյալը իր երկարամյա և արդյունավետ պաշտոնավարության համար պարգևատրվել է քահանայական լանջախաչով և ծաղկյա փիլոնով Գևորգ Զ Կաթողիկոսի կողմից։

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետից ստացել է ավագ քահանայություն։

Հայրենիքին մատուցած իր ծառայությունների համար արժանացել է «Մոսկվայի պաշտպանության համար» և մի շարք այլ մեդալների։

Հանգուցյալը բարի, ազնիվ, իր կոչման և աշխատանքին նվիրված, բոլորի կողմից սիրված և հարգված հոգևորական էր։

Հանգուցյալի վերջին օծումն ու թաղումը կատարվել է Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցում, ձեռամբ Ռուսաստանի և

Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոսի, որն իր դամբանականի մեջ վեր է հանել հանգուցյալի կյանքի և գործունեության ուսանելի կողմերը։

Հանգի՛ստ նրա ոսկորներին։

ՑԱՆԿ

«Էջմիածին» ամսագրում 1965 թվականի ընթացքում տպագրված նյութերի

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ խոսքը հայ ժողովրդի հետ զուգավոր Անդրանիկի գերեզմանի վրա ծննդյան հարյուրամյակի առթիվ. Բ—Գ—Դ 27:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ազգիյան մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ. Ա (Հերփակ):

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը եկեղեցիների միության հարցի վերաբերյալ. Ե—Զ—է 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ համակը Ջենտրբերիի Արքեպիսկոպոս և համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ գոկտ. Մարլ Ռեմզիին Անգլիկան եկեղեցում ազգիյան Եղեռնի հիսնամյակը նշելու առթիվ. Ե—Զ—է 24:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհավորական հեռագիրը Եթովպիայի Կայսր Նորին Վեհափառություն Հայլե Սելասիեի գահակալության երեսուներեքամյակի առթիվ և ստացված պատասխանը. ԺԱ—ԺԲ 18:

Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Պայրազույն Պատրիարք և Կարողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը, Ա 3:

Ամանորի և Քրիստի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Պայրազույն Պատրիարք և Կարողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և եվրոպական Արքունիքների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը ու գրությունները, Ա 17:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ազգիյան եղեռնի հիսնամյակի առթիվ հույր եկեղեցիների հոգևոր պետերին ուղղած 21 սեպտեմբեր 1964 թվակիր նամակի պատասխանները, Ա 23:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ կրոնական պետերից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները և տրված պատասխանները, ԺԱ—ԺԲ 7:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահի շնորհավորական հեռագիրը և տրված պատասխանը. ԺԱ—ԺԲ 6:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ հասարակական և մասավորական գործիչներից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները, ԺԱ—ԺԲ 12:

Զեկույց Գերագույն Հոգևոր Խորհրդի Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ, ԺԱ—ԺԲ 21:

Հաղորդագրություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ադդիս-Աբեբա ուղևորության մասին, Ա 25:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման հարյուներեքամյակի կապակցությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը, ԺԱ—ԺԲ 3:

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Ամենայն Հայոց Կարողիկոս Վազգեն Ա-ին Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գերագույն սովետի պատվոգրով պարգևատրելու մասին, ԺԱ—ԺԲ 5:

Քրիստի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Պայրազույն Պատրիարք և Կարողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և եվրոպական Արքունիքների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ե—Զ—է 20:

Քրիստի հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Պայրազույն Պատրիարք և Կարողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և հույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված հեռագրերն ու գրությունները, Ա 7:

Քրիստի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Պայրազույն Պատրիարք և Կարողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և հույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ե—Զ—է 11:

Բ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

«Բա՞ց մեզ, Տէ՛ր, գղուռն ողորմութեան», Ա 3:

Նդեռն ու վերածնունդ, Բ—Գ—Դ 3:

«Հաւատամք և ի մի միայն, յԸնդհանրական և յԱռաքելական Սուրբ Եկեղեցի», Ե—Զ—է 7:

Պատմական ուղևորություն, Ը—Թ 3:

Քառասունհինգ տարի, Ժ 3:

Տասը տարի Լուսավորչի Գահի վրա, ԺԱ—ԺԲ 19:

Գ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի հինգերորդ ուղևորությունը արտասահման, Ե—Զ—է 25:

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի վեցերորդ ուղևորությունը արտասահման, Ը—Թ 6:

Դ. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՑԵՄԱՐԱՆՈՒՄ

Ամանորը Հոգևոր ճեմարանում, Ա 29:

1963 թվականի նոյեմբերի 31-ից նոյեմբերի 8-ը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձի հանդիսությունների մասնակցող հրավիրյալների և հյուրերի ցուցակը, ԺԱ—ԺԲ 38:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասունհինգամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում, ԺԱ—ԺԲ 91:

Հայրապետական սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում Փրկչի հրաշափառ Սենդյան տոնի առթիվ, Ա 20:

Հանդիսություններ Մայր Աթոռում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ, ԺԱ—ԺԲ 39:

Մայր Տաճարի երգեցիկ խմբի տասնհինգամյակը, ԺԱ—ԺԲ 92:

Մասնավոր վարդապետական գավազանի իշխանության ավշությունն, Ե—Զ—Է 118:

Մեծ եղեռնի նահատակների անյուններ Դեր-Զորում, ԺԱ—ԺԲ 80:

Մեծ ուխտավորություն Մայր Աթոռում, Ժ 8:

Նորին բեմերի խորհրդակցական ժողով Մայր Աթոռում, Ե—Զ—Է 120:

Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանի վերաբացումը, Ժ 8:

Սրբոց Թարգմանչաց տոնը Մայր Աթոռում, Ժ 10:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ (նուիրեր Մայր Աթոռից)—Ա 27, Ե—Զ—Է 197, Ը—Թ 72, Ժ 15, ԺԱ—ԺԲ 89:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ ԳՈՀԱՐ—Անհայտ էջեր հայ հանճարակների գրական ժառանգությունից, Բ—Գ—Դ 48:

ԹԱՀՄԻԶՅԱՆ ՆԻԿՈՂՈՍ—Հուշամատյանների հետքերով, Բ—Գ—Դ 113, Ե—Զ—Է 145:

ԿՈՍՏԱՆՅԱՆ Ա.—Ռուբեն Զարյան, Ո—Գ—Դ 136:

ՀԱԿՈԲՅԱՆ Գ.—Գրիգոր Տղա, Ա 30, Ե—Զ—Է 177, Ը—Թ 80, Ժ 26:

ՀԱՅՐՅԱՆ Ա.—Նոր Ղևոնդյանք, Բ—Գ—Դ 58:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ.—Վանի ապրիլյան հերոսամարտը, Բ—Գ—Դ 140, Ե—Զ—Է 156:

ՀՅՈՒՍՅԱՆ ՄԻՆԱՍ—Ցմռացվող անուններ, Բ, Գ, Դ 71:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԵՐԻ—Հայկական հին հետքեր Հոլանդիայում և Բելգիայում, Ը—Թ 106:

ՄԱԴՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ—Հայ գրականության կորուստները, Բ—Գ—Դ 76:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Ն. Գ.—Արխիվային նոր նյութեր Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի վիճակի մասին, Բ—Գ—Դ 158, Ե—Զ—Է 182:

ՄՈՄՋՅԱՆ Ե.—Կիրովականի գավառագիտական թանգարանը, Ա 56:

ՊԱՊՈՒԵՑՅԱՆ Ս.—Քաղաքաշինարարությունը Միջնադարյան Սյունիքում, Ժ 53:

ՍԱՖՐԱՍՅԱՆ Ա. Ե.— Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների վիճակաորության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակները ու քարտիրները, Ա 40, Բ—Գ—Դ 174, Ժ 43:

ՍԻՐՈՒՆԻ Հ. Ճ.—Եղեռն մը և իր պատմությունը, Բ—Գ—Դ 6, Ե—Զ—Է 124:—Կոմիտասին հետ, Ա 35, Ե—Զ—Է 166, Ը—Թ 74, Ժ 17:—Գրոֆ.-դոկտ. Աբամ Մ. Ֆրենկյան, Ժ 37:—Վեցերորդ պատյար, Ը—Թ 50:

ՏԱՎՈՒՇԵՑԻ Բ.—Նահատակ հայ մտավորականների ծածկանունները, Ժ 31:

ՓԱՇԱՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ—Վեր, որ ապրում է ժողովրդի սրտում, Բ—Գ—Դ 149:

ՔՅՈՒՐՏՅԱՆ Հ.—Անհիպ տպեր Կիրակոս վարդապետ երզնկացիի, Ը—Թ 91:

ՋՈՂԱՆՅՅԱՆ ՍՈՒՐԵՆ—Հայկական կտավածները և մեր ձեռագրական կորուստները, Բ—Գ—Դ 96, Ե—Զ—Է 138:—Տրանսիլվանիայի հայերի պայքարը ազգային ինքնուրույնության պահպանման համար, Ա 48:

Զ. ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ—Խոսք աղոթքի և ուխտի, Ա (նիստիր):

ԳԱԼՅԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ—Հայկազունի տարի տրանց, Բ—Գ—Դ 125:

ԹԱՀՄԻԶՅԱՆ ՆԻԿՈՂՈՍ—Հուշարձան, Բ—Գ—Դ 188:

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ—Խոներ մեծ եղեռնի մասին, Բ—Գ—Դ 28:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ Ռ.—Մեծ եղեռնի հուշարձանի իմ մտահղացումը, ԺԱ—ԺԲ 82:

ԿՈՐԻԿՅԱՆ ԱՐՄԱՆ—Փառք պարտվածներին, Բ—Գ—Դ 127:

ՀԱՄԱՍՏԵՂ—«Հաստատ ես կեցուցցեն զքեզ», Բ—Գ—Դ 40:

ՀԱՅԿԱԶ ԱՐԱՄ—Մայրս փրկեց զիս նիրատեն, Բ—Գ—Դ 122:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.—«Գրա, Տէր» (հոգեհանգստյան շարական), Ե—Զ—Է 114:

ՄԵԼԻՔ-ՕՇԱՆՋԱՆՅԱՆ Կ. (ԱԿԱԴԵՄԻԿՈՍ)—Թերթիկներ իմ հուշամատյանից, Բ—Գ—Դ 96:

ՄՈՐԳԵՆԹԱՈՒ ՀԵՆՐԻ—Պատմության ամենասոսկալի եղելությունները, Բ—Գ—Դ 188:

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՐԻԵՏՏԱ, Սրտի ձայն, Բ—Գ—Դ 32:

ՊԱՅՐԻԿ ԱՌԱՔԵԼ—Գուժկանը, Բ—Գ—Դ 139:

ՌՈՋԵՆ Մ. (ԴՈԿՏ.)—Թափված արյան ձայնը, Ե—Զ—Է 122:

ՍԱՐՅԱՆ Մ.—Մտորումներ ապրիլ 24-ի առիթով. Բ—Գ—Դ 30:
ՍԵՐԵՆՅՈՒԼՅԱՆ ՀՈՒՓՍԻՄԵ—Հոչեր Դրիգոր Զոհրապի մասին. Բ—Դ—Դ 130:
ՍՏՈՒՐՄԵԼՅԱՆ ԼԵՎՈՆ-ԶԱՎԷՆ—Տասը խորհրդածություններ. Բ—Գ—Դ 34:
ՍՔԵՅԵՆ ԼՈՒԻՍՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ—Մեր մեծ Նզբայրները. Բ—Գ—Դ 33:

Է. ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻԵՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՎՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ—Լուսանոցի Տ. Գարեգին պատրիարք Տրապիզոնցու ճիշտակին. Ը—Թ 100:
Գերաշնորհ Տ. Զավեն եպիսկոպոս Զինչինյան. ԺԱ—ԺԲ 88:
Գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյան. ԺԱ—ԺԲ 86:
Գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյան. ԺԱ—ԺԲ 86:
Գերաշնորհ Տ. Շահե եպիսկոպոս Ասենյան. ԺԱ—ԺԲ 87:

Ը. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԳՅՈՒՅՑԱՆ Գ.—Մեր ազգային վերածնունդը. Բ—Գ—Դ 85:
Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի պատվոգրի պաշտոնական հանձնումը Վենափառ Հայրապետին. ԺԱ—ԺԲ 10:
«Հայրենիքի ձայն». Ը—Թ 113:
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ. Ը—Թ 115, Ժ 49, ԺԱ—ԺԲ 93:

Թ. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

«Էջմիածին» ամսագիրը. Ը—Թ 104:

Ժ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԿԱՏՈՒՄ

Խաղաղության, ազգային անկախության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողով Հելսինկիում. Ը—Թ 66:

ԺԱ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ—Ի գահակալության տասնամյակի Տեառն Տեառն Վազգենի Առաջնոր Հայրապետին Ամենայն Հայոց. ԺԱ—ԺԲ 84:
ԳՈՒԼԱՆՅԱՆ ԵՎԱՐԴ. Կարմիր զինները. Բ—Դ—Դ 110:
ՑԱՎՈՐՈՎ Ռ.—Հայեր. Բ—Դ—Դ 108:
ՓԱՆԻԿՅԱՆ ՕՆՆԻ. Հայը. Բ—Դ—Դ 100:

ԺԲ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ արժանապատիվ Տ. Դրիգոր Բահանա Սարգսյանի. Ը—Թ 118:
Հանգիստ արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ Բահանա Տեր-Հարությունյանի. ԺԱ—ԺԲ 96:
Հանգիստ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի. Ը—Թ 102:
Հուշ ա Քոչար, Ն—Զ—Ի 201:

ԺԳ. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Հ.—Պրոֆ.-դոկտ. Ա. Առաքելյան. «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն». Ը—Թ 109:
Ծուցակ Մայր Արոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի. Ը—Թ 119, Ժ 59:

[illegible]

[1p]